

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ

ԱՐԿԱԴԻ ՍԱՐԿԱՎԱԳ ԹԱՆԴԻԼՅԱՆ

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԷԹԻԿԱԿԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ**

ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՆԱԶԱՐՅԱՆ  
(Կենսաբանական գիտությունների դոկտոր)

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ – 2002

## ՆԱԽԱԲԱՆ

Որպես ավարտաճառ ընտրված՝ «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԼԹԻԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ» թեման այժմեական ու մեր օրերում շատ շոշափելի դարձած խնդիրների մի վերլուծություն է, որտեղ առավելաբար կենտրոնացել ենք ու մեր քննարկման հիմնական նյութ դարձրել «ԿԼՈՆԱՎՈՐՄԱՆ»՝ արհեստական ճանապարհով, գենետիկ ինֆորմացիայի վերձանմամբ, սոմատիկ բջջից մարդ ստանալու երևույթը, որ արդի հասարակությանը հուզող հրատապ հարցերից է, և որի մասին իրենց հստակ դիրքորոշումն ու տեսակետն ունեն թե՛ ընդհանրական եկեղեցու մաս կազմող եկեղեցիներ և թե՛ զարգացած բազմաթիվ պետությունների ղեկավար մարմինները<sup>1</sup>: «Կլոնավորման» հարցը քննարկված է բարոյաբանության ու հոգևոր ընկալողունակության լույսի ներքո: Քննարկման ընթացքում հիմնականում առաջնորդվել ենք անաչառ ճանաչողության սկզբունքով, ապա գիտության ձեռքբերումներին ու դրանց մասին ստացված տվյալներին փորձել ենք մոտենալ բարոյաբանության տեսակետից՝ ցույց տալով թե՛ դրական և թե՛ բացասական կողմերը:

Աշխատությունը բաղկացած է հինգ հիմնական գլուխներից, Ամփոփիչ եզրակացությունից և Հավելվածից՝

ա) ԳԼՈՒԽ Ա. «Գիտության և կրոնի փոխհարաբերությունը», որտեղ քննարկվում է գիտության, կրոնի ու բարոյագիտության փոխհարաբերությունները և կատարվում է վերլուծություն դրանց հակադրության ու համադրության տված արդյունքների մասին:

բ) ԳԼՈՒԽ Բ. «Կենսաէթիկայի էությունն ու խնդիրները», որտեղ փորձել ենք ներկայացնել մարդկային կյանքին առնչվող մի խումբ կենսաբանական խնդիրներ ու նրանց բուն էությունը:

գ) ԳԼՈՒԽ Գ. «Կլոնավորման կենսաբանական նշանակությունը և դերը ժամանակակից կենսաբանական և բժշկական խնդիրների

---

<sup>1</sup> Տես հավելված՝ էջ 91:

լուծման համար», որտեղ հանրամատչելի կերպով լուսաբանել ենք «Գենային ինժինեռիայի» ոլորտում կատարված ձեռքբերումների կիրառական նշանակությունը և հնարավոր անցանկալի բարոյաէթիկական խնդիրները:

դ) ԳԼՈՒԽ Դ. **«Չոգու գոյության մասին գիտաստվածաբանական վկայություն»**, որտեղ գիտական ուսումնասիրությունների, Սուրբգրային մեջբերումների և հայրաբանական վկայությունների վրա հենվելով՝ փորձել ենք կենսաբանական մարդուն ներկայացնել ոչ միայն մարմին այլ նաև անմահ հոգի ունեցող՝ գեներտիկորեն անկրկնելի արարչագործություն: Այս գլխում աշխատել ենք շատ չծավալվել՝ զերծ մնալու համար խիստ աստվածաբանական հարցերում սխալվելու հնարավորությունից:

ե) ԳԼՈՒԽ Ե. **«Կլոնավորման բարոյաէթիկական կրոնական վերլուծություն»**, նախորդ գլուխների հիման վրա ձևավորված պատկերացման համաձայն, այս գլխում փորձել ենք տալ խնդրի բարոյաբանական վերլուծությունը, որը, ըստ ընդհանուր եզրակացության, կարելի է կոչել «հասարակական բարոյական նորմերի բեկում»:

զ) **«Ամփոփիչ եզրակացություն»** բաժնում, որպես կատարված քննարկումների արդյունք ամփոփված է նյութը:

է) **«Չավելված»** բաժնում դրել ենք այն փաստագրական տվյալները, որնց մեջ հստակորեն արտահայտված է եկեղեցիների ու տարբեր երկրների պետական մարմինների վերաբերմունքը մարդու կլոնավորման հարցի նկատմամբ:

Աշխատության վերջին էջերում տեղ են գտել նաև օգտագործված տերմինների այբբենական բացատրական բառարանն ու օգտագործված գրականության ցանկը:

Մեր կարծիքով տվյալ աշխատությամբ կրոնական համոզմունքի վրա հենվելով հարցի բարոյաէթիկական կողմի քննարկումը՝ հնարավոր կդարձնի հաստատել մարդու կլոնավորման էթիկակապես անընդունելիությունը և բարոյական պատճեչ դնել՝ ճիշտ կողմնորոշում ստեղծելով հասարակության շրջանակներում:

Ռուս Ուղղափառ Եկեղեցու և Հայ Առաքելական Եկեղեցու համաժողովում այս հարցի մասին տեսակետ է հայտնել Կենսաբանական գիտությունների դոկտոր՝ Կ. Բ. Նազարյանը: Պարոն Նազարյանն իր զեկույցում նշել է. «Ժամանակակից աշխարհում Աստծո վեհագույն արարչագործության հանդեպ մարդկային մտքի հետաքրքրասիրությունն անսահման է: Եվ թվացյալ տրամաբանական սահմանները գիտական ճանաչողությամբ խախտող մարդկային ընկալողունակության հորիզոնների ընդլայնումը երբեմն հանգեցնում է Աստվածային մտահղացման կարծես պարադոքսալ, բայց թերևս նաև օրինաչափորեն գիտակցմանը: Օրինակ դեռևս 20 տարի առաջ կենսաբանության մեջ տիրապետող էր կյանքի ինքնասերման գաղափարը, որը դժվար էր համաձայնեցնել այն բանի հետ, որ մարդն ու աշխարհն Աստծո ստեղծագործությունն են: Բայց Աստված մարդուն էր պատկերով ու նմանությամբ է ստեղծել և պրպտող միտք է շնորհել: Ուստի տեսական ֆիզիկայի ու տիեզերագիտական ուսումնասիրությունների զարգացումը հանգեցրեց այսպես կոչված «Մեծ պայթյունի» հասկացողության ձևավորմանը, որը տիեզերքի առաջացման սկզբնապահ է ենթադրում, իսկ համաձայն ժամանակակից կենսաբանական տվյալների կյանքը ներմուծվել է երկիր մոլորակ: Այսինքն՝ հակառակ ամեն տեսակ արգելքների, գիտությունը զարգանում է, և նրա արդյունքները, շատ հաճախ ի վերջո հրաշալի կերպով համապատասխանության են գալիս աստվածաբանական հայացքների հետ:

Իսկ ինչպիսի՞ հետևանքներ կունենան նորագույն (կլոնավորման ասպարեզում կատարվող) ուսումնասիրություններն աշխարհի և մարդկության համար ընդհանրապես: Չէ՞ որ ակնհայտ է այն հանգամանքը, որ նույնիսկ հաջողության դեպքում դա լինելու է «բժշկություն հարուստների համար»: Արդյո՞ք սա կտրուկ բևեռացում չի առաջացնի հասարակության մեջ: Կարծում ենք այս խնդիրներն ամենայն լրջությամբ պետք է քննարկվեն գիտնականների, եկեղեցական գործիչների, քաղաքականագետների կողմից»<sup>2</sup>:

---

<sup>2</sup> Խ. ը. ԾՈՋՈՐ՝Վ «Կ վպՍՏՑՏՐՕւ ֆՑՈփպրՍՈւ տՐՏոսպՎՈւ, րԶ՚ջՈվվՕւ ր ֆՍՏսՏչՌպռ Ռ ՎպՊՈՍՏոՌՏսՏչՌփպրՍՈՎՈՒ ՌրոսպՊՏՁՈվՈ՛ՎՈՒ» Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Ռուս Ուղղափառ Եկեղեցու միջև կայացած երկխոսության ընթացքում կարդացված զեկույցումից, էջմիածին 05.03.2001թ.:

## ԳԼՈՒԽ Ա.

### Գիտության և կրոնի փոխհարաբերությունը

Կարելի է ասել, որ գիտությունը մարդուն ուղեկցում է իր ստեղծման օրից ի վեր և անտիկ շրջանում արդեն մարդը բավականին մեծ գիտական նվաճումներ էր արձանագրել, սակայն մինչև XVIII դարը ըստ էության բնագիտական գիտելիքների համակարգ գոյություն չի ունեցել, այլ բնագիտությունը հանդես է եկել փիլիսոփայական գիտելիքների հետ համատեղ: Ինչ վերաբերում է աստվածաբանությանը, ապա այն միշտ էլ գերազանցապես հիմնվել է Սուրբ Գրքի ճշմարտությունների և Եկեղեցու հայրերի գրվածքների՝ այսինքն՝ կրոնական փորձառության վրա, որ մարդկությանը տրվում է հայտնությամբ և ներհայեցողական ճանապարհով: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ աստվածաբանության հարաբերությունը բնական գիտությունների հետ անխուսափելի է եղել բոլոր ժամանակներում, որովհետև հաճախ կրոնական գործիչները եղել են նաև գիտնականներ: Իհարկե սա հարաբերությունների միակ ձևը չի եղել և շատ հաճախ էլ գիտությունը բախվել է կրոնին՝ փորձելով անվերապահորեն ընդունելի դարձնել բոլոր իր նվաճումները, իսկ կրոնը երբեմն բացարձակապես մերժել է գիտական ձեռքբերումներն առանց խտրականության: Սկսած XVIII դարից, այս երկու համակարգերի փոխհարաբերության խնդիրն ավելի ու ավելի ակնառու դարձավ՝ հատկապես զարգանալով XIX դարի վերջում ու XX դարի սկզբում:

Բնագիտության ընդհանուր համակարգը, սկսել է ձևավորվել դեռևս անտիկ ժամանակներում, սակայն ժամանակակից տեսքով այդ համակարգը ձևավորվել է XVIII դարում, երբ գիտելիքների բավականաչափ պաշար էր կուտակվել տիեզերքի, շրջակա միջավայրի, նյութի կազմության և այլ հարցերի մասին: Այն զարգանում է մինչև մեր օրերը, ուստի բնագիտության կողմից հետազոտվող, քննարկվող հարցերի շրջանակում չի կարող չներառվել նաև աստվածաբանության հետ նրա ունեցած փոխհարաբերությունը: Այդ փոխհարաբերության զարգացման հնարավոր ուղղություններից մեկը բնագիտության և աստվածաբանության հակադրությունն է, երբ բնագիտու-

թյունն իր նվաճումների, իսկ աստվածաբանությունը վարդապետական սկզբունքի հիման վրա փորձում է արժեզրկել կամ հերքել հակադիր բնագավառի ձեռքբերումներն ու անբեկանելի ճշմարտությունները: Մյուս ուղղությունը բնագիտության ներդաշնակ փոխազդեցության մեջ գտնվելն է աստվածաբանության հետ: Այս դեպքում բնագիտությունը ոչ միայն չի ժխտում աստվածաբանական ճշմարտությունները, այլև ճանապարհ է հարթում դեպի այն, երբ մեկնակետ է վերցվում նյութական աշխարհը, բազմաթիվ փորձնական տվյալների հիման վրա արվում են տեսական դատողություններ, և տրամաբանական կառույցներով մարդկային միտքը ուղղվում է դեպի Աստված: Կրոնն էլ իր հերթին հետևելով գիտական առաջընթացին հենվում է նրա վրա և հայտնութենականն ամրագրում նյութական փաստարկներով:

Հիրավի, ինչպես սաղմոսերգուն է ասում. **«Երկինքը պատմում է Աստծո փառքի մասին»** (Սաղմոս 18-2), և որքանով որ ցույց են տալիս մինչ այժմ կատարված ուսումնասիրությունները, գիտական գրեթե բոլոր նվաճումներն իրենց նախօրինակն ու մեկնաբանությունն են գտել Աստվածաշնչում: Այս դեպքում հավատքի շենքը կառուցվում է նաև բնագիտական տվյալների վրա, ստեղծվում է մի այնպիսի կացություն, երբ աշխարհի գիտական պատկերը, գործող օրենքների և օրինաչափությունների համախումբը անկասկած վկայում են գերմտքի, բացարձակ տիեզերական բանական ուժի՝ Աստծո գոյության մասին: Եվ ինչպես Դիդրոն է ասում, իրոք որ. **«Թիթեռնիկի աչքն ու թևը բավական են մի անաստված կործանելու համար»:** Բնագիտության և աստվածաբանության միջև փոխհարաբերությունների ծագման և զարգացման ընթացքում առկա են եղել և հակասությունների և համագործակցության օրինակներ, և կարելի է ասել, դրանք այսօր էլ առկա են, այստեղ պետք է նշել նաև, որ գիտության ոչ թե ձեռքբերումները, այլ չար նպատակներով դրանց կիրառության հնարավորությունն է մշտապես հակասության տեղիք տվել կրոնի հետ նրա ունեցած փոխհարաբերություններում:

Կրոնի և գիտության հակադրության վառ օրինակ կարող է ծառայել Զոռնի Եկեղեցու բռնած դիրքը Կոպեռնիկոսի, այնուհետև Գալիլեի ուսումնասիրությունների նկատմամբ: Իհարկե գիտությունը զարգացում է ապրում բնա-

կանոն ընթացքով՝ ճանաչողության հանդեպ մարդու ունեցած հակումին համապատասխան թե՛ ներքին և թե՛ արտաքին ուղղությամբ, առանց որևէ խոչընդոտ հաշվի առնելու, սա

կայն լինում են դեպքեր, երբ բնական գիտությունները, իրենց զարգացման ընթացքում գլխապտույտ արագություն ձեռք բերելով կորցնում են ամեն տեսակ կառավարելիություն և աննախադեպ ձեռքբերումների չարափառ օգտագործման հնարավորությունն աղետալիության մեծ վտանգ է ստեղծում:

Միջուկային զենքն ստեղծող գիտնականների անմիջական խոստովանության համաձայն, հայտնի չի եղել, թե իրենց կողմից խթանված ատոմային ճեղքման ռեակցիան արդյոք սահմանափակ-տեղային բնույթ է կրում, թե մի անգամ սկիզբ առած ատոմային ճեղքումն ավելի ու ավելի նոր նյութ կարող է ներառել իր մեջ... Նոր Երկիր կղզում<sup>3</sup> կատարված փորձարկումների ժամանակ նախատեսված մի քանի թույլ փոխարեն, տրոտիլի 50 մեգատոն (մլն տ) համազորություն ունեցող (փորձարկվածներից ամենամեծը) ջրածնային ռումբի պայթյունը շարունակվեց ավելի քան քսանհինգ թույլ, որից հետո ապշահար գիտնականները հրաժարվեցին փորձարկումներն ավելի հզոր ռումբերով շարունակելուց, վախենալով, որ պայթյունը կարող է գերազանցել նախատեսվածին աղետալիության աստիճան:

Զարգացող գիտությունների գրեթե բոլոր ձեռքբերումներն էլ ինչ-որ ժամանակ աղետալի են թվացել և ըստ էության հաճախ այդպիսին էլ լինում են, եթե մարդկության կողմից չլինի դրանց հանդեպ դրսևորվող լայնախոհությունն ու դրանք ի բարին ծառայեցնելու ակնհայտ միտումը: Գրեթե բոլոր գիտնականներն էլ, որևէ հայտնագործություն անելուց առաջ, նկատի են ունենում դրանց բերելիք օգուտները, և ցավոք, շատ դեպքերում հաշվի չեն առնվում հնարավոր վնասները:

Ակնհայտ է, որ ներկայումս բնական գիտությունների զարգացման ընթացքը չափազանց արագ է: Եթե նախկինում մի մեծ հայտնագործությունից մինչև մյուսը տասնյակ կամ նույնիսկ հարյուրավոր տարիներ էին անցնում, ապա այժմ դա տևում է ընդամենը մի քանի տարի կամ նույնիսկ ամիսներ:

Գիտական տեղեկատվության ծավալը որոշ հաշվարկներով կրկնապատկվում է ամեն հինգ տարին, այլ գնահատականների համաձայն՝ 10-15 տարին<sup>4</sup> մեկ: Բազմաթիվ հայտնագործություններ բերում են աշխարհի գիտական պատկերի մշտական զարգացմանը և փոփոխությանը: Նոր տեսություններն այնքան արագ են զարգանում, որ նույնիսկ նեղ մասնագետների համար դժվար է լինում հետևել իրենց ճյուղերում կատարվող հայտնագործություններին: Պետք է նշել նաև, որ այսօրվա գիտության սրընթաց զարգացումը պայմանավորված է նաև նրանով, որ գիտության ծագման օրվանից մինչ այժմ գիտության նվիրյալների 80 տոկոսն ապրում է մեր օրերում և միայն 20 տոկոս գիտնականներին ենք պարտական անտիկ ժամանակներից մինչ այժմ եղած գիտական բոլոր տեսակի ձեռքբերումների համար:

Մյուս կողմից, ինչպես արդեն ասացինք, ժամանակակից աստվածաբանությունն ինքը քարացած վիճակում պետք չէ մնա, այլ նրա զարգացման կարևոր առանձնահատկություններից մեկը պետք է լինի բնագիտական տվյալների ազդեցությամբ ինքնահարստացումը, այսինքն՝ գիտության զարգացմանը զուգընթաց պետք է զարգանա նաև աստվածաբանությունը՝ պահպանելով, անշուշտ, ավանդական արմատները և յուրահատուկ կառույցը: Այս ընթացքը պետք չէ հասկանալ իբրև միայն բնագիտական տվյալների ընդհանրացում, այլ այդ տվյալների էության խոր աստվածաբանական բացահայտում:

Այսպիսով, եթե փորձենք ի մի բերել աստվածաբանություն-բնագիտություն փոխհարաբերության մասին տեսակետները, ապա կարող ենք ասել, որ նախընտրելի է թվում դրանց արդյունավետ փոխազդեցության տարբերակը, որը փոխադարձաբար օգտակար և արդյունաշատ կլինի ողջ մարդկության համար, քանզի աստվածաբանությունն ու բնագիտությունը միմյանցից զատելով, մեկուսացնելով, առավել ևս հակադրելով ու հեռացնելով՝ կամա թե ականա ամայացնում ենք այն դաշտը, որտեղ ուսումնասիրություններ կարելի է կատարել աստվածաբանների և բնագետների համատեղ ուժերով: Հիմնա-

---

<sup>3</sup> Գտնվում է ՌԴ հյուսիսում:

<sup>4</sup> [http : // www. BBC. com / Science](http://www.BBC.com/Science) 20.06. 2001. pg. 25.



խնդիրների միայն համատեղ մշակմամբ և լուծմամբ մարդկությունը կկարողանա պատասխանել այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ Աստված-մարդ փոխհարաբերությունը, կյանքի իմաստն ու նպատակը, մարդկային քաղաքակրթության հետագա զարգացման հնարավոր ուղիները և այլն<sup>5</sup>:

1952 թվականին խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Ալբերտ Շվայցերը, մրցանակն ստանալու առիթով իր խոսքում ասել է. «Ստեղծված վիճակին նայելը համարձակություն է... Մարդը վերածվել է գերմարդու... բայց գերմարդկային ուժով օժտված գերմարդը, դեռ գերմարդկային գիտակցության մակարդակին չի բարձրացել: Որքան աճում է նրա հզորությունը, այնքան նա ավելի է աղքատանում... Մեր խիղճը պետք է արթնանա այն գիտակցությամբ, որ որքան մենք ավելի ենք գերմարդու վերածվում, այնքան ավելի ենք անմարդկային դառնում<sup>6</sup>»:

---

<sup>5</sup> Մարդը ազատության նոր զգացողությունն ապրելով՝ դարձել է իր կյանքի տերը. հասարակական կապանքներից ազատ մարդը կարող է (Կամ էլ կարծում էր, թե կարող է) անել այն, ինչ ցանկանում է: Դա իսկապես արդարացի է, բայց միայն բարձր ու միջին խավերի համար, իսկ մնացածները ինդուստրիալիզացման մասնատիպ տեմպերի դեպքում կարող են ընդամենը տոգորվել այն հավատքով, թե այդ նոր ազատությունը վերջին հաշվով կտարածվի հասարակության բոլոր անդամների վրա: Սոցիալիզմն ու կոմունիզմը շուտով շարժումից վերածվեցին նպատակ ունեցող նոր հասարակության կառույցի և նոր մարդու ձևավորման ապարատի, սակայն բոլորի համար իդեալը դարձավ բուրժուական կենսաձևը, իսկ ապագա մարդու կյանքի էտալոնը դարձավ բուրժուական:

Ենթադրվում էր, թե հարստությունն ու հարմարավետությունն արդյունքում երջանկություն պիտի բերեին բոլորին: Սակայն առաջացավ նոր կրոն, որ կոչվում էր «Առաջընթաց», որի կորիզը դարձավ անսահմանափակ արտադրության, բացարձակ ազատության ու երջանկության եռյակ միությունը:

Առաջընթացի նոր երկրային Արքայությունը եկել էր փոխարինելու Աստծո Արքայությանը: Այս նոր կրոնն իր համախոհներին հույս ներշնչեց, նրանց էներգիա ու կենսական ուժ հաղորդեց: Սակայն ինդուստրիալիզացման դարը չկարողացավ իրականացնել Մեծ Խոստումները, և ավելի ու ավելի շատ մարդիկ են սկսում հանգել հետևյալ եզրակացություններին.

**Բոլոր ցանկությունների անսահմանափակ բավարարումը չի կարող ճանապարհ լինել դեպի բարօրություն և երջանկություն:**

**Սեփական կյանքերի անկախ տերեր դառնալն անհնարին է, քանի որ մենք հասկացանք, որ բյուրոկրատական մեքենայի պտուտակ ենք դարձել, և մեր մտքերը, սկզբունքներն ու ճաշակներն ամբողջությամբ կախված են ղեկավարությունից և նրանց հսկողության տակ գտնվող արդյունաբերությունից ու զանգվածային լրատվամիջոցներից:**

Քանի որ էկոնոմիկական առաջընթացը միայն սահմանափակ թվով հարուստ ազգերի հասու եղավ, ապա հարուստ և աղքատ երկրների միջև անդունդն ավելի ու ավելի է մեծանում:

**Տեխնիկական առաջընթացը շրջակա միջավայրի համար վտանգ և միջուկային պատերազմի սպառնալիք ստեղծեց:** Այս վտանգներից յուրաքանչյուրը (կամ երկուսը միասին) ի գորու են երկրի վրա կյանքը ոչնչացնելու: (ՆՐՈւ ՂՐՏՎՎ, “ըօՑՖ ՌսՈՒ ՌՎպՑՖ”, ԾՈՎրՍ, 1997 չ. րՑՐ. 75)

<sup>6</sup>Չմմ. (ՆՐՈւ ՂՐՏՎՎ, “ըօՑՖ ՌսՈՒ ՌՎպՑՖ”, ԾՈՎրՍ 1997 չ. րՑՐ. 76)

Եթե եղել են ժամանակներ, երբ գիտությունն ու կրոնը բացարձակ հակասության մեջ առճակատվել են և սրանից տուժել է թե՛ մեկը, թե՛ մյուսը, ապա այժմ, կարծում ենք, այդ փոխհարաբերությունների առունով ժամանակները բոլորովին այլ են: Ի դեպ այդ համագործակցությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն ու հայ ժողովրդին խորթ մի երևույթ չէ, այլ ընդհակառակը. կրոնն ու գիտությունը մեր ժողովրդի պատմական անցյալում դարերով նույնացած են եղել իրենց զարգացման ընթացքի մեջ: Հայ հոգևորականը եղել է իր ժամանակի լավագույն մանկավարժը, բժիշկը, մաթեմատիկոսը, աստղագետը և այլ գիտությունների առաջատարը: Այսօր աշխարհում գիտության ու կրոնի շենքերը հստակորեն առանձին գործող կառույցներ են, սակայն համագործակցությունը գնալով անխուսափելի է դառնում, և ավելին՝ երբեմն գերազանց դրական արդյունքներ արձանագրում: Այս մասին են խոսում Սանկտ Պետերբուրգում վերջերս կատարված փորձերի հիանալի արդյունքները, որ միաժամանակ նորություն են բերում և գիտության և կրոնի անդաստանից ներս<sup>7</sup>:

---

<sup>7</sup> «Հայաստանի հանրապետություն», «Աղոթքն ու էներգիան», 27. նոյեմբերի, 2001թ. N 219:

«Սանկտ Պետերբուրգի կենսատեխնոլոգիական նյարդա-հոգեֆիզիոլոգիական ԳՀԻ-ի լաբորատորիա աղոթելու են գալիս՝ ուղղափառ հոգևորականներ, կաթոլիկներ, իսլամի և այլ կրոնների ներկայացուցիչներ:

Դա կենսաբանական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Վ. Սյուլզինի փորձի գլխավոր պայմանն է: Բազմաթիվ հոգեբույժների և նյարդաբանների հայտնի է այն ֆենոմենը, որ աղոթելուց հետո թեթևանում է մարդու հոգեկան վիճակը և վերանում են ծանր հիվանդությունների ախտանիշները: Պրոֆեսոր Սյուլզինն առաջինն էր, որ փորձեց գիտական ճանապարհով բացատրել, թե մարդու ուղեղում ի՞նչ է կատարվում Աստծուն դիմելու պահին: Փորձի արդյունքները ցնցեցին մասնագետներին:

Առաջին անգամ գիտնականները փորձի ընթացքում կարողացան գիտությանն անհայտ գիտակցության վիճակ գրանցել: Մինչ այժմ ընդունված է եղել առանձնացնել աշխատող ուղեղի երեք հիմնական փուլերը՝ արագ քուն, դանդաղ քուն և առույգություն:

Ամեն մեկին յուրահատուկ է իր կենսաբանական հոսանքների ռիթմը: Բայց հանկարծ պարզվեց, որ աղոթքի ժամանակ ուղեղի կենսաբանական հոսանքների ռիթմն այնքան է դանդաղում, որ հնարավոր է դառնում խոսել գիտակցության չորրորդ վիճակի առկայության դանդաղ կամ աղոթական առույգության մասին:

Փաստորեն ուղեղն անջատվում է, ընդհատվում է ակտիվ մտավոր գործունեությունը: Ըստ Սյուլզինի թվում է, թե գիտությունն սկսում է իր գոյակցությունը շարունակել նյութից դուրս: Էլեկտրաէնցեֆալոգրաֆի վրա այն ուրիշ տեսք ունի: Առողջ վիճակում մեծահասակ մարդու գլխուղեղն ունի 9-30 հերց հաճախականություն: Իսկ երբ մարդիկ աղոթքի մեջ են ընկղմվում, ռիթմը դանդաղում է երեք հերցով:

Այդ դանդաղ ռիթմերը դելտա ռիթմեր են կոչվում և 2-3 ամսեկան երեխաների մոտ են նկատվում: Այլ կերպ ասած այդ մարդիկ նմանվում են մանուկների:

Իսկ ինչ վերաբերում է բնագիտության զարգացման այն բնագավառին, որ անմիջականորեն առնչվում է մեր ավարտաճառում քննարկված թեմային, նախ պետք է ասել, որ այն գնալով ավելի ու ավելի է արդիականանում և առավել հստակեցվում են թե՛ եկեղեցիների և թե՛ պետությունների դիրքորոշումներն այդ հարցի նկատմամբ.

«2001 թվականի հոկտեմբերին ACT<sup>8</sup> կազմակերպության լաբորատորիայում գիտնականներն արձանագրեցին բաժանվող բջիջների փոքրիկ կոնգլոմերատներ: Դրանք միջուկի պատվաստմամբ ստացված առաջին սաղմերն էին, որոնք ստացվել էին կլոնավորման տեխնիկայով: .....մենք հավատում ենք, որ այդ ձեռքբերումերը բժշկության նոր դարասկիզբն են խորհրդանշում, մատնանշելով թերապևտիկ կլոնավորման սկզբունքային հնարավորությունը<sup>9</sup>»:

«ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը՝ ամերիկյան ACT ընկերության կողմից մարդու էմբրիոնի կլոնավորումը «Բարոյապես ոչ ճիշտ քայլ» է համարել: Նա կոնգրեսին կոչ է արել ընդհանրապես արգելել մարդու ցանկացած տեսակի կլոնավորումը:

Իսկ ACT-ի ներկայացուցիչները նախկինի նման հայտարարում են, թե էմբրիոնի օգնությամբ ցանկանում են բուժել այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են քաղցկեղը կամ սպիդը: Այսուհանդերձ Բուշը սենատորներին կոչ է արել պաշտպանել մի քանի ամիս առաջ կոնգրեսի ընդունած օրինագիծը: Այդ օրինագծի համաձայն, արգելվում է նույնիսկ մարդու որևէ օրգանի կամ հյուսվածքի կլոնավորումը: ԱՄՆ-ի նախագահը համոզված է, որ գիտնականներն անցել են բոլոր ընդունելի սահմանները: «Սպանությունն անընդունելի է նույնիսկ հանուն գիտության», - ասել է նա: Ամերիկացի գիտնականներին դատապարտել են նաև Եվրահանձնաժողովի հետազոտությունների գծով

---

Այժմ Սլյուզիդը նախատեսում է աղոթքը փորձարկել բժշկության մեջ: Ամերիկյան ուռուցքաբանական միության տվյալներով, քաղցկեղով հիվանդ հավատացյալները հինգ տարով ավելի են ապրում, քան անհավատ հիվանդները: Բեխտերևի անվան ԳՀՀ-ի տնօրեն, պրոֆեսոր Մոդեստ Կաբանովը թույլատրել է օգտագործել աղոթքը հիվանդների վերականգնման գործընթացում: Չի բացառվում, որ այս հետազոտությունը կօգնի որոշ տեսակի հիվանդություններ, առանց դեղամիջոցների բուժման մեթոդ մշակելուն»:

<sup>8</sup> Advanced Cell Technology («Ձարգացած Բջջային Տեխնոլոգիա»)

<sup>9</sup> <http://www.sciam.com/explorations/2001/112401ezzell/>

ներկայացուցիչ Ֆիլիպ Բուսկին և Վատիկանի ներկայացուցիչը. «Կարելի է ողջունել գիտնականների մտադրությունը, սակայն չի կարելի մարդկային կյանք ստեղծել և ապա այն ոչնչացնել», - ասել է կարդինալ Բերտոնեն:

Ընդհանուր առմամբ, Եվրախորհրդարանը ձայների մեծամասնությամբ մերժել է Եվրոմիության ողջ տարածքում կլոնավորումն արգելելու առաջարկը:

Սակայն Եվրամիության ինը երկրների կառավարություններ արդեն արգելել են կլոնավորումը: Բրիտանիան, հավանաբար, թույլ կտա աշխատել մարդկային սաղմի հետ՝ սակայն միայն հետազոտական նպատակներով:

Աշխարհի գրեթե բոլոր երկրները դեմ են մարդ ստեղծելու նպատակով կատարվող կլոնավորմանը: Եվրախորհրդարանի որոշումը հազիվ թե ուղղակիորեն ազդեցություն ունենա կլոնավորման շուրջ վեճերի վրա, քանի որ Եվրամիության անդամ յուրաքանչյուր երկրի կառավարություն իրավունք ունի ինքնուրույն որոշում կայացնելու այս հարցի վերաբերյալ:

Մոսկվայի և Չամայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի II -ն այսպես է արտահայտվել ներկա զարգացող գիտությունների դարում մարդկության բարոյական վերածննդի ունեցած դերի մասին. «Առավել ևս հաշվի առնելով մարդկության տեխնիկական հնարավորությունների աննախընթաց աճը և հետևանքների թափն ու դրանց անպատասխանատու կամ գիտակցված չարամետ կիրառությունները, համարձակորեն կարելի է ասել, որ եթե բարոյական վերածնունդ չլինի, ապա դեստրուկտիվ ուժերի շքահանդես է սպասվում և մարդկության պատմության մայրամուտն անխուսափելի է թվում»<sup>10</sup>:

Մարդը «բնության քնահաճույքն է»: Նա իր գոյության պայմանների համաձայն բնության մասն է և միաժամանակ գիտակցության շնորհիվ նրանից վեր է բարձրանում: Իր առաջ ծառայած գոյաբանական խնդիրները մարդը փորձում է լուծել, մի կողմ նետելով իր և բնության միջև ներդաշնակության մեսիական երազանքը, բնությանը հնազանդեցնելով ու այն իր սեփական նպա-

---

<sup>10</sup> “ՉցրրՍՌռ ՊՏՎ” ամսագրի համար հաղորդագրությունից, ԹՈՍՑՏՐ ԽՏՍՎՈՒՎՓ 22.03.2001.

տակների հետ համապատասխանեցնելով մինչև այն աստիճան, քանի դեռ այդ հնազանդեցումն ավերող բնույթ չի ստանում: Հաղթահարումների ու թշնամանքի ոգով տոգորված մարդկությունը հնարավորություն չի թողնում նկատելու, որ բնության պաշարները սահմանափակ են և ի վերջո պիտի սպառվեն, որի արդյունքում էլ բնությունը վրեժխնդիր է լինելու մարդուց իր նկատմամբ ունեցած կողոպտիչ վերաբերմունքի համար:

## ԳԼՈՒԽ Բ.

### Բիոէթիկայի էութունն ու խնդիրները

«Բիոէթիկա» տերմինն այսօր արդեն ներմուծված է մեր բառաֆոնդ: Այդ շատ ընդհանուր բառն ստուգաբանվում է որպես կենսաբանական նվաճումների էթիկական կողմի վերլուծությամբ զբաղվող գիտություն: Այն փիլիսոփայական գիտության կարևորագույն ճյուղերից մեկն է: Գիտության այս ճյուղի ձևավորումն ու զարգացումը կապված են ավանդական էթիկայի զարգացման հետ ընդհանուր առմամբ և բժշկական ու կենսաբանական էթիկայի զարգացման հետ մասնավորապես: Այն պայմանավորված է, ամենից առաջ մարդու իրավունքների հանդեպ դրսևորվող ուշադրության կտրուկ ուժեղացմամբ, նոր բժշկական տեխնոլոգիաների ստեղծմամբ, որոնք էլ իրենց հերթին բազմաթիվ խնդիրներ են հարուցում և դրանց լուծումներ պահանջում, ինչպես իրավական այնպես էլ բարոյաբանական դաշտում:

«Բիոէթիկա» տերմինը տարբեր կերպ է մեկնաբանվում: Ամենից առաջ բիոէթիկան փորձում են նույնացնել կենսաբժշկական էթիկայի հետ, այն սահմանափակելով բժշկի ու հիվանդի միջև եղած էթիկական խնդիրներով: Բիոէթիկայի առավել ընդարձակ ընկալումն իր մեջ ներառում է մի շարք ակսիոլոգիական, սոցիալական խնդիրներ, ինչպես նաև հարցեր կապված առողջապահական համակարգերի ու մարդ-բնություն հարաբերությունների հետ: Բացի դրանից «Բիոէթիկա» տերմինը մատնանշում է նաև, որ այս գիտությունը կողմնորոշվում է կենդանի արարածների հետազոտությամբ անկախ այն բանից, նրանք իրենց մասնակցությունը բերում են արդյոք թերապիայի մեջ թե ոչ: Այլ խոսքով բիոէթիկան կողմնորոշում է գիտական հետազոտությունների ընթացքում ժամանակակից կենսաբանության նվաճումների շրջանակներում եղած բարոյական բախումների ստեղծմն ու վճռորոշումը:

Այս բառը, որ գործածության դրեց Վան Ռենսելլեռ Պոտտերը իր «Բիոէթիկան կամուրջ է դեպի ապագան» գրքում (1974), ի հայտ եկավ 60-ական

թվականների վերջերին՝ բժշկության և գիտության դեմ առաջ քաշված մեղադրանքների մթնոլորտում: Վ. Ռ. Պոտտերն այդ տերմինն ստեղծեց նոր բարոյագիտության անհրաժեշտությունը ցույց տալու համար, որի նյութը միգուցե պետք է լիներ մարդկության գոյատևումը, որը թերևս կարողանար դիմակայել գիտատեխնիկական առաջընթացի միջոցով մարդկությանը նետված մարտահրավերին, որն էլ իր հերթին կկարողանար ուշադրության առնել շրջակա միջավայրի ազդեցությունը:

Ի հայտ գալով 70-ական թվականներին՝ բիոէթիկան յուրատեսակ օգնության ճիչ էր այն մարդկանց կողմից, ովքեր անձամբ բժշկությամբ և բժշկական ու կենսաբանական հետազոտություններով չէին զբաղվում, բայց համարձակություն դրսևորեցին ու նմանատիպ ուսումնասիրությունների ժխտական հետևանքների առջև հայտնվեցին: Այնպիսի հետևանքների դեմ կանգնելու համարձակություն էր սա, որը չէին երևակայում անգամ բժիշկներն ու գիտնականները:

Մինչ այդ խոսվում էր «Բժշկության մեջ բարոյագիտության» կամ «բժշկական բարոյագիտության» մասին: Փակ դռների հետևում բժիշկներն իրենց նեղ շրջանակներում քննարկում էին այն մասնավոր բարոյական կամ դեոնտոլոգիական հարցերն ու պրոբլեմները, որոնք նրանց մոտ ծագում էին իրենց մասնագիտական գործունեության ընթացքում: Բայց բժշկության ու կենսաբանության սրընթաց զարգացումը նոր հարցեր ծնեց, որոնք ոչ միայն բժիշկներին ու գիտնականներին են վերաբերում, այլև բոլորին, յուրաքանչյուր մարդու: Բժշկությունը, որ երկար ժամանակ հիվանդի նկատմամբ մարդասիրական ու կարեկցական վերաբերմունքի վեհ գաղափարներ քարոզող քրիստոնեական մասնագիտություն էր, վերջին ժամանակներում առավել կատարելագործվեց տեխնիկական ոլորտում: Այսօր բժշկագիտությունն ի վիճակի է գործնականորեն գրեթե բոլոր հիվանդությունների բուժում առաջարկել: Միաժամանակ այն մասնավորաբար կորցրել է իր բարոյագիտական դիմագիծը: Գիտական հետազոտություններով ու առաջընթացով հրապուրված որոշ բժիշկներ (օրինակ՝ ԱՄՆ-ի Մասսաչուսեթս նահանգի «Զարգացած բջջային տեխնոլոգիաներ» (ACT) կազմակերպության աշխատակիցներ

Ռոբերտ Լանցան, Ջո Ցինելլին և բջջային կառուցվածքների ուսումնասիրության ասպարեզում մեծ հեղինակություն վայելող Մայքլ Ուեսթը, ովքեր 2001թ-ի նոյեմբերի 25-ին հանդես եկան հաջողված կլոնավորման մասին հայտարարությամբ<sup>11</sup> շեղվել են ճանապարհից և բժշկական ու բարոյագիտական նոր պրոբլեմների ծնունդ են տալիս:

Սոտ հարյուր տարի առաջ իտալացի իրավաբան Ռ. Բալեստրինին մի այսպիսի արտահայտություն էր արել, որ հետագայում մարգարեական դարձավ. «որևէ ժողովրդի բարոյական անկման ծայրահեղության հասած լինելու ամենաճշմարիտ ապացույցը կարող են լինել այն ժամանակները, երբ հղիության ընդհատումը բացարձակ ընդունելի ու սովորական բան կհամարվի<sup>12</sup>....»

Այո՛, բարոյապես անկում ապրած մարդն ի վիճակի է ոչ միայն իր անձին առնչվող աղետալի վիճակների ստեղծման (որն իդեպ ևս անթույլատրելի է բարոյակրոնական տեսակետից), այլև կարող է մեծագույն վտանգ ներկայացնել, թե՛ ողջ մարդկության և թե՛ մոլորակի ու տիեզերքի համար ընդհանրապես:

### Համամարդկային հանրությանը հուզող խնդիրներն այսօր

Երկիր մոլորակն Աստծո կողմից մարդուն վստահված այն վայրն է, որտեղ մարդն անց է կացնում իր երկրային կյանքի օրերը, ապա այն փոխանցում իր հաջորդ սերունդներին, որպես կենցաղավարության ու կատարելագործման մի օրրան: Այն մարդկության բնակավայրն է, և մարդը նրա հետ պարտավոր է վարվել այնպես, ինչպես իր սեփականին կվարվեր: Սակայն այլ է ցանկությունը և միանգամայն այլ՝ իրականությունը:

---

<sup>11</sup> “ԼջՉպրՑՌ”, “ձփավօպ ՉտպՐՉօպ ՍսՏվՈՐՏՉՈսՌ ՍսպՑՍՌ փպսՏՉպՍՌ”, 27.11.2001ջ. N 219.

Կենդանիների վրա նման փորձարկումներ կատարվում են աշխարհի հազարավոր լաբորատորիաներում: Եվ բացառված չեն նաև մարդկանց վրա կատարվող փորձերը, ճիշտ է այդ մասին ոչ բոլորն են ցանկանում հայտարարությամբ հանդես գալ:

<sup>12</sup> “ԻՊՏՐՏՉՖպ”, N 1, ԼՐՈՎՈ կՈՉսպվՍՏ, “ԿՏջվՈռ ըՉՏռ ՏՐչՈվՈջվ”1992 չ., ըՑՐ. 45.



Սրընթաց զարգացող ժամանակակից գիտության ձեռքբերումների պայմաններում մարդկությունն իր առաջ ունի բազմաթիվ հուզող խնդիրներ, որոնք սկսում են տիեզերական անսահմանության ոլորտներից, և հասնում մինչև միկրոաշխարհ: Դրանց պատճառն ու լուծումը պետք է փնտրել մարդկային հոգու և գիտակցության սխալ կամ ճիշտ զարգացածության շրջանակներում: Մարդկային միտքը շատ արագ է զարգանում և, սկսած կրակի գյուտից մինչև միջուկի տրոհման հայտնագործումն ու կիրառությունը, հանում մարդկության առավել հեշտ կյանքի արված բոլոր հայտնագործությունները հաճախ նորանոր խնդիրներ են դնում մարդու առաջ: Ջարգացող մարդն այդ խնդիրները փորձում է վճռել դրանց հակադարձելով ու նորանոր ձեռքբերումների շնորհիվ առավել աներևակայելի հայտնագործություններ կատարելով, որոնց նպատակն իրականում առաջացած խնդիրների կանխումն է լինում, սակայն ամեն մի ձեռքբերում իր հետ նոր և ավելի բարդ խնդիրներ է ծնում: Եվ այսպես անընդհատ ծնվող խնդիրներն ու դրանց կանխելու ձգտմամբ անընդհատ զարգացող գիտությունը թափանցում են բոլոր ոլորտները՝ տիեզերականից՝ մակրոաշխարհից մինչև միկրոաշխարհ:

Ընտրված թեման՝ մարդու բջիջների կլոնավորումն ու դրա կիրառական նշանակությունը, մաս է կազմում այսօր մարդկությանը մեծապես հուզող «բիոէթիկայի խնդիրների», որոնց թվին են պատկանում նաև **էֆթանազիայի**<sup>13</sup>, **աբորտի**, **օրգանների պատվաստման**՝ տրանսպլանտացիայի, **արհեստական բեղմնավորման** և այլ հանգուցային հարցեր, որոնց մասին Քրիստոնեական Եկեղեցիների մեծամասնությունն իր հստակ դիրքորոշումն ունի: Այս խնդիրները բացի գիտատեխնիկականից ունեն նաև մարդկային կյանքի համար կենսական նշանակությամբ բարոյական կողմ և մեծ ազդեցություն թե՛ անմիջապես տվյալ երևույթին առնչվող անհատի հոգեկան ու հոգևոր վիճակների և թե՛ ողջ մարդկության բարոյական ու հասարակական նկարագրի վրա: Եվ յուրաքանչյուր եկեղեցի, պատասխանատու լինելով իր ժողովրդի հոգեբարոյական առաջընթացի ու անխոչընդոտ զար-

---

<sup>13</sup> Ծանր՝ անբուժելի հիվանդությունների դեպքում բժիշկների միջամտությամբ կյանքի ընդհատման մեթոդ:

զացման համար, պետք է առնվազն նման հարցերին վերաբերող իր դիրքորոշումն ունենա, ավելին՝ պետք է փորձի ելք ցույց տալ այնպիսի դեպքերում, երբ իր հավատացյալի առաջ կարող է դժվարին խնդիր դրված լինել այս հարցերից որևէ մեկի հետ կապված: Օրինակ՝ նմանատիպ արդիական հուզող հարցերից է արբորտի<sup>14</sup> արհեստական վիժեցման խնդիրը, երբ մարդ չգիտի, թե պետք է հրաժարվե՞լ ամուսնական մտերմիկ կյանքից, թե՞ օգտվել արհեստական ապահովիչ միջոցներից, որոնք թե՛ լիարժեք «անվտանգությունը» չեն ապահովում և թե՛ շատ դեպքերում վնասում են առողջությանը: Այսպիսի անլուծելի թվացող խնդիրներից է նաև էֆթանազիան<sup>15</sup>, որ շատ բժիշկների

---

<sup>14</sup> Վաղնջական ժամանակներից Եկեղեցին հղիության նպատակադրված ընդհատումը (արբորտ) դիտում է որպես ծանրագույն մեղք: Կանոնական օրենքներն արբորտը հավասարազոր են դասում սպանությանը (և անգամ ինքնասպանության. տե՛ս «Էջմիածին», N 7, 2000թ. էջ 49): Այսպիսի գնահատման հիմքում ընկած է այն համոզումը, որ մարդկային էակի առաջացումն Աստվածային շնորհ է և **բեղմնավորման պահից արդեն** մարդկային անձնավորության դեմ ամենայն ոտնձգություն հանցավոր է: «Արհեստական վիժեցման պատճառ դարձած կինը մարդասպան է համարվում և պատասխանատու Աստծո առաջ: Քանզի որովայնում սաղմը կենդանի էակ է, որի մասին Տերն ինքն է հոգ տանում» - գրում է երկրորդ դարի ջատագով Աթենագորասը: «**Նա, ով մարդ է լինելու, արդեն մարդ է**»,- պնդում էր Տերտուղիանոսը երկրորդ-երրորդ դարերի սահմանագծին: «**Մոր որովայնում բեղմնավորված սաղմը մտածված կերպով սպանողը մահապատժի ենթակա է... Որովայնում բեղմնավորվածի վիժման դեղամիջոցներ տվողները ըստ էության մարդասպաններ են, հավասարապես նաև՝ մանկասպան թույն ընդունողները**»,- ասված է Բարսեղ Մեծի երկրորդ և ութերորդ կանոններում: Այստեղ սբ. Բարսեղը ճշտում է, որ հանցանքի ծանրությունը հղիության ժամկետի հետ կապ չունի. «**Մեզ համար տարբերություն չկա պտուղը ձևավորված է, թե ոչ**»: Սբ. Յովհան Ոսկեբերանը արբորտ անողներին. «Մարդասպաններից ավելի վատ էր համարում»:

**(ԿրվՏՉօ ըՏՓՈՌՆՖՎՏՆ ՍՏՎՓԱՏՓՈՌ, ԼՎԻՏՐՎՈՓՈՏՎՈՅՎՈՅ ը՛սսպՑպվՖ ԶցրրՍՏՆ կՐՈՉՏրսՈՉՎՏՆ ճպՐՍՉՈ, ԿՑՊԿս ԶվպՔվՈւ ՓպՐՍՏՉՎՈւ ըՉ՛ջպռ ՃՏրՍՏՉրՍՏՆՏ կՈՑՐՈՌՐԼՈՑՈ, N 8, ԸՉչցրՑ, 2000չ. չս. XII 2, ըՑՐ. 73)**

Կանոնագիրք Հայոցը գրում է. «**Իսկ ովքեր որ չար դեղերով մանուկներին սպանում են որովայնում, և արգանդը դեղերով կապում հաճախակի պոռնկանալու համար և տղամարդուն ու կնոջը խողխղում են և միմյանց ատելի դարձնում պսակի ընթացքում, արժան է, որ քահանան այդպիսիներին կարգի ու ապաշխարության բերի.....**: Եվ եթե նույն մոլորության մեջ մեռնեն, ահա չար կլինի մեղավորի մահը, թող զրկվեն սուրբ օրենքներից և քրիստոնյաների շարքում չթաղվեն» (Կանոնագիրք հայոց Բ, Կանոն Բարսեղի Կեսարացույ, կանոն Ծ Դ Ը)

<sup>15</sup> **ԿրվՏՉօ ըՏՓՈՌՆՖՎՏՆ ՍՏՎՓԱՏՓՈՌ, ԼՎԻՏՐՎՈՓՈՏՎՈՅՎՈՅ ը՛սսպՑպվՖ ԶցրրՍՏՆ կՐՈՉՏրսՈՉՎՏՆ ճպՐՍՉՈ, ԿՑՊԿս ԶվպՔվՈւ ՓպՐՍՏՉՎՈւ ըՉ՛ջպռ ՃՏրՍՏՉրՍՏՆՏ կՈՑՐՈՌՐԼՈՑՈ, N 8, ԸՉչցրՑ, 2000չ. չս. XII.8, ըՑՐ. 82.**

Բնական վախճանի մասին ուղղափառ ըմբռնումը մահվամբ աշխարհից հեռացման նախապատրաստություն է, որը մարդու կյանքում հոգևոր նշանակություն ունեցող փուլ է համարվում: Քրիստոնեական հոգատարությամբ շրջապատված հիվանդը երկրային գոյության վերջին օրերին ի վիճակի է բարենորոգ փոփոխություն կրելու անցած ճանապարհի նոր իմաստավորմամբ ու հավիտենության առջև գղջմամբ ներկայանալով: Իսկ մահացողի հարազատների և բուժաշխատակազմի համար հիվանդի հանդեպ համբերատար հոգատարու-

հավաստմամբ, տառապանքից ազատման «խաղաղ ու հանգիստ» միջոց է թե՛ հիվանդի և թե՛ նրա խնամատարի համար: Բայց «անպատասխան» է մնում այն հարցը, թե արդյո՞ք այս «խաղաղ» թվացող տարբերակի առաջարկությունը կողմնակի չար միջամտություն չէ հիվանդի անհատական, անձնական կյանքի մեջ, կամ նմանատիպ առաջարկությամբ կողմնակի միջամտությունը բռնացում չէ՞ հիվանդի ազատ կամքի վրա, երբ նրան տանջալի հիվանդության ճիրաններում դրանից ազատման ճանապարհ է առաջարկվում, որը «վստահելի» բժշկի հավաստմամբ միակն է: Սակայն չեն բացառվում այնպիսի դեպքեր, երբ ախտորոշումը սխալ լինի ու մահը ոչ այնքան անխուսափելի և անհուսալի վիճակում հայտնված հիվանդները երբեմն անբացատրելիորեն բուժվում են կամ հենց բժշկական տեխնոլոգիական միջոցների կիրառությամբ «հրաշք» է տեղի ունենում ու ամեն ինչ վճռվում է հակառակ նախկին ախտորոշման՝ հոգուտ հիվանդի: Եթե կողք կողքի դնելու լինենք անհույս հիվանդի և արդեն ապաքինված մարդու վիճակները և ապա համեմատենք նաև երկու վիճակներում նրանց կայացրած վճիռները, կտեսնենք, որ ցանկացած պարագայում մարդը իրավունք չունի որոշում ընդունելու իր կամ դիմացինի լինել չլինելու մասին: Ուստի բիոէթի-

---

թյունը ի Փառս Փրկչի հենց Տիրոջը ծառայելու հնարավորություն է. **«Ճշմարիտ են ասում ձեզ, քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք, այդ ինձ համար արեցիք»** (Մատթ. 25-40):

**«Միայն Տերն է կյանքի ու մահվան տիրակալը»** (Ա Թագավորաց 2-6) **«Նրա ձեռքում է բոլոր ապրողների և ամենայն մարդկային մարմնի հոգին»** (Յոբ 12-10): Ղրա համար եկեղեցին հավատարիմ մնալով **«Մի սպանիր»** Աստվածային պատվիրանի պահպանմանը՝ չի կարող բարոյապես ընդունելի համարել, այժմ տարածված, այսպես կոչված էվթանագիայի, այսինքն անհույս հիվանդների սպանության (այդ թվում նաև իրենց ցանկությամբ), օրինականացման փորձերը: Մահվան արագացման մասին հիվանդի խնդրանքը հաճախ հուսահատության վիճակով է պայմանավորված, որը նրան զրկում է իր վիճակը ճիշտ գնահատելու հնարավորությունից: Էվթանագիայի օրինականացումը թերևս արժանապատվության նսեմացման ու բժշկի մասնագիտական պարտականության աղավաղման կհանգեցնի: Կաղավաղվի այն բժշկի մասնագիտությունը, որ կյանքի պահպանման է կոչված, այլ ոչ թե սպանության: **«Մահ պարզև ելու իրավունքը»** հեշտությամբ կարող է սպառնալիքի վերածվել այն այցելուների համար, ովքեր զուրկ են բուժման համար բավարար դրամական միջոցներից:

Այսպիսով, էվթանագիան սպանության կամ ինքնասպանության ձև է դառնում, կախված այն բանից, թե այցելուն մասնակցություն է ունենում այդ հարցում թե ոչ: Վերջին դեպքում էֆթանագիայի համար համապատասխան կանոնական օրենքներ են ընդունված, որոնց համաձայն մտածված ինքնասպանությունը, ինչպես նաև դրա իրականացման գործում օգնություն ցուցաբերելը գնահատվում են որպես ծանր մեղք:

կական հարցերին առնչվող այս խնդրի «տառապանքներին վերջ տալու» կեղծ որոշման տակ թաքնված է մարդասպանության կամ առնվազն ինքնասպանության հանցանքը, որ դասվում է աններելի մեղքերի շարքում: Մարդն Աստծո պատկերով և նմանությամբ ստեղծված արարած է, որ մարմնից բացի ունի նաև անմահ հոգի: Ամեն մարդու կյանքը երկրի վրա ընթանում է Աստծո նախախնամությամբ, արարածն իրավունք չունի միջամտելու իր Արարչի գործերին և դադարեցնելու մի կյանք, որի գործարկումը միայն Ամենաբարձրյալին է վերապահված: Այսպիսին է նաև տրանսպլանտացիայի՝ օրգանների պատվաստման խնդիրը, որ լայնորեն կիրառվում է բժշկության մեջ և իր մեջ նաև էթիկական տարր է պարունակում: Իհարկե այս աշխատանքներն օրենսդրորեն ընդունելի են և եկեղեցին էլ որոշ վերապահումներով իր դրական դիրքորոշումն ունի: Այսինքն՝ այս քայլին գնացող բժիշկները պատվաստումը կատարելուց առաջ պետք է համոզված լինեն, որ ուղեղի նյարդային բջիջներն անդամալիորեն մահացած են: Եվ պետք է բացառվեն այն դեպքերը, երբ նոր մահացած օրգանիզմից հեռացված առողջ ու դեռևս կենսաբանական մահ չապրած օրգանները կարող են պահեստային մասեր դառնալ տվյալ օրգանի պատճառով տառապող անձանց համար: Այստեղ բժիշկները պետք է բացառեն մահացածի կրկին կյանքի կոչման հնարավորությունը, վկայակոչելով կլինիկական մահից հինգ րոպե հետո վրա հասնող կենսաբանական մահը, որ անդարձելի է ուղեղի բջիջներին վրա հասնող մահվան պատճառով: Սակայն այստեղ կա էթիկական կարևորագույն խնդիր, և հարց է առաջանում, թե որքանով է պահվում այդ չափանիշը՝ խնդրի բարոյական կողմը, և թե չի՞ չարաշահվում արդյոք գիտության ընձեռած հնարավորությունը (իհարկե հայտնի են այդպիսի բազմաթիվ դեպքեր), կամ թե ի՞նչ հոգեբանական ազդակ է սա մահացողի հարազատների համար (նույնիսկ եթե նրանք համաձայն լինեն գործողության իրականացմանը): Արդյո՞ք մեռնողը համաձայն կլինե՞ր իր մարմնի հետ քմահաճ վերաբերմունքին, և ի վերջո, թե ի՞նչ ապրումներ կարող է ունենալ մարդկային հո-

գին, որի գոյությունը նման հարցերի քննարկման պարագային թերևս անտեսվում է գիտնականների մեծամասնության կողմից:

Արհեստական բեղմնավորման հարցը ևս դասվում է «Բիոէթիկայի» վերոնշյալ խնդիրների շարքը ու թեև մեծ սփոփանք կարող է լինել անզավակուսյունից տառապող ամուսինների համար, սակայն հղի է նաև բազմաթիվ հոգեբարոյական ու կենսաբանական վտանգներով: Ի վերջո արհեստական բեղմնավորման ու սաղմի հետ կատարվող այլ փորձարկումների արդյունքում է առաջացել մարդկության առաջ ծառայած մեծագույն խնդիրներից մեկը՝ կլոնավորումը, որ ըստ էության, զարգացած տեխնիկական միջոցներով, սոմատիկ (մարմնական) բջջից լիարժեք օրգանիզմ ստանալու արհեստական ճանապարհ է, որ լի է ակնհայտ ու չկանխատեսված բազում վտանգներով, թեև ունի նաև իր դրական թվացող կողմերը: Ի դեպ, մեր բուն վերլուծությունը նվիրված կլինի կլոնավորման խնդրին և կփորձենք անաչառորեն վեր հանել այդ երևույթի, էթիկական, դրական և բացասական կողմերը:

## Կլոնավորում

Ընդամենը մի քանի տարի առաջ գլխավորապես զանազան հոդվածներում ի հայտ եկող «կլոնավորում» բառը, որ գիտական ֆանտաստիկայի ժանրին էր պատկանում, այժմ արդեն իրականության մեջ ամրագրված տերմին է:

«Գենային ինժինեռիա» տերմինը նախկինում ասես այնքան էլ չէր գրավում մարդկանց ուշադրությունը, չնայած այդ բնագավառում ուսումնասիրություններ կատարվում են արդեն կես դարից էլ ավելի: Այսօր արհեստական ճանճը՝ դրոզոֆիլայի արհեստական մուտացիան, կամ նույնիսկ մկների մուտացիաները այլևս չեն տպավորում, կարծես առավել խոշոր օբյեկտ է հարկավոր:

Դուլի անունով ոչխարը արհեստականորեն «մոր» օրգանիզմից վերցված գենետիկ նյութի հիման վրա կենդանի արարած ստանալու փորձի

արդյունքում լույս աշխարհ եկավ 1996 թվականին<sup>16</sup>: Շոտլանդիայում Ռոսլինյան ինստիտուտի զգուշավոր հետազոտողներն իրենց հաջողության մասին աշխարհին հայտնեցին միայն 1997 թվի փետրվարի 24-ին: Այդ իրադարձությունը հուզում առաջացրեց ոչ միայն լրատվության ոլորտում, այլ նաև լրջորեն անհանգստացրեց զարգացած երկրների իշխանություններին: «Մեխանիկական» մեթոդով մարդկային արարածի արտադրումը, որ նախկինում ապագայի օրենսդրության խնդիր էր համարվում, այժմ արդեն որպես իրականացած անդարձելի փաստ կանգնած էր հասարակության առաջ:

Շոտլանդացի գիտնականների հաջողությանը բավականին երկար պատմություն էր նախորդում: Հարկ ենք համարում մեջբերել ժամանակագրական մի քանի համառոտ տեղեկություններ կլոնավորման գաղափարի զարգացման պատմությունից, որ հրատարակվել է "ԻվՈվՌպ հիմն" ամսագրի<sup>17</sup>, կլոնավորմանը նվիրված, 2000 թվականի ապրիլյան համարում:

1883թ - Գերմանացի բջջաբան Օսկար Գերտվիզը հայտնագործեց ձվաբջիջը:

1943թ - Science ամսագիրը հայտնեց փորձանոթի մեջ ձվաբջջի բեղմնավորման հաջողության մասին:

1953թ.- Ռ. Բրիգան ու Տ. Կինգը հայտարարեցին ժառանգական նյութի գործարկման հաջող մեթոդի՝ աֆրիկական «կսենոպուս» թևաբտիկավոր գորտի հսկայական ձվերի մեջ բջջի միջուկի տեղափոխման մասին:

1973թ.-Նյու-Յորքի Կոլումբիա համալսարանի պրոֆեսոր Լ. Շետլզը հայտարարեց, որ պատրաստ է լույս աշխարհ բերելու առաջին «երեխան փորձանոթից», որին հետևեցին Վատիկանի ու ԱՄՆ-ի կատեգորիկ արգելքները:

---

<sup>16</sup>, ծոցՍՈ Ռ ԲպսՌչՌ՝, N 12, Ձ. կՐՈՉՏՏՏՐՏՉՈ, "ըպՐպչՌՑպրՖ ՎցՁփՈվ", 1998 չ. թՑՐ. 33.

<sup>17</sup> Տես՝ [Gazeta. Ru](http://gazeta.ru/dossier/24 - 03 - 1999_clon.htm) ՏՑ 24 - 03 - 1999 (ԹօւոցրՍ No 017) ԿՐՈչՌվՈւ: [http://gazeta.ru/dossier/24 - 03 - 1999\\_clon.htm](http://gazeta.ru/dossier/24 - 03 - 1999_clon.htm) հՈՔՈ ՄպՐՎՈվ, < sherman@gazeta.ru >

1977թ. -Ավարտվեց Օքսֆորդի համալսարանի կենդանաբանության պրոֆեսոր Ջոն Գերդոնի աշխատանքների մասին հոդվածների հրատարակման շարքը, որի արդյունքում կլոնավորվել էին ավելի քան 50 գորտեր:

1978թ.-Տեղի ունեցավ փորձանոթից Լուիզա Բրաունի առաջին երեխայի ծնունդն Անգլիայում:

1981թ.- Շետլզը մարդու երեք կլոնավորված սաղմ ստացավ, բայց նրանց զարգացումը կանգնեցվեց:

1985թ.- Յունվարի 4-ին հյուսիսային Լոնդոնի կլինիկաներից մեկում Տիկին Կոտտոնը աղջիկ ունեցավ: Նա աշխարհում առաջին ձևական կենսաբանական մայրն էր (այսինքն «Մանչուկ Կոտտոնը», ինչպես կոչում էին երեխային, տիկին Կոտտոնի մայրական ձվաբջջից չէր բեղմնավորվել): Այնուհետև արգելք դրվեց 14 օրականից մեծ տարիք ունեցող մարդկային սաղմերի հետ կատարվող փորձարկումների վրա:

1987թ.-Յատուկ ֆերմենտներ օգտագործող մասնագետները Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանում կարողացան բաժանել մարդկային սաղմի բջիջները և նրանց կլոնավորել մինչև երեսուներկու բջջի փուլը (բլաստների ու բլաստոմերների), որից հետո սաղմերը ոչնչացվեցին: Ամերիկյան այնժամանակվա վարչակազմը լաբորատորիաներին սպառնաց նմանատիպ փորձերի կրկնվելու դեպքում զրկել դոտացիաներից ու ֆեդերալ ֆոնդերից:

1996թ.- Մարտի 7-ին Nature ամսագիրը հրատարակում է Էդինբուրգի Ռոսլինյան ինստիտուտի կոլեկտիվի հեղինակային առաջին հոդվածը: Նրանք հայտարարեցին առանց ոչխարի մասնակցության հինգ գառնուկների ծննդյան մասին. ձվաբջիջների ցիտոպլազմային պարկուճների մեջ, լաբորատոր պայմաններում աճեցված էմբրիոնային բջիջներ էին տեղադրվել, որոնք մեկ այլ սաղմից էին ստացվել: Բիլ Բլինթոնի վարչակազմը ևս մեկ անգամ հաստատեց ֆեդերալ ֆոնդերից զրկելու իր մտադրությունը բոլոր նրանց հանդեպ, ովքեր մտադիր են փորձեր կատարել մարդկային սաղմերի հետ: Այսպես, նպաստից զրկվեց Վաշինգտոնի համալսարանի այն հետազո-

տողը, որ յոթ բջջի փուլում գտնվող դեֆեկտային գեների և սաղմի սեռի վերլուծություն էր կատարել:

1997թ.- փետրվարի 27-ին Nature ամսագրի կազմի վրա ձվաբջջի միկրոլուսանկարի ֆոնի վրա հայտնվեց հայտնի Դոլլի ոչխարը, որ ծնվել էր այն նույն եղինբուրգի Ռոսլինյան ինստիտուտում: Հունիսի վերջին Քլինթոնը կոնգրեսին օրինագիծ ներկայացրեց, որով արգելում էր «կլոնավորման ճանապարհով ու սոմատիկ բջիջների տեղափոխությամբ մարդ ստեղծելը»:

1997թ.- դեկտեմբերի վերջին Science ամսագիրը հայտարարեց Ռոսլինյան մեթոդով ստացված վեց ոչխարների ծննդյան մասին: Նրանցից երեքը՝ այդ թվում նաև Պոլլի ոչխարը «Ֆակտորա 9» մարդկային գեն կամ արյան շրջանառությունը կանգնեցնող սպիտակուց էին կրում, որն անհրաժեշտ է գենոֆիլայով տառապող հիվանդներին, այսինքն՝ արյան շրջանառությունը խախտված մարդկանց:

1997թ.- ԱՄՆ-ում հրատարակվեց Մայքլ Սմիթի «Կլոններ» գրքույկը, որում պատմվում էր մարդկանց կլոնավորման մասին:

1998թ.- Չիկագոյի բնակիչ, ֆիզիկոս (այսպես էր գրված տեքստում, որտեղ նկատի էր առնվել "physician" (նշ. բժիշկ), ի դեպ այդ տեքստում աղավաղված էր նաև ազգանունը) Սիդը հայտարարեց մարդկանց կլոնավորման լաբորատորիայի մասին, նա հաստատում էր, որ իր մոտ հաճախորդները չեն պակասի:

1998թ.- մարտի սկզբին ֆրանսիացի գիտնականները հայտարարեցին հորթուկի կլոնավորման մասին:

Կլոնավորման թեմայի հետագա զարգացումն անխզելիորեն կապված է այդ գիտական ձեռքբերման իրավական, էթիկական և կրոնական բնագավառների հետ:

2001 թվականի նոյեմբերի 25-ին «Ձարգացած Բջջային Տեխնոլոգիաների» (Advanced Cell Technology) ամերիկյան Մասաչուսեթս նահանգի ընկերությունը հայտարարեց գիտական սենսացիայի մասին. իրականացվել էր առաջին մարդու կլոնավորումը: Սակայն խոսել այդ մասին դեռ վաղ է: Բայց



մարդկային բնության հետ նորովի վարվելու ճանապարհը տեսականորեն բացված է: Մարդն Արարչի հետ մարտի է բռնվում:

Advanced Cell Technology-ի առաջացրած սենսացիան ոչ այնքան հետաքրքրություն, որքան տազնապ է հարուցում: Հարց է ծագում, թե ինչով կավարտվի գիտության առաջընթացը: Ամենից առաջ վտանգն այն է, որ աշխատանքները կատարված են Մասաչուսեթս նահանգի բոլորին անհայտ մասնավոր ֆիրմայի սովորական լաբորատորիայում: Որով էլ ենթակա են այն վտանգին, որ նման փորձերը կարող են կատարվել առանց որևէ մեկին ուշադրություն դարձնելու, նույնիսկ եթե արգելող օրենքներ ու բարոյական կանոնակարգեր էլ ընդունվեն:

Եթե գիտական աշխարհին անհայտ Ռոբերտ Լանցան ու Ջո Ցինելլին իրենց հայտնագործության մասին չցանկանային հայտարարել, ապա ոչ ոք ոչինչ չէր իմանա:

Նմանատիպ մեթենայություններ աշխարհի հարյուրավոր լաբորատորիաներում կատարվում են կենդանիների, չի բացառվում նաև մարդկային բջիջների վրա : Գիշտ է այդ մասին ոչ բոլորն են ուզում հայտարարել, քանի որ հասարակությունը մարդկանց կլոնավորման գաղափարի հետ դեռ չի «հաշտվել»<sup>18</sup>:

Սակայն, ինչպես գրեթե միշտ, այսօր ևս գիտությունը հաշվի չի նստում հասարակական կարծիքի հետ, այլ շատ ժամանակ հասարակությանը քարշ է տալիս իր ետևից՝ ստիպելով հաշտվել իր առաջադրած ձեռքբերումների հետ և գտնել դրանցից շատերի առաջն առնելու կամ դրանցից սպասվող հնարավոր վնասները կանխելու միջոցները:

Եվ այսպես կլոնավորման ենթակա առաջին մարդկային սաղմը գործարկված է: Հնարավոր է մոտ ապագայում փորձանոթի մեջ ստեղծվի «Նոր Ադամը»: Մեծահամբավ դոկտոր Անտիոորին մոտալուտ «հաջողություն» է խոստանում: Նա արդեն տասը մուկ է կլոնավորել և անցում է կատարում դեպի մարդը: Իսկ Դոլլիի «հայր» Գարի Գրիֆինը վախեցած է. «Մարդու կլո-

---

<sup>18</sup> “ԼջՉպրՑՌ” N 219 “ձփպվօպ ՉտպրՉօպ ՍսՏվՌՏՉՈսՌ ՍսպՑՍՌ փպսՏՉպՍՌ”,27 ձՏ’ոՐ’ 2001 չ.

նավորումն անպատասխանատու նախաձեռնություն է, տեխնոլոգիան բավականին թույլ է և կենդանիների հետ փորձերն անգամ հազվադեպ են հաջողությամբ պսակվում»: Նրա գործակից Յան

Վիլնատը պնդում է. «Մարդու կլոնավորման հավանական արդյունքը մահացած երեխայի կամ առավել մի վատթար բանի՝ լուրջ աննորմալություններով երեխաների ծնունդ է լինելու»<sup>19</sup>:

Բացի այս, երևույթն ունի նաև բարոյաէթիկական կողմ, որ հանդես է գալիս բազմաթիվ անպատասխան հարցերի առաջադրումով.

1. Ո՞ւմ ձեռքը կնկնի մարդու արտադրության մեխանիզմը:
2. Երաշխիք կա՞րոյոք, որ կլոնավորման միջոցով բիոլոգիական զենք չի ստեղծվի:
3. Արդյո՞ք այս պարագայում կնոջ մոտ մայրական բնազդ կառաջանա՞, թե ոչ:
4. Սիրելի կլինի՞ արդյոք երեխան:
5. Ինչպե՞ս կփոխվի մեր բարոյական նկարագիրը:
6. Ինչպիսի՞ն կլինի հարաբերությունը մարդկանց և կլոնների միջև:
7. Եվ վերջապես, ո՞ւր կտանի մեզ ձեռակերտ էվոլյուցիայի շեղումը:

---

<sup>19</sup> “ԼքՉպրՑՌ” N 219, “ձփավօպ ՉտպՐՉօպ ՍսՏվՌՐՏՉՈսՌ ՍսպՑՍՈՒ փպսՏՉպՍՈՒ”, 27 ծՑ՛ոՐ՛ 2001 չ.

## ԳԼՈՒԽ Գ.

### Կլոնավորման կենսաբանական նշանակությունը և դերը ժամանակակից կենսաբանական և բժշկական խնդիրների լուծման համար (Նրա բարոյաէթիկական կողմը)

Ժամանակակից կենսաբանությունն իր զարգացման ընթացքում արդի գիտության մեջ ակնառու երեք հիմնական հաղթանակներ՝ ձեռքբերումներ է գրանցել.

- Գենետիկ կոդերի վերծանումը (1953թ. Կիրկ և Ոտսոն)
- Բնային բջիջների հայտնաբերումը (1999թ.)
- Մարդու գենոմի վերծանումը (2000թ.)

Եվ այս բնագավառներում կատարված ուսումնասիրություններով ու այդ ասպարեզի ձեռքբերումներով են պայմանավորված մարդու կլոնավորման ուղղությամբ կատարվող փորձերը:

### Մարդու գենոմը

Դեռևս 70 ական թվականների կեսերին սկիզբ առած այս ծրագիրը ԴՆԹ<sup>20</sup>-ի նուկլեոտիդային հաջորդականության վերծանման երկու տարբերակ

<sup>20</sup> ԴՆԹ-ի կրկնակ պարույրի հատվածի մոդելը

Դեզօկսիրիբոնուկլեյնաթթուն, կամ ԴՆԹ-ն առաջինն է անջատվել բջջի կորիզից, դրա համար էլ այն անվանել են Նուկլեյնային (Յունարեն nucleus-միջուկ բառից): ԴՆԹ-ն կազմված է չորս տարբեր հիմքեր ունեցող նուկլեոտիդային շղթայից. ադենին (A), գուանին (G), ցիտոզին (C) և տիմին (T): ԴՆԹ-ն համարյա միշտ կրկնակ պարույրի տեսքով է լինում, այսինքն՝ այն իրենից երկու նուկլեոտիդային շղթաների զույգ է ներկայացնում: Դրանց միասին է պահում այսպես կոչված հիմքերի զույգերի կոմպլիմենտարությունը: «Կոմպլիմենտարությունը» նշանակում է, որ երբ ԴՆԹ-ի երկու շղթաներում A-ն և T-ն իրար դեմ դիմաց են, նրանց միջև ինքնաբերաբար կապ է ձևավորվում: Տրամաբանորեն կոմպլիմենտար զույգ են ձևավորում նաև G-ն և C-ն: Մարդու յուրաքանչյուր բջիջ 46 քրոմոսոմ է պարունակում: Մարդու գենի երկարությունը (Ողջ ԴՆԹ-ն քրոմոսոմներով) կարող է հասնել երկու մետրի և կազմված է երեք միլիարդ նուկլեոտիդային զույգերից: Գենը ժառանգականության միավորն է: Այն ԴՆԹ-ի մոլեկուլի մի

է առաջարկում: Մակսամ Գիլբերտին պատկանող առաջին տարբերակն այն է, որ ԴՆԹ-ի մոլեկուլը հատվածների են բաժանում, հետո այդ հատվածները քիմիական ներգործության ենթարկելու հատուկ մեթոդով վերծանում: Գիտնականները դիտարկում են, թե ինչ է տեղի ունենում նուկլեոտիդային հաջորդականության հետ և դրա հիման վրա եզրակացություն են անում ԴՆԹ-ի յուրաքանչյուր հատվածում նուկլեոտիդների իրար ետևից դասավորվածության կարգի մասին:

Համաձայն երկրորդ՝ Սենգերյան մեթոդի, ԴՆԹ-ի մոլեկուլը ֆերմենտների միջոցով հատուկ վերամշակմամբ ոչ միայն հատվածների են բաժանում, այլև նրա կրկնակ պարույրը բաժանում են երկու թելերի: Այնուհետև ըստ յուրաքանչյուր ստացված կտորի, որ առանձին նուկլեոտիդային «թելերից» է բաղկացած, հատուկ քիմիական մեթոդով վերականգնվում է նուկլեոտիդների պակասող երկրորդ թելը: Բայց նրա համադրությունն ամբողջությամբ չեն բաժանում տարբեր նուկլեոտիդների: Այդ դեպքում անընդհատ երկարությունը փոխող ԴՆԹ-ի շղթաների հավաքածո կստացվեր՝ փոքրիկ սանդուղք, որի տարբեր երկարության հատվածների վերջավորությունների վրա լուսածորուն նշաններ են երևում:

Ութսունական թվականներին գիտնականները ձեռնարկեցին ԴՆԹ -ի միայն կարճ մոլեկուլների վերծանումը, որոնցից են վիրուսների ԴՆԹ-ն, միտոխոնդրալ ԴՆԹ-ն կամ պլազմիդները (պլազմիդը ԴՆԹ-ի շրջանաձև մոլեկուլ է, որ գտնվում է բակտերիայի ցիտոպլազմայում և կազմված է ոչ մեծ թվով գեներից): Բայց առաջին քայլերն արված էին: Եվ ահա 1988 թվին գիտնականներն առավել ակտիվորեն հանդես եկան մարդու գենոմի վերծանման առաջարկությամբ: Ամերիկայում այդպիսի առաջատար եղավ Ջեյմս Ուոթսոնը՝ ԴՆԹ-ի կրկնակ պարույրի «հայրերից» մեկը, իսկ Ռուսաստանում՝ Գենային ինժիներիայի ասպարեզում հայտնի մասնագետ, Ակադեմիկոս Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Բակը: Երկու երկրներում էլ այս առաջարկների հանդեպ գիտնականների արձագանքը միանշանակ չէր, որովհետև դեռ 15-20 տարի

---

մասն է և կողավորված ինֆորմացիա է պարունակում մի սպիտակուցի ամինաթթվային հաջորդականության կամ ռիբոնուկլեյնաթթվի մասին (ՌՆԹ):

առաջ 1000 նուկլեոտիդների նուկլեոտիդային հաջորդականության վերծանումը գրեթե գիտական սխրանք էր համարվում, որի համար միանգամից գիտությունների դոկտորի կոչում կարելի էր ստանալ: Բայց արդեն 1999-թվին ԴՆԹ-ի հաջորդական վերծանումը մասսայական տեխնոլոգիա դարձավ: Իսկ այժմ որակավորում ունեցող լաբորանտը այդպիսի աշխատանքն անում է մեկ օրից էլ քիչ ժամանակում:

Այն ժամանակ գենոմի վերծանման ընդդիմախոսներն առաջադրված խնդիրն անհրապական համարեցին, քանի որ նախ մարդու ԴՆԹ-ն տասնյակ հազարավոր անգամ ավելի երկար է քան վիրուսների ու պլազմիդների ԴՆԹ-ների մոլեկուլը: Երկրորդ հակասող իրողությունն այն էր, որ ըստ հաշվարկների նախագիծը միլիարդավոր դոլլարներ էր պահանջում, որը չէր բավարարի գիտության մյուս բնագավառներին, ըստ որի էլ գենային նախագիծն ամբողջությամբ կարող էր արգելակել գիտության զարգացումը: Եվ վերջապես, եթե այնուամենայնիվ միջոցներ գտնվեին և մարդկային գենը վերծանվեր, ապա արդյունքում ստացված ինֆորմացիան ծախսերը չէր արդարացնի: Օրինակ՝ կարելի է վկայակոչել ԱՄՆ-ի գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ Բոյուս Օլբերտսի անունը, որը 1988թ. հանդես եկավ ցնցող մի հոդվածով: Այն ժամանակ նախագիծը Ռուսաստանում ևս չէր արդարացվում: Սակայն հետո որոշակի ֆինանսավորմամբ Բակի նախագահությամբ այդ ծրագրով գիտական խորհուրդ ստեղծվեց: Այժմ Ռուսաստանում «Մարդու գենոմ»-ի ծրագրով ավելի քան 100 գիտական հանձնախումբ է աշխատում, որակավորում ունեցող ավելի քան 400 հոգանոց գիտական անձնակազմով: Իրենց գոյության առաջին տարիներին միջազգային ու ռուսական ծրագրերը գլոբալ բնույթ էին կրում. հետազոտողները վարժվում էին նոր սարքավորումներին, յուրացնում էին նոր մեթոդներն, ուսումնասիրում էին մուտացիաների հայտնաբերման միջոցները և սովորում էին կլոնավորել մարդկային գեները: 1993-94 թ.թ. նախապատրաստական փուլն ավարտվեց և պարզ դարձավ, որ կարելի է անցնել գենոմի հաջորդական վերծանմանը: Այս ուսումնասիրությունների արդյունքները բա-

ցահայտ են: Դա նշանակում է, թե ԴԵԹ- ի ցանկացած հատվածի նուկլեոտիդային հաջորդականության վերծանումն ավարտելով ցանկացած լաբորատորիա արդյունքներն անմիջապես ուղարկում է տվյալների միջազգային կայան Ամերիկայում կամ Գերմանիայում: Բիոինֆորմատիկայով զբաղվող գիտնականները տվյալների այդպիսի կայաններից ինֆորմացիա են հավաքում իրենց հաշվարկների համար:

Սակայն գենոմը միայն պետական կազմակերպություններում չէ, որ վերծանում են: Այսպես, օրինակ, Ամերիկյան «Selera Genomics» մասնավոր կազմակերպությունը վերծանել է գենոմի զգալի մասը և ստացված արդյունքները կոմերցիոն նպատակներով է օգտագործում:

## Ձարգացող բժշկական գիտությունների հնարավոր օգտակարությունը

Բիոինֆորմատիկայից բացի գոյություն ունի նաև բժշկական գենոմիկան: Կան մարդիկ, ովքեր հիվանդ «գեներ» ունեն: Չափազանց կարևոր է դրանց գտնելը և ճանաչելը: Սա դեպի ախտորոշում և բուժում տանող ճանապարհն է և մարդու համար գենոմիկայի ձեռքբերումների օգտագործման այսօրվա գլխավոր միջոցը: Բժշկական գենոմիկայի օգնությամբ կարելի է նոր դեղեր ստեղծել: Անցնող XX դարի ընթացքում մարդկությունը մոտավորապես 500 տարբեր դեղեր է ստեղծել: Միջին հաշվով տարին հինգ դեղ: Մարդու գենոմի վերծանումից հետո մեծ քանակությամբ նոր դեղերի ստացման լայն հնարավորություն կստեղծվի: Այդ դեղերը կստեղծվեն, որովհետև բազում նոր գեներ են հայտնաբերվել և յուրաքանչյուր նոր գեն իր սպիտակուցի կոդավորումն ունի, իսկ ցանկացած սպիտակուց կարող է ախտաբանության մաս կազմել և ըստ այդմ անհրաժեշտ կլինի համապատասխան ուղղորդում ունեցող դեղի ստացումը: Գիտությանն արդեն հայտնի են մի քանի հազար գեներ<sup>21</sup>, հայտնի է, թե ինչպես են կարգավորվում սպիտակուցային համադրու-

<sup>21</sup> Գենն ըստ էության իներտ նյութ է, որ նման է ձայնագրիչի: Իսկ գիտությանը հետաքրքրողը ժապավենի ձայնագրության սկզբունքով սինթեզվող սպիտակուցն է, որը հետո որոշակի

թյունները և ինչպես են աշխատում նրանց միջոցով սինթեզվող սպիտակուցները: Իսկ սպիտակուցները կողավորող նոր գեների ուսումնասիրությամբ զբաղվող գիտության այս բնագավառը ֆունկցիոնալ գենոմիկա է կոչվում, որը մի պարզ կարգախոս ունի. «ճանաչեցիր կառուցվածքը՝ ճանաչիր նաև կենսագործունեությունը»:

Այս ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունքում կարելի է տարբեր էթնոսների համար դեղեր ստանալ, որոնք տարբեր կլինեն «ըստ ազգային ցուցանիշի»: «Նման հետազոտությունները ոչ միայն հետաքրքրական են, այլև հիմք են ստեղծում ապագա բժշկության համար: Նոր բժշկագիտության ոչ միայն հիվանդությունները բուժելու, այլև դրանք կանխարգելելու համար հնարավորություն կընձեռի, այսինքն՝ մարդը կունենա գենետիկ անձնագիր, որտեղ նշված կլինեն իր գենետիկ դրական և բացասական հատկությունները»<sup>22</sup>:

«Վերջին տարիներին բժշկագիտության մեջ նոր ուղղություն է առաջացել, որ մարդկանց կողմից անվանվել է «բուժում բազմաթիվ անբուժելի հիվանդություններից»: Դա ոսկրուղեղում գտնվող այսպես կոչված բնային ստրոմալ բջիջների ուսումնասիրությունն է: Այս բջիջներին ապահովում են օրգանների ու մկանների վնասված մասերի վերականգնումը: Նրանք բժշկում են ցանկացած վերք, օրգանիզմին անհրաժեշտ՝ ոսկրային, հարթամկանային, լյարդային, սրտամկանային և նույնիսկ նյարդային բջիջ դառնալով վնասվածքի տեղում»<sup>23</sup>:

---

կերպով շրջադարձվում և սկսում է աշխատել: Այսուհանդերձ գոյություն ունի մեկ բնագավառ ևս, որ մի քանի տարի առաջ է սկսել զարգանալ: Նման փորձերի արդյունքում պարզվել է, որ տարբեր ազգությունների պատկանող մարդկանց գենոմը որոշակիորեն տարբերվում է: ԴՆԹ-ի մեջ կարելի է նույնատիպների որոշակի «պատկեր» առանձնացնել, համաձայն որի կարելի է առանձնացնել տարբեր ազգությունների մարդկանց: Տարբեր էթնոսների պատկանող մարդկանց գենոմը նույնական չեն, բայց նրանց միջև եղած տարբերություններն արտակարգ աննշան են, չնայած բացարձակ հավաստի են և դրա համար էլ հնարավոր է համեմատել տարբեր էթնիկական խմբերը:

<sup>22</sup> ժնցՍՈ Ռ ԶՌԶՎՖ, N 5, “ԵՏՁՈ՛ ռՈՒՏսՏՅՈ՛՝ ՎՈՒՓՈՍՈՐՖ Չ ԻպՉՐՈսպ 2001 չՏՊՈ՛” 2001 չ. թՑՐ. 20,.

<sup>23</sup> ժնցՍՈ Ռ ԶՌԶՎՖ, N 8. Կ. հցՅՏՏ ”հՑՐՏՎՈսվօպ թՑՁՏսՏՁօպ ՍսպՑՍՈ՛ Չ թՏՁՐպՎպվՎՏՏ ՎպՊպՓօվպ” 2001չ., թՑՐ. 28.

Բայց ստրոմալ բջիջների պաշարն անվերջ չէ: Դրա համար էլ այնպես է ստացվում, որ օրգանիզմն անվերջորեն, ինքնուրույն կերպով քայքայված բջիջներն արդեն վերականգնել չի կարողանում. կամ խոցված աղբյուրն է շատ մեծ լինում կամ օրգանիզմն է թուլացած լինում, կամ էլ տարիքն արդեն այն չի լինում... Այս իմաստով հարց է առաջանում, թե կարելի՞ է արդյոք հիվանդին օգնել ցիրոզից, ուղեղի կամ այլ բնույթի կաթվածներից ամբողջությամբ բժշկվելու համար: Գիտնականներն այսօր արդեն կարողանում են ստրոմալ բջիջներն ուղղորդել «անհրաժեշտ ուղղությամբ»: Բջջային կենսաբանության այս բնագավառի ձեռքբերումները ստրոմալ բնային բջիջների թերապևտիկ կիրառությունը տեսականորեն անսահման են դարձնում:

### Բնային բջիջներ

Բնային բջիջներն օրգանիզմի բոլոր բջիջների նախնիներն են: Տարբեր պայմաններում նրանք ի վիճակի են փոխակերպվելու ուրիշ բջիջների: Հասուն օրգանիզմի բնային բջիջների մեծ մասը գտնվում է ողնուղեղի մեջ: Ինչպես հայտնի է ողնուղեղն ամենից առաջ արյունաարտադրության մարտահեճադաշտ է: Այն կազմված է բնային բջիջների երկու տեսակից. արյան բջիջների ողջ հայտնի բազմազանությունը ձևավորողներից (այսպես կոչված գեմոպոետիկ ցողունային բջիջներ), և ստրոմալ բնային բջիջներից, որոնց մասին էլ խոսքը լինելու է: Ողնուղեղին մոտ, ոչ մեծ քանակությամբ բնային բջիջներ (այսպես կոչված ցողունային մկանային բջիջներ) կան անմիջականորեն հյուսվածքներում՝ մկանային (միոբլաստներ), ոսկրային (օստեոբլաստներ) և այլն: Արյուն արտադրող համակարգում բնային բջիջներ շատ կան, նրանք ըստ կառուցվածքի պարզ, լավ ուսունմասիրված են, մշտապես թարմացվում են և վաղուց հայտնի են այն միջոցները, որով նրանք արյան բջիջների են վերածվում:

Իսկ ահա ոսկրուղեղի բնային ստրոմալ բջիջների մասին շատ քիչ բան է հայտնի: Գեմոպոետիկայինների համեմատությամբ ոսկրուղեղում նրանք մի-



անգամայն քիչ և առավել բարդ ու երկարակյաց համակարգեր են, որ բավականին հազվադեպ են թարմացվում: Ստրոմալ բջիջների փոխակերպման ուղիները նոր-նոր սկսում են ուսումնասիրվել: Ինչպես վերջին հետազոտություններն են ցույց տվել, արյան բջիջների նախորդների պես ստրոմալ բջիջներն էլ մշտապես շրջանառվում են կաթնասունների արյան հոսքի մեջ:

### Ստրոմալ բջիջները մասնակցում են վնասված հյուսվածքների վերականգնմանը

Ինչպե՞ս է հասուն մարդու առողջ օրգանիզմը վերականգնում օրգանների վնասվածքները: Օրգանիզմը պետք է իրականացնի (և իհարկե իրականացնում է) վնասված հյուսվածքների վերասերումը: Եվ նա այդ ամենը կատարում է բնային բջիջների օգնությամբ: Իզուր չէ, որ Արարիչն Աստված «տեղային պահեստ»-ի (հյուսվածքային բնային բջիջներ) հետ միասին ստեղծել է նաև «պահեստամասերի կենտրոնական շտեմարան»: Ողնուղեղի ստրոմալ բնային բջիջներն օրգանիզմի համապատասխան բաժին ընկնելով՝ ուրիշ տեսակի ցանկացած բջիջների կարող են վերածվել: Կենտրոնական նյարդային համակարգից որևէ անկարգության մասին ազդակ ստանալով, արյունատար անոթներով շտապում են դեպի վնասված օրգանը, այն վերականգնելու համար: Վնասված տեղամաս հասնելով՝ նրանք որոշակի ազդակային մոլեկուլների ներգործությամբ վնասված մասի համապատասխան բջիջների են վերածվում փոխարինելով մեռածներին:

Ողնուղեղի ստրոմալ բջիջներից կարելի է ցանկացած այլ բջիջներ աճեցնել

Դեռ 60-ական թվականներին Ֆրիդենշտեյն<sup>24</sup> իր կոլեգաների հետ կենդանիների վրա կատարած փորձարկումները պարզեց, որ ստրոմալ բջիջներն ի վիճակի են վերածվելու կրճիկային (խոնդրոցիտ), ճարպային (ադիպոցիտ) և ոսկրային (օստեոբլաստ) բջիջների: Այդպիսի ձևափոխումների հատկությունը պահպանվում է նաև մեկ ստրոմալ բջիջ մի խումբ այլ բջիջներ աճեցնելու դեպքում: Այսինքն՝ սկզբունքորեն հնարավոր է ստրոմալ բջիջների մեծ քանակություն աճեցնել, հետո վնասված հյուսվածքների վերականգնման համար հատուկ ազդանշանային նյութի օգնությամբ դրանք ուղղորդել անհրաժեշտ ուղղությամբ:

Ստրոմալ բջիջների աղբյուրները վերականգնողական թերապիայի համար

Այսպիսով, ներքին բջջային պաշարների՝ ողնուղեղի ստրոմալ բջիջների միջոցով առողջ օրգանիզմում վնասվածքների բուժման ունիվերսալ մեխանիզմ գոյություն ունի: Բայց ստրոմալ բջիջների պահեստարանն անհատնում պաշարներ չունի: Ընդարձակ վնասվածքների բուժումից հետո ողնուղեղը «դատարկվում» է, ինչպես նաև տարիքի հետ կապված նշանակալիորեն պակասում է ստրոմալ բջիջների պաշարը: Մարդու ծննդյան պահին, ողնուղեղում 10 հազար արյունաստեղծ ցողունային բջիջն մեկ ստրոմալ բջիջ է բաժին ընկնում: Անչափահասության տարիքում ստրոմալ բջիջներն արդեն տաս անգամ պակասում են: Հիսուն տարեկանում կես միլիոն բնայինին մեկ ստրոմալ բջիջ է հասնում, իսկ 70 տարեկանում ողնուղեղից փորձ վերցնելն ուղղակի անհնաստ է՝ այնտեղ միլիոնավոր բնային բջիջներին ընդամենը մեկ ստրոմալ բջիջ է ընկնում: Այստեղից հարցեր են ծագում՝ ինչպե՞ս վերականգնել վնասված բջիջները գործնականում, թտեղի՞ց վերցնել սեփական ողնուղեղի ցողունային ստրոմալ բջիջների պատրաստուկը, որովհետև պրոբլեմային է նաև այն, որ կոտրվածք ստացած կամ կաթված տարած

---

<sup>24</sup> "ժՈԳՍՈ Ռ ՁՌՉՎՖ", N 5, "ժՏՁՈՂ՝ ռՈՏՍՍՏՆՈՒՎ՝ ՎՈՓՈՍՈՐՖ 2 ԷպՉՐՈՍպ 2001 չՏՊՈ", 2001 չ, թՑՐ. 20.,

մարդու ողնուղեղից վերցնելը և դրանից ստրոմալ բջիջներ ստանալը բավականին երկարատև ընթացք է պահանջում, և գործնականորեն ապարդյուն է: Վերոնշյալ տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ քիչ արդյունավետ ու բարոյապես անընդունելի է նաև դոնորների միջոցով հարցի լուծումը:

Սոտ անցյալում ցնցող ցուցանիշներ հրատարակվեցին. առ այն, որ ստրոմալ բջիջներ կարելի է ստանալ ճարպային հյուսվածքների բջիջներից (ադիպոցիտներից): Ինչպես պարզվեց ադիպոցիտներն այնքան էլ չեն հեռացել իրենց նախնիներից և հատուկ նյութերի օգնությամբ նրանց «ետ դարձնելը» համեմատաբար հեշտ է: Իսկ ահա ճարպային բջիջներ ստանալն արդեն ամենևին էլ բարդ խնդիր չէ: Լիպոսակցիան (ճարպի հեռացումը) արդեն լայնորեն տարածված է քաղաքակիրթ բոլոր երկրներում և էթիկապես մերժելի երևույթ չէ:

Սպասվում է, որ մոտ ապագայում ստրոմալ բջիջների արդյունաբերական աղբյուր կդառնան պորտալարն, ընկերքն ու ճարպային հյուսվածքները:

Մեկ այլ կարևոր հանգամանք ևս գոյություն ունի, այն որ այսօր շատ է խոսվում նաև ոչ թե ստրոմալ, այլ էմբրիոնալ բջիջների մասին: Սրանք մարդկային սաղմից ստացվող բջիջներ են, որոնցից հնարավոր է ավելի քան 2000 տիպի հյուսվածքներ ստանալ:

Միայն թե էմբրիոնալ բնային բջիջների բնագավառում կատարվող ուսումնասիրություններն այժմ դադարեցված են: Պատճառներից մեկն այն է, որ դոնորի էմբրիոնալ բջիջների հեռացումը ցավոք երբեմն չարորակ ուռուցքների առաջացումով է ավարտվում: Մյուս պատճառն էթիկական է: Էմբրիոնալ բջիջների հիմնական աղբյուրը բժշկական արքորտներն են: Կաթոլիկ և Ուղղափառ եկեղեցիները, կրոնական տարբեր համայնքներ, հասարակական տարբեր կազմակերպություններ՝ բոլոր նրանք, ովքեր արքորտի դեմ են պայքարում, մեծապես խոչընդոտում են, կոչ անելով, արքորտի հետ արգելել նաև էմբրիոնալ բնային բջիջների կիրառմամբ կատարվող բուժումները: Հիմնականում այս մեթոդով կատարվող բուժումների նպատակով են արվում նաև մարդկային սաղմի կլոնավորման փորձերը: Այո, էթիկական խնդիրները «վատ»

ծառայություն են մատուցում էմբրիոնալ բջիջների ուսումնասիրության հարցում, բայց և միաժամանակ գիտական նոր ուժեր են կյանքի կոչում հասուն օրգանիզմի ստրոնալ բջիջների ուսումնասիրության բնագավառում:

Ի տարբերություն էմբրիոնալների, ստրոնալ բնային բջիջները բնության կողմից ստուգված, օրգանիզմի սեփական վերականգնողական պաշարներն են: Սեփական ստրոնալ բջիջների ինունային պոկման հետ կապված հանդգնության խնդիր չկա, ինչպես նաև նվազագույն է նրանց չարորակ փոխակերպումների հնարավորությունը:

«Ստրոնալ բջիջների կիրառությունն անթերի է նաև բարոյաէթիկական տեսակետից: Ահա թե ինչու ստրոնալ բջիջները գալիք հարյուրամյակի վերականգնողական բժշկության հիմքը կարող են դառնալ»<sup>25</sup>:

### Ի՞նչ է կլոնավորումը գիտության տեսակետից

Կլոնավորումը դադարել է հեռավոր ապագային պատկանող խնդիր լինելուց: Գենային ինժեներիայի այդ մեթոդը մեր կյանքի իրական փաստերից է դարձել: Մարդու կլոնավորումը հավանաբար իրականություն դառնա մոտ ժամանակներում: Այդ ուղղությամբ կատարվող աշխատանքների մասին զանգվածային լրատվամիջոցներով արդեն հայտարարություն է եղել ամերիկյան ու անգլիացի գիտնականների կողմից: Բրիտանական պարլամենտը վերջերս օրինագիծ է ընդունել, որով թույլ է տրվում սաղմերի օգտագործմամբ մարդկային օրգանների կլոնավորումը:

Որոշ հավաստի աղբյուրների<sup>26</sup> վկայության համաձայն պարզվում է, որ XIII դարում արդեն, եբրայական կաթալիստական տեքստերում քննարկվում էր տրված չափանիշներով արհեստական մարդ ստանալու հնարավորությունը: Իսկ ավելի առարկայական առումով այս երևույթը վերոնշյալ պատմական ընթացքով աննախընթաց զարգացում է ապրել մինչև մեր օրերը: Նախկինում

---

<sup>25</sup> ԺՈՅՍՈ Ռ ԶՈՋՎՖ, N 8, Կ. հցչՏճ, "հՅՐՏՎՈՍՎՕԿ թՅՁՏՍՁՕԿ ՍսպՅՍՈ Զ թՏՁՐԿՎԿՎՎՏճ ՎԿՊԿՓՕՎԿ", 2001 չ., թՅՐ. 28.

<sup>26</sup> ԺՈՅՍՈ Ռ ՐԿՍՈՆՆՐ, N12, Զ. կՐՈՁՏՅՏՐՏՁՈ, ըԿՐԿՅՈՑԿԿ ՎԳՁՎՈՎ, 1998չ. թՅՐ. 33.

սեռական բջիջների վրա աշխատող և հաջողության հասած ու արդյունքում կլոնավորման տեխնոլոգիան ստացած մարդիկ՝ այժմ արդեն սովորել են օրգանիզմի մարմնական (սոմատիկ) բջիջները փոխակերպել սեռականի: Այդպիսով, նրանք սոմատիկ բջիջը բաժանման են ենթարկում սեռականի նման: Եվ այդպիսի բջիջ մեջ դրվում է դոնորից վերցված ԴՆԹ-ն, որի արդյունքում հնարավորություն է ստեղծվում կառուցել այն օրգանիզմը, որից վերցված է տվյալ գենետիկ ինֆորմացիան: Այս մեթոդով մարդկային օրգանիզմը կարող է կրկնօրինակվել, որի համար մեկ սեռի առկայությունը կարող է լիարժեք բավարար պայման լինել: Սակայն պետք է նկատել, որ սա օրգանիզմի երկրորդ անգամ ստեղծում չէ, այլ՝ կրկնօրինակում: Եվ սաղմնային զարգացման բոլոր փուլերն անցնելու համար մայրական օրգանիզմ է պահանջվում: Այսօր դրան մեխանիկական ու արհեստական ճանապարհներով փոխարինողներ դեռևս չկան: Այդ պատճառով էլ կլոն աճեցնելու համար կին է հարկավոր: Եվ ոչ միայն ուղղակի կին, այլ հղի կին: Այնպես, որ որդեծնության պատրաստ նրա օրգանիզմն է միայն պիտանի երեխա կրելու: Հղի կնոջ օրգանիզմից հեռացվում է նրա սեփական, դեռ շատ թույլ զարգացած սաղմը, որը փոխարինվում է կլոնավորման նպատակների համար պատրաստված ուրիշով: Նման դեպքերում, այդ եղանակով հեռացված պտուղն, իհարկե, վախճանվում է: Այդպիսի կանանց համար «շինծու մայր» (Surrogate Mother) հատուկ անվանում են մտածել:

Կլոնավորման իրականացման նախապատրաստական փուլերի համար զիգոտների ու էմբրիոնների մեծ քանակություն է պահանջվում: Նրանք բոլորն սպանվում են հանուն մեկ ընտրյալի կյանքի ապահովման: Իր հերթին այդ ընտրյալն էլ կարող է շատ կարճ ապրել: Նրա ստեղծման նպատակը կարող է որևէ հետազոտության կամ էլ կոնկրետ պատվիրատուի անհրաժեշտ ինչ-որ կենսաբանական նյութերի ստացումը լինել: Այդպիսի «սարքովի» մարդն սպանվում է, որպեսզի իրենից ավագների համար (ովքեր արդեն 50 կամ 70 տարեկան կարող են լինել) վերցվեն նրա օրգանիզմի օգտակար մասերը:

Այսպիսի դեպքերում զիգոտը կարող է մոր օրգանիզմում չդրվել: Մի քանի օր լաբորատոր արհեստական պայմաններում ապրելով՝ այդպիսի

զիգուտը մահանում է: Նրանից վերցնում են անհրաժեշտ քիմիական ու բիոքիմիական նյութերը: Ի դեպ այն իր մեջ **ստրոմալ բնային բջիջների** (այս բջիջների, նրանց դերի նշանակության, առաջացման աղբյուրների մասին տես սույն աշխատության էջ 30-34) հարուստ պաշարներ է պարունակում և, հակառակ էթիկական կողմին, այժմ կլոնավորման փորձերը հիմնականում կատարվում են բուժման նոր մեթոդների համար կիրառելի այս բջիջների ստացման նպատակով:

Այս եղանակով մարդկային էակները, որոնք տարիքով ավելի մեծ են, մահվան պատճառ են դառնում՝ զարգացման ամենավաղ փուլերում գտնվող իրենցից կրտսերների համար: Նման դեպքում, ավագ անհատները շահագործում են իրենցից կրտսերների կատարյալ անպաշտպանությունն ու անօգնականությունը: Վերջիններս անպաշտպան են իրավաբանական, բարոյաէթիկական, քաղաքական, հոգեբանական և այլ տեսակետներից: Այդպիսի սպանություններն իրականանում են առավել ուժեղների եսակենտրոն հետաքրքրությունների բավարարման համար՝ ի հաշիվ առավել թույլերի կենսական ուժերի խլման և օրգանիզմի կործանման: Այսպիսով, հենց գիտական տեսակետից արդեն չարաշահումների հնարավորություններն այստեղ բազմաթիվ են, սակայն պատվաստաբանության խնդրի լուծման համար կլոնավորման ուրիշ եզր ևս կա, որը էթիկական տեսակետից առավել ընդունելի է: **Դա պատվաստման համար անհրաժեշտ նյութի ստացումն է վերոնշյալ, այսպես կոչված, բնային ստրոմալ բջիջներից** (կլոնավորման ճանապարհով այս բջիջների ստացման համար աղբյուր կարող են հանդիսանալ տարբեր օրգանական նյութեր, այդ մասին տես էջ 32-ի վերջին պարբերությունը):

## ԳԼՈՒԽ Դ

### Յոգու գոյության մասին գիտաաստվածաբանական վկայություն

Յուրաքանչյուր մարդ անկրկնելի անհատականություն է

Հասուն ձվաբջիջը ֆալոպյան փողի մեջ ընկնելով, նրա միջով մի քանի օրվա ընթացքում դանդաղ իջնում է դեպի արգանդ և հանդիպում է սպերմատոզոիդին: Սպերմատոզոիդի կորիզը ներս է թափանցում և ձվաբջջի ներսում բարդ շարժում կատարում: Նախնիներից հոր և մոր միջոցով ստացած գենետիկական ինֆորմացիա պարունակող ձվաբջջի և սպերմատոզոիդի կորիզները միաձուլվում և ձևավորում են նոր կորիզը, որը համակցված գենետիկ նյութ է՝ քրոմոսոմների կրկնակի հավաքածուով: Այժմ ոչ միայն կարող ենք ասել, թե ձևավորվածն առանձին օրգանիզմ է, այլև պարզապես ուրիշ կերպ մտածելու իրավունք չունենք: Այդ օրգանիզմը բացառիկ, այս աշխարհում միայն իրեն յուրահատուկ գենետիկա ունեցող անհատականություն է: Հավանականության տեսության համաձայն, գենետիկորեն միանման երկու օրգանիզմների գոյություն ունենալու հավանականությունը չնչին է: Յուրաքանչյուր քրոմոսոմի մեջ գեների քանակն ու հաջորդականությունը կրկնվել չի կարող. նրանց թիվն ու փոփոխական դիրքը միշտ բարձր են լինում այն օրգանիզմների ունեցած թվից, որոնք երկրագնդի վրա կարող են հայտնվել շատ ու շատ, հարյուր միլիոնավոր տարիների ընթացքում:

Որոշ կարծիքների համաձայն, սաղմը մոր օրգանիզմի մի մասն է: Դա այդպես չէ բազմաթիվ պատճառներով: Առաջին հերթին, նա գենետիկորեն տարբեր է մորից: Երկրորդ՝ պտղապարկն արգանդի պատերին չի հավում, որովհետև պտղապարկային խոչընդոտ գոյություն ունի, որը մոր հիվանդությունների մեծամասնությանը թույլ չի տալիս թափանցել իր միջով: Որպես օրենք, երեխան որևէ հիվանդությամբ կարող է վարակվել միայն ծնվելուց հետո: Մոր արյունն իր կարգով ու խմբով սաղմի ներսը թափանցել չի կարող: Սաղմը մորից տարբերվում է իր մարմնի յուրաքանչյուր բջջի գենետիկայի

համաձայն: Մոր օրգանիզմը տաքացնում է նրան, պաշտպանում, դուրս է հանում ածխաթթու գազը և տալիս թթվածին ու կառուցվածքային աղյուսիկներ, որոնցից պետք է կառուցվեն նրա սպիտակուցները: Իսկ ահա դրանք իր յուրաքանչյուր բջջի մեջ դասավորելը՝ սաղմն անում է իր սեփական անկրկնելի գենետիկական ծրագրով:

«Նյու-Յորքի բժիշկ Փոլ Ռոքուելն այսպես է նկարագրում ութ շաբաթական սաղմին.

- Սաղմը երկու ամսական է: Նա լրիվ ձևավորված է, տարբերվում է սեռը, ունի կոնաձև մատներ, նրա մաշկը համարյա թափանցիկ է, իսկ մատների ծայրերին հեշտությամբ կարելի էր տարբերել բարակ զարկերակներն ու երակները:

Ամերիկացի բժիշկ Էրիտ Խանտը գրում է.

-Բեղմնավորված ձվաբջիջը հենց այնպես, առանց սեփական բնութագրի, բջջային զանգված չէ: Այդ փուլում նա նման չէ ոչ ծաղկի կոկոնի և, առավել ևս, կենդանական ցեղի ինչ-որ սաղմի: Այն ամբողջությամբ և բացարձակապես մարդկային էակ է: Նրա կյանքն այնպիսին է, ինչպիսին նորածնինն է, երեխայինը, պատանունը և հասուն մարդունը»<sup>27</sup>: Հետևաբար անկասկած սպանություն է հղիության արհեստական ընդհատումից գրեթե ոչնչով չտարբերվող, կլոնավորված սաղմերի ոչնչացումը բժշկական տարբեր նպատակներով:

Թեև խավարամիտ մարդուն կարող է թվալ, թե այդ չնչին արարածը, որ իր զարգացման սկզբնական փուլում քորոցի գլխիկից էլ փոքր է, դեռ չի ապրում, որ նա չի մտածում, որ նրա մեջ դեռ չկան այն գծերը, որոնք հետո են ի հայտ գալու, այդուհանդերձ ի՞նչն է հետո ըստ էության փոխվում նրա կյանքի ընթացքում: Բավականին քիչ բան: Ինչ-որ չափով կարող է փոխվել նրա հասակը, նրա մաշկի գույնը, մկանների ծավալը: Բայց ամենակարևորը, որ նրա գենետիկ էությունն է, անփոփոխ է մնում:

---

<sup>27</sup> “ԻՊՏՐՏՉՖպ” N 1, ԼՐՈՎՈ կոՉսպվՍՏ, “ԿՏջվՈռ ըՉՏռ ՏՐչՈվՈջվ”, 1992 չ. թՑՐ. 45.



Ողնաշարավոր կենդանիների և մարդու սաղմերը զարգացման վաղ շրջաններում նման են լինում: Այս հիմքի վրա է ձևավորված սաղմնային նմանության օրենքը: Բայց նմանությունը նույնություն չի նշանակում: Օրինակ՝ մարդու սաղմը նկատելի խռիկային ճեղքվածքներ է ունենում: Իրականում դրանք խռիկային գրպանիկներ են, որոնց ճակատագիրը մարդու մոտ միանգամայն այլ է, քան ձկների մոտ: Բայց փաստը մնում է փաստ, որ սաղմերը վաղ շրջանում նման են: Կենսագենետիկական օրենքը հայտարարում է, թե անհատական զարգացումը պատմական զարգացման կարճատև կրկնողությունն է: Բայց սրանից ամենևին էլ չի հետևում, թե մոր համար երեխան իր որովայնում անուշադրության է արժանացած ճիշտ այնպես, ինչպես շերեփուկը մոտակա ջրափոսում: Եվ հենց կենսագենետիկական օրենքի համաձայն, ամեն ինչ պարտադիր չէ: Հիմնականում ավելի քան պարզ է այն, որ մարդկային սաղմի մոտ ամենևին էլ չեն նկատվում որոշ այնպիսի գծեր, որոնք կան կապիկների մոտ: Մարդու ձեռքի բութ մատը, ի տարբերություն կապիի, հակադրված է մնացած չորս մատներին, մարդկային սաղմի ձեռքերը ոտքերից երկար չեն, ի տարբերություն կապիի: Վերոնշյալ նմանությունները հաշվի առնելով՝ մարդկային սաղմի անկրկնելի յուրահատկության մասին այսպես է արտակհայտվել Ռուսաստանի Ֆեդերացիայի Առողջապահության Կարդիոհամալիրի փորձարարական կարդիոլոգիայի Ինստիտուտի տնօրեն Բժշկական գիտությունների Ռուսական ակադեմիայի ակադեմիկոս Վ. Սմիրնովը. «Անգամ սաղմնային նմանությունների օրենքն ընդունելով, ամենևին էլ ճիշտ չէ ասել, թե մարդկային սաղմը կարելի է որևէ կենդանու սաղմի հետ նույնացնել: Դրանք բացարձակ տարբեր կարգեր են, գենետիկորեն իրարից բաժանված բացարձակ տարբեր խմբեր»<sup>28</sup>:

---

<sup>28</sup> Թ. հՎՈՐՎՏՉ, ԵՎՈՐՈՌՈՍՏՅՈՒՆՆԵՐԻ ՎՈՒՄՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՉ, ԾՏՐԱՉՈՒՄ, 2000 չ. թՑԸ.51.

Մարդն Աստծո կողմից արարված աստվածապատկեր հոգեղեն է

Չնայած բոլոր մարդիկ բնական ծնունդի միջոցով ծնողներից են առաջանում, սակայն, այնուամենայնիվ, Աստված է նաև յուրաքանչյուր մարդու Արարիչը: Տարբերությունը սակայն այն է, որ Նա Ադամին ու Եվային ստեղծեց անմիջականորեն, իսկ նրանց բոլոր հետնորդներին ստեղծում է միջամտությամբ՝ իր օրհնության զորությամբ, որը Նա մեր նախնիներին շնորհեց մեկ անգամ արարման պահին՝ ասելով. **«Աճեցէք եւ բազմացարուք եւ լցրէք գերկիր...»** (Ծննդ. 1. 28): Եվ այս խոսքը, երբևէ ասված լինելով որպես Ամենակալի խոսք, ուժի մեջ է մինչև հավիտյանների կատարումը: Ըստ այսմ էլ Սբ. Գրքում ասվում է, որ Աստված ոչ միայն մեր նախահայրերին է ստեղծել, այլ նաև.

ա) **«Արար ի միոջէ արեւնէ զամենայն ազգս մարդկան՝ բնակել ի վերայ ամենայն երեսաց երկրի... (Գործք 17. 26): Նա տայ ամենայնի կեանս և շունչ և զամենայն ինչ»** (հմր 25):

բ) Նա է ստեղծում ամեն մարդու: **« Ձեռք Քո արարին, եւ ստեղծին զիս»**, - բացականչում են Հոբն ու Սաղմոսերգուն (Հոբ 10.8, Սաղմ. 118.73): **«Հոգի աստուածեղեն է, որ արար զիս...»** (Հոբ 33.4), **«Ահա Դու, Տէր, ծանեար զյետին իմ եւ զառաջին իմ, դու ստեղծեր զիս եւ եդիր զձեռն Քո ի վերայ իմ»** (138.5):

Աստված ինքն իսկ Երեմիային ասում է. **«Մինչչեւ ստեղծեալ էր զքեզ յորովայնի՝ գիտեմ զքեզ, եւ մինչչեւ ելեալ էիր յարգանդէ սրբեցի զքեզ, մարգարէ ի հեթանոսս եդի զքեզ»** (Երեմիա 1.5):

գ) Աստված ստեղծում է մարդու մարմինը. **«Մորթ եւ միս զգեցուցեր ինձ, ոսկերօք եւ ջլօք հանեար զիս»** (Հոբ 10-11), **«Ոչ թաքեալ ոսկր իմ ի Քէն զոր արարեր ի ծածուկ... Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա...»** (Սաղմ. 138.15, 32.15) այդ մասին այսպես են արտահայտվում, առ Աստված կանչելով միևնույն սրբազան հեղինակները:

դ) Աստված է ստեղծում մարդու հոգին, որն է արտահայտվում ժողովողում. «Եւ դարձցի հողն յերկիր, որպէս եւ էրն, եւ հոգին դարձցի առ Աստուած, որ ետ զնա» (Ժող. 12.7):

Եսայի մարգարեն՝ «Այսպէս ասէ Տէր Աստուած՝ որ արար զերկինս եւ կանգնեաց զնա, որ հաստատեաց զերկիր եւ որ ի նմա, որ ետ շունչ մարդկան, որ ի վերայ նորա, ոգի ամենեցուն որ կոխեն զնա...» (Եսայի 42.5 հմմ. 57.16):

Ձաքարիա մարգարեն՝ «Տէր՝ որ ձգեաց զերկինս եւ արկ հիմունս երկրի, և հաստատէ զոգի մարդոյ ի նմա ...» (12.1):

Հին կտակարանյան այս իսկ հավատամքն իր ողջ պարզությամբ արտահայտում է Եբրայեցի ազնվաբարո կինը, երբ Անտիոքյան հալածանքների օրերին, իր երեխաներին համոզելով մահը ճաշակել հանուն հավատքի, նրանց ասում էր. «Զգիտեմ, որպէս բնաւ դուք յարգանդիս երեւեցարուք, եւ ոչ ես ինչ զոգիսդ կամ զկեանսդ ձեր շնորհեցի: Եւ ոչ զկերպարանսդ ձեր իւրաքանչիւր ես նկարեցի, եւ ոչ զհասակսդ ձեր ծնեալ եւ սնուցեալ: Այսուհետեւ ես իմ ինչ՝ ոչ համարեցայց, այլ որ աշխարհի արարիչն է, որ ստեղծ զծնունդս մարդկան զկեանսդ եւ զոգիսդ ի գալստեան իւրում, իւրով ողորմութեամբք ի ձեզ դարձուցանէ» (Բ Մակար. 7. 22- 24):

Այս մեկնակետը հիմք ընդունելով, որպէս Աստծո խոսքի քարոզիչն ու Հիսուսի առաքելության շարունակողը Սբ. Եկեղեցին ուսուցանում է, որ. «Հոգին մարմնի հետ միաժամանակ է ստեղծվում, բայց ոչ ուղղակի սաղմի հետ, որից ձևավորվում է մարմինը, նա այդպես չի ստանում նաև գոյակցությունը, այլ դա լինում է Արարչի կամքով, և հոգին այդ իսկ պահին գտնվում է մարմնի մեջ նրա ձևավորմանը համընթաց<sup>29</sup>»:

---

<sup>29</sup> Գրիգոր Տաթևացի՝ Գրիք Հարցմանց, Կ. Պոլիս, գլուխ ԺԶ, էջ 251- 260, տես սույն գլխի վերջում:

Իսկ ինչպե՞ս պետք է հասկանալ հոգիների այդ արարումը<sup>30</sup>: Ընդհանրապես Եկեղեցիներում ձևավորված տեսակետները<sup>31</sup> համահունչ չեն և բոլորի համար ընդունելի որոշակիացում գոյություն չունի, բայց, այդ իսկ տարբեր տեսակետների վրա հիմնվելով կարող ենք ասել, որ արարումը կատարվում է անմիջականորեն, որ Աստված ինչպես հոգիներն, այնպես էլ մարմիններն

---

<sup>30</sup> Տես. Ժ. ը. ԾՈՍՈՐՈՌ պտղիՍՏտ ԹՈՎՈՓՍՈՒ, կՐՈՉՏՐԱՈՉՎՍ-ԺՏՇՎՈՑՈՒՓԱՐՍԱԿ ըՏՇՏՐԱՏՉՈՒԿ, ՉՏՎ Ի. (ՎՏՉՏԱԿ ՈՇՊՈՎՈՒԿ), ԻՈՎՍՑՏԱԿՅԱՐՈԳՐՇ, 1856Շ. «79 կՐՏՈՐԱՏՉՊԱՎՈՒԿ ՍՈՉՊՏՇՏ ՖԱՍՏՉՂԱՍՈ Ռ Չ ՖՈՐՑՎՏՐՑՈՒ ՏՐՏՈՐԱՏՉՊԱՎՈՒԿ ՊԳՔ, ՐՑՐ. 338-339.

Կարող են հարցնել, թե արդյոք ինչ է նշանակում, հոգիների արարում ծնողների հոգուց, որը մեզ համար բացարձակապես անբացատրելի է, ըստ այնմ, որ մարդկային հոգին պարզ արարած է:

Ծնողների հոգուց մարդու հոգու արարման կարծիքն ընդունելով, մենք հենց դրանով բնականորեն ժխտում ենք.

ա) այն կարծիքը, թե հոգիները ծնողների սաղմից են առաջանում, որից էլ առաջանում են նաև մարմինները: Սա այն կարծիքն է, որ թույլ է տալիս հոգու նյութականության մասին տեսակետը, համաձայն որի, այն մահկանացու կլինի ինչպես մարմինը: (Այս կարծիքն ունեին Լյուցիֆերական հերետիկոսները, (Augustin. haeres. LXXXI; Genad. de dogm. eccles. c. XVI).

«Եթե հոգին էլ, ասվում է Ուղղափառ, Կաթոլիկ և Արևելյան ուղղափառ եկեղեցիների վարդապետության մեջ, առաջանալիս լիներ միևնույն սաղմից, որից և առաջանում է մարմինը, ապա նրանք միասին էլ կմեռնեին»: (Վ. 1, ՏՑՉ. ՎՈ ՉՏՈՐ. 28))

բ) նաև այն տեսակետը, թե հոգիներն ինքնուրույնաբար են առաջանում ծնողների հոգուց, ինչպես մարմինները մարմիններից: Այս կարծիքն էլ թույլ է տալիս հոգու բաժանելիությունը և հետևաբար նյութականությունն ու մահկանացությունը

գ) և վերջապես այն կարծիքը, իբր Աստծո կողմից մարդկային հոգիները ոչնչից են ստեղծվում և Աստծո կողմից ուղարկվում մարմինների մեջ: Սա անհամատեղելի է բնական ծնունդի միջոցով ծնողներից երեխաներին փոխանցվող աղանակյալ մեղքի մասին Ուղղափառ եկեղեցու վարդապետության:

<sup>31</sup> Տես. Ժ. ը. ԾՈՍՈՐՈՌ պտղիՍՏտ ԹՈՎՈՓՍՈՒ, կՐՈՉՏՐԱՈՉՎՍ-ԺՏՇՎՈՑՈՒՓԱՐՍԱԿ ըՏՇՏՐԱՏՉՈՒԿ, կՐՏՈՐԱՏՉՊԱՎՈՒԿ ՍՈՉՊՏՇՏ ՖԱՍՏՉՂԱՍՈ Ռ Չ ՖՈՐՑՎՏՐՑՈՒ ՏՐՏՈՐԱՏՉՊԱՎՈՒԿ ՊԳՔ, ՉՏՎ Ի. (ՎՏՉՏԱԿ ՈՇՊՈՎՈՒԿ), ԻՈՎՍՑՏԱԿՅԱՐՈԳՐՇ, 1856Շ. «79, ՓՑՐ. 338.

«Կաթոլիկ եկեղեցին, հիմնվելով Սբ. Զերոնիմոսի վարդապետության վրա վկայում է, որ յուրաքանչյուր մարդ իր մարմնով ու հոգով ձևավորվում է մոր որովայնում, բոլորի Արարչի կողմից... Զերոնիմոսը հարցնում է. «Որտեղի՞ց բոլոր մարդիկ հոգի ունեն: Մի՞թե ծնողներից..., թե նրանց հոգին առաջանում է այնպես, ինչպես որ ուսուցանում է եկեղեցին՝ հիմնվելով Փրկչի այն խոսքի վրա, որ ասում է. «**Հայր Իմ մինչեւ գայժմ գործէ, եւ ես գործեմ**» (Յովհ. 5.17), Չաքարիայի այն խոսքի վրա թե. «**Տեր՝ որ ձգեաց գերկինս եւ արկ հիմունս երկրի, և հաստատէ զոգի մարդոյ ի նմա...**» (Ձաք. 12.1) և Սաղմոսերգուի խոսքի համաձայն, թե. «**Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա...**» (Սաղմ. 32.15), թե Աստված՝ Ում ցանկությունն արդեն գործ է, և Ով երբեք չի դադարում Արարիչ լինելուց անընդհատ է արարում: Եկեղեցու մյուս վարդապետները ևս իրենց գրվածքներում ուսուցանում են, որ մարդկային հոգիներն Աստծո կողմից են արարվում այդ թվում Ամբրոսիոսը, Եփրեմ Ասորին, Կյուրեղ Երուսաղեմացին և այլք: Համաձայն կաթոլիկ եկեղեցու վարդապետության, չնայած մարդկային հոգիները գոյության են կոչվում արարման միջոցով, բայց քանի որ նախածնողների մեղքի վարակը ծնողների միջոցով է նրանց փոխանցվում, ուրեմն Աստված այն (հոգին) ոչնչից չի արարում, թե չէ այդ լինել չէր կարող:

արարում է **«Աճեցէք եւ բազմացարուք** » (Ծննդ, 1.28) այն օրինության ուժով, որ տվեց մեր նախնիներին դեռ ամենասկզբում...

Եկեղեցու առաջին վարդապետները կրկնում էին, թե մեր հոգիների արարման գաղտնիքը<sup>32</sup> միայն Աստծուն է հայտնի:

Իսկ ի վերջո, ե՞րբ են ստեղծվում մարդկային հոգիներն ու միանում մարմիններին: Որպես նյութական իրողություն, մարմնի ձևավորումը մոր որովայնում տեղի է ունենում աստիճանաբար: Հոգին, աննյութական լինելով, պարզապես արարված է և արարվել կարող է միայն ակնթարթորեն: Եվ իսկապես, եկեղեցու ուղղափառ դավանության համաձայն հոգին Աստծո կողմից արարվում ու մարդուն տրվում է **«այն ժամանակ, երբ մարմինը ձևավորվում և արդեն ընդունակ է դառնում նրա ընդունմանը»**<sup>33</sup> (ԿՐՈՉ. ՌԻՏՉ. փ. 1, ՏՏՉ. վՈ ՉՏՈՐ. 18): Այսպես էին ուսուցանում նաև եկեղեցու առաջին հայրերը՝ Կյուրեղ Ալեքսանդրացին, Օգոստինոսը և այլք՝ հիմնվելով Սուրբ Գրքի այն հատվածների վրա, որոնցից պարզ է դառնում, որ երեխան նախքան ծնունդը, դեռևս մոր որովայնում, հոգի է ունենում: Օրինակ՝ Ռեբեկայի մասին ասվում է. **«Եւ խաղային մանկունք ի նմա** » (Ծննդ. 25.22), Սբ. Եղիսաբեթը կանգնելով Սբ. Կույսի առաջ՝ ինքն իր մասին ասում է. **«Ձի ահաւասիկ իբրեւ եղեւ ձայն ողջունի քո յականջս իմ, խաղաց ցնծալով մանուկս յորովայնի իմում»** (Ղուկ. 1.44): Այստեղ նկատողության արժանի է այն, որ Մարիամը Եղիսաբեթին այցելեց ավետունից անմիջապես հետո, երբ պտուղը Եղիսաբեթի որովայնում թերևս վաղ սաղմնային վիճակում էր գտնվում: Այդ մասին է վկայում նաև Երեմիա մարգարեն ասելով. **«Մինչչեւ ստեղծեալ էր զքեզ յորովայնի՝ գիտեմ զքեզ, եւ մինչչեւ ելեալ էիր յարգանդէ սրբեցի զքեզ, մարգարէ ի հեթանոսս եդի զքեզ»** (Երեմ. 1.5):

---

<sup>32</sup> Սա անբացատրելի է ճիշտ այնպես ինչպես բացարձակորեն անբացատրելի է այն, որ հայտնության համաձայն, Աստված՝ մաքրագույն Հոգի լինելով, իր էությունից կարող է ծնել Որդուն և բխել Սուրբ Հոգին առանց որևէ տեսակի բաժանման ենթարկվելու:

<sup>33</sup> Տես. Ժ. ը. ԾՈՍՈՐՈՒ պտՌԻՍՍՍ ԹՈՎԻՓՍՈՒ, ԿՐՈՉՏՐՈՒՉՎՍ-ԺՏԿՈՑՈՒՎԱՐՍԱԿ ըՏԶՏՐՈՍՉՈՒԿ, ՉՏՎ Լ.(ՎՏՉՏԱԿ ՌԶՊՈՎՈՒԿ) ԻՆՎՍՏՈՒՅԱՐՈՂՈՐԸ, 1856ջ. «79 կՐՏՈՐԱՏՉՊԱՎՈՒԿ ՍՈՉՊՏԶՏ ՎԱԿՏՉՎՍՈ Ռ Չ ՎՈՐՑՎՏՐՑՈՒ ԽՐՏՈՐԱՏՉՊԱՎՈՒԿ ՊԳՔ, ՐՑՐ 339.

Ուղղափառ եկեղեցու վարդապետության համաձայն, մարդը «կազմված է աննյութական՝ իմանալի հոգուց և նյութական մարմնից<sup>34</sup>», և այս ուսուցումը բխում է ինչպես Հին, այնպես էլ Նոր Կտակարանից: Հին Կտակարանում Մովսեսը, մարդու ծագումը նկարագրելով, նրա մեջ պարզ կերպով տարբերակում է երկու մասեր<sup>35</sup>, մեկը, որ հողից է արարվում, և երկ-

<sup>34</sup> Տես. նույն տեղում, «80 հՏրՑՈՉ փպսՏՉպՍՈ, րՑՐ. 340.

<sup>35</sup> Տես նույն տեղում, րՑՐ. 341-343:

Սուրբգրային մեջբերումներից երևում է, որ այնտեղ մարդուն երբեմն վերագրվում է մարմին և շունչ ( ψυχη), իսկ երբեմն էլ մարմին և հոգի (το πνευμα): Նշանակում է հոգին և շունչն ըստ էության միևնույն մասի տարբեր անվանումներն են: Որպես այս բանի հաստատում այլ օրինակներ ևս կարելի է բերել: Փրկիչը հանուն մարդկային ցեղի իր մահվան ժամանակ հոգու և մարմնի բաժանումը կանխազգալով, ասում էր. «Որպես զիտ զիս Հայր, զիտեմ եւ ես զՀայր. եւ զանձն (տիւ փսչիւն մօս) իմ դնեմ ի վերայ ոչխարաց: Վասն այնորիկ սիրտ զիս Հայր իմ, զի ես դնեմ զանձն իմ, զի միւս անգամ առից գնա» (Հովհ. 10.15,17): Եվ խաչի չարչարանքներից առաջ Գեթսեմանիի պարտեզում իր աշակերտներին ասաց. «Տրտում է ոգի իմ մինչեւ ի մահ (ի փսչի մօս)» (Մատթ. 26.38): Իսկ հենց մահվան պահին խաչի վրա. «Եւ կարդաց Յիսուս ի ձայն մեծ եւ ասէ, Հայր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի Իմ.» (Ղուկ. 23. 46) (տօ πνευμα մօս), և Ավետարանիչներն այս պահը նկարագրելով, արտահայտվում են. «Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց ի ձայն մեծ եւ արձակեաց զոգի» (Մատթ. 27.50), կամ . «Եւ խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զոգին (տօ πνευμα)» (Հովհ. 19.30): Սբ. Պողոսը, Եվտիքես անունով պատանուն հարություն տալով՝ ներկաներին ասաց. «Մի՛ խռովիք, քանզի հոգի սորա ի սմին է» (Գործք 20.10), իսկ Սբ. Ղուկասը Հայրուսի միամորիկ դստերը Փրկչի կողմից տրված հարությունը նկարագրելով՝ ասում է. «Եւ դարձաւ ոգի նորա, եւ կանգնեցաւ վաղվաղակի» (Ղուկաս 8.56):

Եհիտ է, Սբ. Պողոսը երկու արտահայտություններ էլ ունի, որոնցում «ոգին» հստակորեն տարբերակվում է «հոգուց», և մարդուն վերագրվում է «ոգի», «հոգի» և «մարմին»: Առաջին արտահայտությունը գտնվում է Եբրայեցիներին ուղղված թղթում. «Ձի կենդանի է բանն Աստուծոյ, եւ ազդող եւ հատու, քան զամենայն սուր երկսայրի, եւ անցանէ մինչեւ ցորոշումն շնչոյ եւ ոգւոյ եւ յողից եւ ուղղոյ, եւ քննիչ է մտաց եւ խորհրդոց սրտից» (Եբր. 4.12): Մյուսը թեսաղոնիկեցիներին ուղղված թղթում է. «Եւ ինքն Աստուած խաղաղութեան սուրբս արասցէ զձեզ յամօրէնս. եւ բովանդակ ձեր ոգի և շունչ եւ մարմին անարատ ի գալուստ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պահեսցի» (Ա թես. 5.23): Բայց քանի որ Աստծո խոսքն ինքն իրեն հակասել չի կարող, եթե նա այդպես բազմակողմանիորեն և այդպես պարզ ասում է մարդու մեջ միայն երկու մասերի գոյության մասին, եթե Պողոս առաքյալն ինքն այդքան առանձնակիությամբ մարդուն միայն երկու մասից բաղկացած է պատկերում (Ա Կորնթ. 5.3-5. 6. 20, 7, 34), ապա չի կարող պատահել, որ նշված երկու մասերում հոգին ու ոգին մարդու մեջ տարբերակելի լինեն, որպես հատուկ ինքնուրույն մասեր: Եվ իսկապես, առաջին տեղում նրանք տարբերակվում են որպես մարդու միևնույն հոգևոր բնության երկու տարբեր կողմեր կամ ուժեր, որովհետև առաքյալն ասում է Աստծո խոսքը՝ հոգու և մարմնի միջև ճիշտ այնպես է բաժանում անցկացնում, ինչպես մարմնի հողերի ու ողնաձուծի: Բայց հողերն ու ողնաձուծն ըստ էության միևնույն մարդկային մարմնի մասերն են, այլ ոչ թե մարդու առանձին մասերը: Այս իսկ հիմքի վրա կարող ենք եզրակացնել, որ իր երկրորդ խոսքում էլ Սբ. Պողոսը մարդու մեջ հոգին ու ոգին տարբերակում է որպես նրա միևնույն հոգևոր բնության երկու մասեր, կամ էլ առանձնակիորեն հոգու մեջ ոգին նրա բարձրագույն մասն է խորհրդանշում: Կարող է պատահել նաև, ինչպես որ նախնիներից շատերն էին կարծում, որ հոգու անվան տակ Առաքյալն այստեղ առանձնապես Սուրբ Հոգու շնորհն է հասկանում, որը բնակվում է բոլոր հավատացյալների մեջ, որի մասին հենց դրանից առաջ նա արտահայտվում է ասելով. «ՁՀոգին մի՛ շիջուցանեք» (Ա թեսաղ. 5.19, հմմ 23):

րորդը, որ նրա վրա փչվում է Աստծո կողմից<sup>36</sup>. **«Եւ ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ, եւ փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, եւ եղել մարդն հոգի կենդանի»** (Ծննդ. 2.7): Հորն իրեն մխիթարող ընկերներին դառնալով՝ ի միջիայլոց ասում է. «Առեալ զմարմինս իմ յատանունս իմ, եւ զոգի իմ եղից ի ձեռին իմուն» (Հոբ 13.14): Սաղմոսերգուն, Աստծո առաջ կանգնելով, կանչում է. «Ելցէ Հոգի ի նոցանէ՝ եւ դարձցին անդրէն ի հող...» (Սաղմ. 145.4), իսկ ժողովողն էլ, թե՛ **«Եւ դարձցի հողն յերկիր որպես եւ երն, եւ Հոգին դարձցի առ Աստուած որ ետ զնա»** (Ժող.12.7):

Նոր Կտակարանում կարդում ենք.

ա) **Քրիստոսի խոսքն ուղղված առաքյալներին**. «Եւ մի երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմին եւ զոգի ոչ կարեն սպանանել. այլ երկերուք դուք առաւել յայնմանէ որ կարողն է զոգի եւ զմարմին կորուսանել ի գեհենի» (Մատթ. 10.28), որտեղ լիարժեք բաժանմամբ մարդը ներկայացվում է որպես մարմնից ու հոգուց բաղկացած էակ:

---

Եթե Եկեղեցու վարդապետներից ոմանք մարդու մեջ տարբերակում էին ոգի, հոգի և մարմին, ապա ամենևին էլ ոչ այն իմաստով, իբր թե հոգին և ոգին հատուկ ինքնուրույն մասեր են կազմում:

Ելնելով մարդու եռամասնության մասին ապոլոգիանայան ուսմունքից Եկեղեցին առանձնակիորեն ևս արտահայտվել է այն մասին, որ մարդը երկու մասից՝ հոգուց և մարմնից է բաղկացած. «Ըստ Ապոլոգիարի ուսմունքի,- գրում է Երանելի Թեոդորիտոսը,- մարդու մեջ երեք հիմնական մասեր կան՝ մարմին, կենդանական հոգի, և բանական հոգի, որը նա միտք է անվանում: Բայց Աստվածային խոսքը միայն մեկ հոգի է ճանաչում, այլ ոչ թե երկու: Դա շատ պարզ կերպով ցույց է տալիս առաջին մարդու արարման պատմությունը»:

<sup>36</sup> Տես. Մատթեոս արքեպիսկոպոս Իզմիրյան, Բարի մարդ և բարի քրիստոնյա, Կ. Պոլիս, 1856թ, էջ 75:

Մարդկանց մեջ Աստծո շնորհների և պարգևների պատիվն ու փառքն այն է, որ հայտնվում է Սուրբ Գրքում. **«Եւ ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ, եւ փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, եւ եղել մարդն հոգի կենդանի»** (Ծննդ. 2.7), սա նշանակում է, որ նախաստեղծ մարդու երեսին փչելով՝ նրան բանական անմահ հոգի պարգևեց, ըստ որի մարդը կենդանի անմահ հոգով զարդարվեց: (Հմմ. Իմաստ. 12. 11, Ա Կորնթ. 15. 43):

Այստեղ «փչեաց յերեսս» ասվածը մարդկորեն մարմնավորապես փչել չպետք է հասկանալ, այլ մանավանդ Աստծո պարգևի ու շնորհի թափանցիկ հեղունը և սքանչելի ներգործությունը պետք է հասկանալ, որը մարդու մեջ բանական ու անմահ հոգի ձևավորեց և այս հոգու պայծառ ներգործությունը մարդկային ողջ մարմնի մեջ տարածվեց, սակայն Սուրբ Գիրքը ողջ մարմնի փոխարեն ամենապատվական մասը՝ երեսն է վերցնում և գրում. «Եւ փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, եւ եղել մարդն հոգի կենդանի»:

Ահա, թե այս մասին ինչպես է արտահայտվում սուրբ Գրիգոր Նարեկացին՝ հոգևորապես խոսելով ու այն տպավորել, զարդարել ու փայլեցնել կոչելով: Սբ. Նարեկացին գրում է. **«Որ արարեր զիս ի քո պատկեր պանծալի ի ձեռն վեհիդ տպաւորութեան զտկարս օժանդակելով: Զարդարեցեր բանիւ, փայլեցուցեր փչմամբ. մտօք**

բ) Հակոբոս առաքյալի խոսքը. «Զոր օրինակ մարմին առանց հոգւոյ մեռեալ է, սոյնպէս եւ հաւատք առանց գործոց մեռեալ են» (2. 26):

գ) Պողոս առաքյալի խոսքը. «Փառաւոր արարէք զԱստուած ի մարմինս ձեր եւ հոգիս ձեր որ են Աստուծոյ» (Ա Կորնթ. 6.20):

Եկեղեցու հայրերից ու վարդապետներից մարդկային բնության հոգուց և մարմնից բաղկացած լինելու մասին հստակորեն արտահայտվել են.

ա) Աբ. Կյուրեղ Երուսաղեմացին. «Ճանաչիր նաև ինքդ քեզ, թե ո՛վ ես դու, ճանաչիր, որ դու մարդ ես, կազմված երկու մասերից՝ հոգուց և մարմնից, և որ միևնույն Աստվածը և՛ հոգու և՛ մարմնի Արարիչն է »<sup>37</sup>:

բ) Աբ. Բարսեղ Մեծը. «Մարդը բաղկացած է երկու մասերից՝ հոգուց և մարմնից, մարմինը վերցված է հողից, իսկ հոգին երկնային է»<sup>38</sup>:

գ) Աբ. Գրիգոր Աստվածաբան. «Իմ մեջ երկու բնություն կա՝ մարմինը կազմված է հողից, դրա համար էլ հակված է իրեն յուրահատուկ հողին, իսկ հոգին Աստծո շունչն է և միշտ ցանկանում է լավագույն մասնակցություն բերել երկնայինին»<sup>39</sup>:

դ) Աբ. Հովհան Ոսկեբերան. «Երկակի է այդ կենդանին՝ մարդու մասին եմ խոսում, որը երկու բնություններից է բաղկացած՝ զգացող ու մտածող հոգուց և մարմնից»<sup>40</sup>:

ե) Երանելի Օգոստինոս. «Մարդը միայն մարմին կամ միայն հոգի չէ, այլ բաղկացած է հոգուց և մարմնից»<sup>41</sup>:

զ) Հովհաննես Դամասկացի. «Աստված իր ձեռքով մարդուն տեսանելի և անտես բնություններից ստեղծեց..., համաձուլված

---

ճոխացուցեր, իմաստիւք աճեցուցեր, հանճարով հաստատեցեր, և ի շնչականացն որոշեցեր, հոգւով իմանալեալ խառնեցեր» (Գլ. 5):

<sup>37</sup> Տես. Ժ. ը. ԾՈՍՈՐՈՒՅ պտրոստ թնվրՓՍՈՒ, կրՈՉՏրսՈՉվՏ-ԺՏչվՈՑՈփպրՍպ ըՏչՏրսՏՈպ, ՉՏվ Ի. (վՏՉպ ՈջՊՈվՈպ) հՈվՄՏտպՑպրոցրչ, 1856չ. « 80, հՏրՑՈՉ փպսՏՉպՍՈ, ըՑՐ. 342,

ԿչսՈր. տՏցփ. IV, 18, ըՑՐ. 69 Չ ՐցրրՍՏվ տպրպՉ..

<sup>38</sup> Տես նույն տեղում: ՉՏսՍՏՉ. վՈ ԼրՈՒՌ՛, 1,3, Չ ՉՉՏՐ. ըՉ. ԿՑՓ. VI, 20.

<sup>39</sup> Տես նույն տեղում: կպրվ. ՑՈՈվրՑՉ. ըսՏՉ. II, Չ ՉՉՏՐ. ըՉ. ԿՑՓ. IV, 270

<sup>40</sup> Տես նույն տեղում: De prophet. obscur. II, n. 5: in Genes. Homil. XXI, n. 6.



երկու բնություններից ստեղծեց..., ստեղծեց հոգով և միաժամանակ մարմնով, հոգով ստեղծեց շնորհ ընկալելու համար, մարմնով, որպեսզի զգուշանա հպարտությունից»<sup>42</sup>:

Եիշտ այսպես էլ ուսուցանում էին Գրիգոր Նյուսացին, Երանելի Յերոնիմոսը և ընդհանրապես եկեղեցու մյուս բոլոր հայրերը, երբ ասում էին, թե մարդու կյանքն այլ բան չէ, եթե ոչ մարմնի և հոգու միասնություն, իսկ մահը հոգու բաժանումն է մարմնից:

Է) Գրիգոր Տաթևացի. «եթե մեկն ասի, թե ի՞նչ է մարդու գոյության սկիզբը, պետք է պատասխանել, որ մարդու գոյության նույն սկիզբը մեր մեջ եղած սաղմնային սկիզբն է: Որովհետև սաղմնային զորությունը սկիզբն է և նյութական մարմնի կազմվածքի և հոգու ծննդյան»<sup>43</sup>:

## Աստծո պատկերն ու նմանությունը

Աստծո մյուս արարածների շարքում մարդու ամենակարևոր առավելությունն այն է, որ Արարիչը նրան իր պատկերն ու նմանությունն է շնորհել:

«Եւ ասաց Աստուած, - վկայում է Սուրբ Գիրքը,- արասցուք մարդ ըստ պատկերի մերում եւ ըստ նմանութեան....: Եւ արար Աստուած զմարդն ի պատկեր իւր. ըստ պատկերի արար Աստուած զնա, արու և էգ արար զնոսա» (Ծննդ. 1. 26, 27 հմմտ 1. 5): Այս առավելության մասին ավելի ուշ Աստված ինքն է վկայում՝ ասելով Նոյին. «Որ հեղու զարիւն մարդոյ, փոխանակ արեան նորա հեղցի արիւն նորա. զի ի պատկեր Աստուծոյ արարի ես զմարդ» (Ծննդ. 9.6):

Եվ Նոր Կտակարանում էլ Հակոբոս առաքյալն է վկայում, լեզվի վերաբերյալ որոշակի նկատողություն կատարելով. «Նովաւ օրհնենք զՏէրն եւ զՀայր. եւ նովաւ անիծանենք զմարդիկ որ ըստ նմանութեան

---

<sup>41</sup> Տես նույն տեղում: De civit. Dei XIII, 24, n. 2; cf. XXI 3, n. 2.

<sup>42</sup> Տես նոյն տեղում ՉՏփվ. ՌջսՏՁպվ. տրՈՉ. ՉպՐօ Սվ. II, չս. 12 ըՅՐ. 90, 91, տՏ ՐցրրԱ. տպՐպՉ.

<sup>43</sup> Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, Ի թուլին հայոց Ռ Ե Զ Ը, գլուխ ԺԶ էջ 251-260:

**Աստուծոյ արարան»** (Հակ. 3.9): Մարդու մեջ Աստծո պատկերի իրականությունը Աբ. Եկեղեցին միշտ խոստովանել է՝ հետևելով Աբ. Գրքի այդքան պարզ գրությանը: Ինչ-որ տեղ այս ճշմարտությունն անհայտ չէր նույնիսկ հեթանոսներին<sup>44</sup>:

Իսկ ո՞րն է մեր մեջ Աստծո պատկերը<sup>45</sup>: **«Եկեղեցական ուսուցման համաձայն,- պատասխանում է Աբ. Եփրեմը,- հավատում ենք, որ մարդն ընդհանրապես Աստծո պատկերով է ստեղծված, բայց թե հատկապես ո՞ր մասում է գտնվում Նրա այդ պատկերը որոշակիորեն չենք կարող ասել»**<sup>46</sup>: Դրա համար էլ Եկեղեցու հայրերն ու ուսուցիչները ևս առաջադրված այս հարցը միանշանակ չեն լուծել, չնայած, որ նրանց մտքերը մեկը մյուսին չեն էլ բացառում, այլ միայն առնչվում են առարկայի տարբեր կողմերին: Ընդհակառակը. եթե այդ մտքերը միավորենք և դրան մոտենանք մեր նախապատկեր Աստծո հանդեպ ունեցած ճիշտ ըմբռնողությամբ, ապա կտեսնենք, որ ամբողջությամբ պարզվում է, թե ի՞նչ է Աստծո պատկերը մեր մեջ:

ա) Աստված Իր բնությամբ մաքրագույն Հոգի է, հետևաբար կարելի է ենթադրել, որ Աստծո պատկերը ոչ թե մարդու մարմնի, այլ նրա աննյութական

---

<sup>44</sup> Տես. Ժ. ը. ԾՈՍՈՐՈՒՅ պտղիՍՏտ ԹՈՎՈՓՍՈՒՅ, կՐՈՉՏՐԱՈՉՎՍ-ԺՏՇՎՈՑՈՒՓԱՐՍՏԱյ ըՏՇՏՐԱՏՉՈՒԱյ, ՉՏՎ Ի. (ՎՏՉՏԱյ ՌԵՊՈՎՈՒԱյ) հՈՎԱՑՏԱՅԱՐՈՂՈՂԻ, 1856Շ. «82, ԿՈՐՈՅ ՌՏՊՏՈՒԱյ ըՏՉՈՒԱյ Չ փԱՍՏՉԱՍԱյ, ըՑՐ. 348, Aristot. de anima 1,2; Cicer. de legib. ,1,7,8.

<sup>45</sup> ԻՉՑՏՏ կՐԱՍՏՊՏՈՒՅՈՒ հԱՐՈՒՎՈՒ հՈՐՏՉՐԱՈՒ փՅՊՏՑՉՏՐԱՓՈ. ԽՐՈՐՎՈՊՈՐՍՏԱյ պՏՈՐԻՈՒՍԱՍԱյ ցՏՐՈՉԱՍՎՈՒԱյ, 1994. ըՑՐ. 55.

Աստված կենդանության շունչ փչեց նախաստեղծ Ադամի երեսին, ում ինքն ստեղծել էր հողից: Ինչպես սբ. Պողոս առաքյալն է նշում. **«Եւ բովանդակ ձեր ոգի եւ շունչ եւ մարմին անարատ ի գալուստ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պահեսցի»:** (Հմն. Թես. 5.23) .... և Ադամը մեռյալ վիճակում չէր ստեղծվել, այլ որպես գործող կենդանի արարած, երկրի վրա ապրող Աստծո մյուս շնչավոր արարածների նման: Բայց ահա, թե ինչն է գորությունը, որ եթե Տեր Աստված հետո նրա երեսին այս կենդանության շունչը չփչեր, այսինքն՝ Սուրբ Հոգի, Աստծո շնորհը, որ ելնում է Հոգից և բնակվում է Որդու մեջ և որը հանում մարդկության փրկության ուղարկվեց աշխարհի, ապա Ադամը, որպես արարչագործության թագն ու պսակը, որքան էլ կատարյալ ու հիանալի ստեղծագործություն լիներ, ստեղծված որպես թագն ու պսակը աշխարհում Աստծո մյուս արարածների վրա, այնուամենայնիվ իր մեջ չէր ունենա Սուրբ Հոգին, որն իր մեջ ստեղծում է աստվածանմանության արժանապատվությունը, այլ նման կլիներ մյուս բոլոր արարածներին, չնայած որ ունենար մարմին, շունչ և հոգի, որով օժտված են բոլոր իրենց տեսակին պատկանողները, բայց իրենց մեջ Սուրբ Հոգին չունեցողները:

<sup>46</sup> Տես. Ժ. ը. ԾՈՍՈՐՈՒՅ պտղիՍՏտ ԹՈՎՈՓՍՈՒՅ, կՐՈՉՏՐԱՈՉՎՍ-ԺՏՇՎՈՑՈՒՓԱՐՍՏԱյ ըՏՇՏՐԱՏՉՈՒԱյ, ՉՏՎ Ի. (ՎՏՉՏԱյ ՌԵՊՈՎՈՒԱյ) հՈՎԱՑՏԱՅԱՐՈՂՈՂԻ, 1856Շ. «82, ԿՈՐՈՅ ՌՏՊՏՈՒԱյ ըՏՉՈՒԱյ Չ փԱՍՏՉԱՍԱյ, ըՑՐ. 348, Epifan . haeres. LXX, n. 2. 3 sq.; Ancorat. n . 55.

հոգում է, որը փորձում էին պարզաբանել Կղեմես Ալեքսանդրացին, Որոզինեսը և հետո, ի հակադրություն անտրոպոմորֆիտների՝ Եպիփանը, Եվսեբիոսը, Գրիգոր Նյուսացին, Ամբրոսիոսն ու այլք:

բ) Որպես Յոզի՝ Աստծուն վերագրվում են նաև հետևյալ էական յուրահատկությունները՝ միտք, ազատություն և, ըստ իր բուն էության, անմահություն: Յետևաբար, կարելի է ենթադրել, որ Աստծո պատկերը, ըստ Եկեղեցու ուսուցիչներից ոմանց, մարդու միտքն է, ըստ ուրիշների՝ ազատ կամքն է, իսկ ըստ երրորդների՝ այն նրա հոգու և անմահության անխախտելիության մեջ է:

գ) Աստված մյուս արարածների համար Տեր, Թագավոր, Տիրակալ է, այս իմաստով սբ. Յոհան Ոսկեբերանի, Գրիգոր Նյուսացու և մյուսների հետ Աստծո պատկերը մարդու մեջ կարող ենք համարել արարչագործության հանդեպ մարդուն տրված բարոյական իշխանությունը: Բայց այս իմաստով, Եկեղեցու որոշ վարդապետների օրինակով, Աստծո պատկերի արտահայտությունը կարելի է գտնել նույնիսկ մարդկային մարմնում, որովհետև նրա բարեկազմության և վեհաշուք տեսքի մեջ շատ պարզ արտահայտվում են հոգու յուրահատկությունները:

## **Մարդկային Յոզու զարգացման կերպը**

(Ըստ Գրիգոր Նյուսացու և Գրիգոր Տաթևացու)

«Քանի որ առաքելական ուսուցման համաձայն մեր էությունը երկակի է ներկայացվում՝ այլ՝ տեսանելի և այլ՝ ծածուկ մարդու մեջ (Ա Պետր. 3.4), հետևաբար եթե մեկը նախագո լիներ, իսկ մյուսը հետո առաջացած, ապա Արարչի ուժն ինչ-որ անկատար բան կլիներ, որը բավարար չէր լինի ամեն ինչ միանգամից արարելուն, այլ կլիներ գործը բաժանող և ամեն մասի վրա առանձնաբար չարչարվող: Բայց ինչպես որ ցորենի կամ որևէ այլ հատիկի համար ասում ենք, որ այն հնարավորինս իր մեջ պարունակում է հասկին պատկանող ամեն ինչ և հաստատում ենք, որ բնության օրենքով այս ամենից ոչինչ հատիկի բուն էության մեջ նախագո չէ և ոչ էլ ավելի վաղ է առաջ գալիս,

այլ հատիկի մեջ ուժը բնականոն ձևով է ի հայտ գալիս, և գործին օտար բնություն չի միջամտում. նմանատիպ օրենք էլ վերագրվում է մարդկային բեղմնավորմանը, ենթադրում ենք, որ կառուցվածքի մեջ նախասկզբնական վիճակում սերմանվում է բնական մի ուժ, որը ձևավորվում և ի հայտ է գալիս որոշակի բնական հաջորդականությամբ հասնելով ամբողջականի իրագործմանը՝ արտաքինից ոչինչ չընդունելով որպես այդ հասունացման միջոց, այլ ինքն իրեն հաջորդաբար հասցնելով կատարելության: Այնպես որ արդարացի չէր լինի պնդել, թե իբր հոգին մարմնից շուտ է առաջացել կամ մարմինն առանց հոգու, այլ երկուսի սկիզբն էլ մեկ է բարձրագույն այն օրենքի համաձայն, որ դրված է Աստծո առաջին կամեցողությամբ, և մի այլ օրենքի համաձայն, որ կայանում է ծնելիության կերպերի մեջ: Ինչպես այն դեպքում, որ բեղմնավորումից հետո նախքան մարմնակազմությունն անհնար է տարբերակել մարմնի առանձին մասերը, այնպես էլ այս պարագային անհնար է նկատել հոգևոր առանձնահատկությունները, մինչև չսկսեն գործել: Եվ ինչպես որ ոչ ոք չի կարող կասկածել, որ այդ սերմանվածն իրենից տարբեր անդամներ ու ներքին օրգաններ է ձևավորելու մի ուժով, որ ամփոփված է հատիկի մեջ և բնականորեն գործի է դրվում, այդպես դրա համաձայն կարելի է խորհել նաև հոգու մասին, որը սակայն գործունեության ոչ մի կերպով ինքն իրեն չի արտահայտում տեսանելիորեն, բայց այնուամենայնիվ արդեն կա սերմանվածի մեջ: Սա է հենց մարդուն տարբերակող կերպը<sup>47</sup> ....»

Հարցմանց գրքում Հայաստանյայց Եկեղեցու Եռամեծ վարդապետ Գրիգոր Տաթևացին այսպես է արտահայտվում մարդկային հոգու զարգացման կերպի մասին. «Մարդկային հոգու մասին տարբեր են կարծիքները արտաքին իմաստունների և եկեղեցու վարդապետների մոտ: Ոմանք ասում են, թե հոգին ավելի առաջ է, քան մարմինը, իսկ ոմանք՝ մարմինը՝ քան հոգին: **Սակայն այս երկու տեսակետներն էլ խոտելի են եկեղեցու կողմից**, որովհետև

<sup>47</sup> Տես նաև. հՉՑՈՑպսՖ թՐՈՆՏՐՈճ ծՈՒՐՐՍՈճ, ԹՏՐՑՏփՎՕպ ՏՑՓՕ Ռ ցփՈՑպս՝ ՓպՐՍՁՈՒ IV ՁպՍՈ, ԾՏՐՍՁՈ, ԾՕրսՖ, 1999ջ. ՁՏՎ II, թսՈՁՈ 22 “ԺՏՍՈՂՈՑպսՖրՑՁՏ, փՑՏ ՏՊՎՈ Ռ ՑՈ Ձպ տՐՈփՈվՎՈ ըցքպրՑՁՏՁՈվՈ՛ ՊցՔՈ Ռ ՑպսՈ, ըՑՐ. 138.

նրանք, ովքեր ասում են, թե նախ հոգին է գոյանում, պատճառաբանում են հետևյալ կերպ, թե իմանալի էակներն ավելի առաջ ստեղծվեցին, քան զգալիները, ուրեմն մարդու էության մեջ էլ հոգին ավելի վաղ է առաջացել, քան մարմինը:

**Նախ ասենք, որ բոլոր արարածներն էլ միաժամանակ գոյացան Արարչի կողմից և ոչ մեկը մյուսից հետո կամ առաջ չէ, չնայած այն բանի, որ Մովսեսն ասում է. «Ի սկզբանե արար Աստուած զերկին եւ զերկիր» (Ծննդ. 1.1) , քանի որ Դավիթն էլ ասում է. «Տէր սկզբուն երկիրը հաստատեցիր, ապա երկինքը»: Իսկ որ ասում ենք վեց օրուն ստեղծեց արարածներին, թվում է թե մեկը մյուսից հետո, բայց ստեղծումը միաժամանակ եղավ: Այսքանը նրանց համար, ովքեր ասում են, թե հոգին մարմնից առաջ է եղել:**

Վկայաբերելով Մովսեսին, որ ասում է. «Եւ ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ. եւ փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, եւ եղել մարդն հոգի կենդանի» (Ծննդ. 2.7) ոմանք զարգացնում են այն տեսակետը, թե յուրաքանչյուր նոր կազմավորվող մարդու (սաղմի) մեջ հոգին մարմնից քառասուն կամ ութսուն օր հետո պետք է լինի: Սակայն հարկ է նշել, որ փչմամբ բանական հոգին չէ, որ ստացավ մարդ, ասում են հայրերը, քանի որ մարդ ասելը հոգի և մարմին է նշանակում:

... համաձայն վերոնշյալ տեսակետի, եթե հոգին մարմնից հետո և նրա համար ստեղծվեց, որ շարժման մեջ դնի այն, ապա ուրեմն հոգին ավելի ցածրակարգ է, քան մարմինը, որի համար էլ այն ստեղծվել է: Եվ հետևաբար մարմինն ավելի մեծ ու պատվական է քան հոգին:

Սակայն Տերն ասում է. **«Ոգի առաւել է, քան զկերակուր, եւ մարմին՝ քան զհանդերձ»** (Մատթ. 6.25), քանի որ սրանք մարմնի և հոգու պետքերի համար ստեղծվեցին: Եվ վարդապետները երկու կողմերի սխալմունքն էլ հանդիմանելով, ասում են, որ **ոչ հոգին է մարմնից առաջ ստեղծվում, և ոչ էլ մարմինը հոգուց առաջ, այլ միասին միաժամանակ են ստեղծվում: Ոչ ժամանակով առաջ կամ հետո և ոչ բնությանը, այլ մի է սկիզբը մարդու գոյության...**

Եվ եթե մեկն ասի, թե ի՛նչ է մարդու գոյության այդ մեկ սկիզբը, պետք է պատասխանել, որ մարդու գոյության նույն սկիզբը մեր մեջ եղած սաղմնային սկիզբն է: Որովհետև սաղմնային զորությունը սկիզբն է և նյութական մարմնի կազմվածքի և հոգու ծննդյան: Եվ թե ի՛նչ է նշանակում ասել, թե զորության մեջ երկու բան է տեսանելի, պետք է այսպես պատասխանել. մարմնական նյութը և ներգործականը (ազդումը), որ համաձայն է արարչադիր այն հրամանի, որ ասաց. «Աճեցէք եւ բազմացարուք» (Ծննդ. 1.28):

Իսկ այն, որ ասում են բանական հոգին 40 կամ 80 օրից հետո է ստեղծվում, պետք է պատասխանել, թե հոգին ոչ ժամանակով և ոչ էլ բնությամբ հետո չի ստեղծվում... Քանի որ կազմավորող զորությունը, որ նյութի մեջ է, ազդվելով արարչադիր հրամանից, նախ կազմում և պատրաստում է նյութը՝ ընդունելու համար տնկականը և ապա զգայականը, որից հետո բանականը՝ Աստվածային ծագումով:

Եվ դարձյալ, նույն ինքը՝ բանական հոգին, ոչ նոր ստեղծված է և ոչ էլ վաղուց: Վաղուց ստեղծված չէ, որովհետև յուրաքանչյուր մարմնի հետ միաժամանակ է ստեղծվում և նոր էլ չէ, որովհետև միևնույն Արարչական սկզբից տրված հրամանն առանց տկարանալու ներգործում է մինչև վերջ և յուրաքանչյուր հոգու համար ստեղծման նոր հրաման չի տրվում: Այլ այն նախ էացել է Աստծո խոսքով և ապա մարմնի հետ միաժամանակ նախատես Բանի պարզևատրության համաձայն»<sup>48</sup>:

Այստեղից եզրակացություն, որ մարդկային հոգին Աստվածադիր հրամանով առկա է մարմնի մեջ դեռ սաղմնային վաղ շրջանում, թերևս հենց բեղմնավորման պահից: Եվ յուրաքանչյուր ոտնձգություն, որ կատարվում է սաղմերի նկատմամբ կլոնավորման կամ այլ նպատակներով բացարձակորեն անընդունելի է: Անընդունելի է, որովհետև թե՛ գիտության և թե՛ կրոնական տեսակետից առնչվում է Աստվածային արարչագործության արդյունք, և որպես անհատականություն անկրկնելի մարդ արարածի կյանքին՝ վերահաս

---

<sup>48</sup> Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, Ի թուրին հայոց Ռ Ծ Զ Ը, գլուխ ԺԶ էջ 251-260:

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ  
ԲԱՐՈՅԱԼԹԻԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՉ**

---

մահվան սպառնալիք ստեղծելով ու «Մի սպանիր» Աստվածային պատգամը  
խախտելով:

## ԳԼՈՒԽ Ե

### Կլոնավորման բարոյաէթիկական-կրոնական վերլուծություն

Կենսաբանական գիտությունների զարգացմանը զուգընթաց ծագող բարոյական խնդիրները:

1965-80 թթ. կենսաբանաբժշկական գիտությունների և մեթոդաբանական հետազոտությունների ասպարեզը հայտնի է ամերևակայելի ձեռքբերումներով: Կարելի է ասել այդ բնագավառում իսկական հեղափոխություն է տեղի ունեցել: Ամբողջության մեջ այդ ձեռքբերումները դրական բնույթ են կրում: Միայն թե դրանք էլ նոր բարոյական խնդիրների ու երկընտրանքների տեղիք են տալիս, որովհետև մարդը որքան հզորանում, այնքան ավելի է ծանրաբեռնում իր խիղճը:

Փորձեր մարդկային սաղմի վրա:

Պտղի օրգանների ու հյուսվածքների օգտագործումը

Արհեստական բեղմնավորման մեթոդի ի հայտ գալու հետևանքը եղավ այն, որ մուտք բացվեց դեպի մարդկային սաղմ: Այդպիսի ձեռնմխելիության թույլտվությունը խթանեց այդ բնագավառում աշխատող այն գիտնականների միտումը, ովքեր ցանկանում էին փորձերի և հետազոտական աշխատանքների համար օգտագործել արհեստական բեղմնավորման միջոցով ստացված սաղմերը, որոնք նախատեսված չէին մայրական որովայնում պատվաստման համար: Բիոէթիկայի հարցերով զբաղվող տարբեր կազմակերպություններում ու հանձնաժողովներում անտեղիտալի վեճեր բռնկվեցին: Մեծ Բրիտանիայում գիտական հետազոտությունների համար թույլատրված է ազատ օգտագործել կենդանի սաղմերը՝ բեղմնավորումից հետո մինչև 14-րդ օրը: Այդպիսի փորձարկումներն արգելված են, օրինակ, Ֆրանսիայում և ԱՄՆ-ում: Անկախ



այն բանից, թե ինչ են հաշվի առնում և ինչ անտեսում վերոնշյալ երկրների գիտնականներն ու օրենսդիր մարմինները, այնուամենայնիվ համաձայն նախորդ գլխի հայրաբանական ու գիտական նկատառումների մարդը բեղմնավորման պահից արդեն հոգով օժտված անկրկնելի անհատականությամբ է՝ Աստծո հրաշագործ արարչություն: Եվ մարդկային սաղմի (հենվելով գիտական ու կրոնական վկայությունների վրա՝ բեղմնավորված սաղմի մասին կարելի է խոսել արդեն որպես մարդկային արարածի) վրա կատարվող փորձարկումները դժվար լուծելի խնդիրներ են հարուցում, թե կրոնական և թե բարոյաէթիկական տեսակետից:

### Մարդու վրա փորձեր կատարելու անհրաժեշտությունն ու դրա էթիկական հետևանքները

Բժշկական կենսաբանության մեջ, առավել քան այլ բնագավառներում, շատ դեպքերում անհնար է գիտական հիմնավոր ուսումնասիրություններ կատարել և դրանք թերապիայի մեջ կիրառել՝ առանց մարդու վրա փորձեր կատարելու, որոնք «**կլինիկական ուսումնասիրություններ կամ փորձեր մարդու վրա**» անվանումն են ստացել: Նման անհրաժեշտ հետազոտությունների էթիկական բնագավառով զբաղվել են Գեներն ու Պաստորը: Այստեղ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ երբ կլինիկական այդպիսի փորձարկումների կատարման անհրաժեշտություն է առաջանում, ապա դրանց անցկացումը կոնկրետ ուսումնասիրության վերջնական փուլում վտանգներից զերծ չի լինում և անհետևանք չի մնում այն անձանց համար, ովքեր այդպիսի փորձերի նյութ են դառնում: Մյուս կողմից, խնդիրը այն է, որ խիզախության աստիճանը նպատակին ու կոնկրետ հետազոտության ակնկալելի արդյունքներին համահունչ դառնա:

Թվում է, թե այնպիսի երկրի համար ինչպիսին Հայաստանն է, նման բարձր տեխնոլոգիական զարգացում պահանջող փորձարկումների մասին խոսելը դեռևս վաղ է, սակայն վտանգն այլ բնույթի ևս կարող է լինել:

Լայնորեն հայտնի է այն փաստը, որ դեղագործական կազմակերպությունները հաճախ իրենց փորձերը կատարում են այլ երկրներում, օգտվելով նրանից, որ տվյալ երկրների կանոնադրությունը չի արգելում այդ փորձերը, որոնք արգելված են իրենց սեփական երկրի կանոնադրությամբ: Օրինակ՝ «Անտիբեյբի» վակցինաների փորձարկումը կատարվում էր Յնդկաստանում, քանի որ այն ԱՄՆ-ում անցկացնելը հնարավոր չէր, իսկ աշխարհի երեսունչորս երկրներում արգելված, ուշ ժամկետների աբորտները, Ռուսաստանում և շատ այլ երկրներում գրեթե ոչ մի արգելքի տակ չեն դրվում: Ավելին, հայտնի են նման աբորտների կատարման նպատակով ծննդատներում կանանց նկատմամբ ճնշում գործադրելու դեպքեր: Նպատակը կարող է լինել թանկարժեք դեղերի արտադրման համար վիժեցված երեխաներից օրգանների անջատումը: Արձանագրված է, որ այդ «բացառիկ հումքի» մեծ սպառողներից մեկն է Ամերիկայի Միացյալ Նահանգները («Ազատություն» ռադիոկայանը այն նվեր է համարել ողջ երկրի համար<sup>49</sup>), որտեղ այսօր արդեն հիմնական խոչընդոտների են հանդիպում կլոնավորման փորձերը, և չի բացառվում որ այդ փորձերն ամերիկացի գիտնականները շարունակեն ազատ օրինական դաշտ ունեցող երկրներում:

**Թույլատրելի՞ է արդյոք այն ամենը, ինչ հնարավոր է**

Բոլոր այս կենսաբանական մշակումները (հատկապես նրանք, որոնց վրա հիմնված է արհեստական բեղմնավորման և կլոնավորման մեթոդը) և բոլոր գենետիկական հետազոտությունները մի հիմնական հարցի առաջադրման պատճառ են դառնում.

**Պե՞տք է արդյոք թույլատրվի այն ամենը, ինչ հնարավոր է:**

Պարզ է, որ նորագույն գիտական հետազոտությունների արդյունքում արդեն նոր հնարավորություններ են ի հայտ գալիս և դրանք գործունեության մեջ են մտնում առանց փորձի էթիկական կողմի մասին որևէ քննարկման: Որևէ

---

<sup>49</sup> «ՂՊՏվկաՉ» շաբաթաթերթ, (# 17-18. 1999չ.):

մեթոդի ի հայտ գալուն և ընդունմանը զուգահեռ ոչ մի սահմանափակում կամ զսպում երբեք չի ակնկալվում ստեղծողների կամ կիրառողների կողմից: Միակ արդյունավետ խոչընդոտն արժեքի ու շահույթի հարաբերությունն է: Իսկ այն ամենն ինչ կարող է անել բարոյականության կողմնակիցը, դա ամեն ինչից հետո մարդկային անմտությունը խարազանելն է, հիշեցնելով, թե ճիշտ դատողությամբ ու իմաստությամբ կատարված եզրակացությունների հետևելու դեպքում ինչը պետք էր անել և ինչը ոչ:

Օրինակ՝ հենց որ մարդկանց արհեստական բեղմնավորման միջոցներ առաջարկվեցին, ի հայտ եկան ամենաանորմալ շեղումները<sup>50</sup>, որոնց ոչ մի պետական արձագանք կամ հիմնավորում չհետևեց: Եթե այդ մասին մտածեին նախքան դրանց կիրառությունը, ապա այսօր ծառացած խնդիրներից շատերը գոյություն չէին ունենա՝ սկսած սառեցված սպերմատոզոյիդների խնդրից:

Ինչպես ասում են. **«Առաջընթացը կանգնեցնել հնարավոր չէ»:** Բայց ի՞նչ է առաջընթացը: Շուկայում հայտնված ցանկացած նոր նյութի համար այս բառը կիրառելու ընդհանուր միտում կա՝ առանց հաշվի առնելու բարոյականությունն ու կշռադատումը:

Նոր հայտնագործությունները կուրորեն ընդունելով, ինչ-որ բան շահելու դեպքում, արդյո՞ք, տանուլ չենք տալիս առավել կարևոր բաներում, որոնք սկզբնապես անհայտ են մեզ համար: Մի անգամ մեզ «բախտ վիճակվեց», մենք «շահեցինք» այն խաղում, որը քառասնական թվականների մտահղացան ֆիզիկոսները: Իդեա, չափազանց համարձակություն պահանջվող այս խաղում, դրական ձեռքբերումներից մեկը եղավ այն, որ վտանգավոր հայտնագործությունների վերահսկման մեթոդներ մշակվեցին և այդ փորձառությունը գիտության հետագա ձեռքբերումների վրա ևս կարելի է տարածել: Սակայն այսուհանդերձ չպետք է մոռանալ, որ միջուկային զենքի կիրառության հնարավորությունը դեռ անցյալին չի պատկանում և այն դեռևս լուրջ մտահոգության առիթ է ողջ մարդկության համար: Ի վերջո, ինչպե՞ս

---

<sup>50</sup> Այդ շեղումներից առաջացած վտանգավոր հետևանքների թվին են պատկանում՝ արհեստականորեն բեղմնավորված և որոշակի զարգացածության աստիճանի հասած սաղմերի օգտագործումը տարբեր այլ նպատակներով, այդ ճանապարհով որդեծնության խեղաթյուրումն ու այլանդակ ծնունդների ի հայտ գալը:

կարող ենք մոռանալ ճապոնական տարաբախտ քաղաքների մասին, կամ Ուկրաինական Չեռնոբիլը:

Այն ժամանակ աղետը համամարդկային բնույթ չստացավ մինչև կառավարելիության հասնելը: Մեր փորփրող մտքի «քլունգի» տակ ական չկար: Բայց արդյո՞ք երաշխիք կա, որ ական չկա նաև նմանատիպ այն տեղում, ուր հիմա կենսաբաններն են փորփրում:

Եվ այսպես, «ոչխարից մարդը մի քայլ է»:

«Կլոնավորման մեթոդով տեսականորեն, կարծես թե կարելի է կոնկրետ մարդու պատճեն ստանալ, - ասում է բրիտանացի գիտնական Վիլմատը, որ ղեկավարել է ոչխարի կլոնավորման փորձերը, - ճիշտ է մեզ համար դեռ հստակ չէ, քանի որ դրանով մինչև հիմա դեռ ոչ ոք չի զբաղվել, բայց ցանկության դեպքում...<sup>51</sup>»: Վիլմատի խոսքերի համաձայն, մարդու կլոնավորման փորձերն արդեն կարող էին հաջողությամբ իրականացած լինել անցնող երկու տարիների ընթացքում: Ըստ ամենայնի դատելով, ինչ-որ մեկը դա շատ է ցանկանում: Հայտարարվել է, որ նոր հազարամյակի սկզբում (մոտակա քսան տարում) քաղաքակրթությունը մարդկային ամեն տեսակի օրգանների կարիք կունենա, որոնք անհրաժեշտ կլինեն մարդկային օրգանիզմում դրանց անսարքության պայմաններում:

«Կանգնեցրե՛ք առաջընթացը», «Կանգնեցրե՛ք գիտությունը», ասում են շատ մարդիկ (օրինակ՝ Հռոմեական կաթոլիկ եկեղեցու մի շարք ներկայացուցիչներ), պրոպագանդելով մի բան, որի համաձայն «գիտության աճը զրոյի կհավասարվի» հանուն Երկրի փրկության:

Արդ, գիտական խնդիրներից զատ, որո՞նք են կենսաբանաբժշկական տեխնոլոգիաների զարգացման հետ կապված էթիկական խնդիրները: Չէ՞ որ բժշկությունը ցնցող հրաշալի հայտնագործություններ ունեցել է միշտ: Տասնիններորդ դարի վերջում հիմնախնդրային հայտնագործություն էր ներարկիչի գյուտը: Այնուհետև, ռենտգենյան ապարատը նախորդ դարի սկզբին: Ախտորոշող բժշկությունն ինչ միջոցներ ասես ձեռք է բերել, հանուն

---

<sup>51</sup> ԾնցՍՈ Ռ ՐպսՌՆՌ՝, N12, Ձ. կՐՈՉՏՏՏՐՏՉՈ, “ըպՐպչՌՑպրՑ ՎցՁփՌվ”, 1998ջ. թՑՐ. 33.

ախտորոշման վիճակն ինչ-որ կերպ բարելավելու: Այնուհետև, մանրեաբանությունը, վիրուսաբանությունը... Չէ՞ որ սրանք բժշկության հիմնավոր ձեռքբերումներն են: Ինչո՞ւ դրանք այնպիսի լարված էթիկական իրավիճակ չեն ստեղծել, ինչպես վերակենդանացումը, օրգանների փոխպատվաստումը, արհեստական բեղմնավորումը, բժշկական գենետիկան, որոնք ավելի քան լարված իրավիճակ են ստեղծում: Որովհետև վերջինների դեպքում բժշկական տեխնոլոգիան մարդկային կյանքի կառավարման մակարդակ է դուրս գալիս: Այն դեպքում, երբ նրանք բարոյական հարաբերություններում բացարձակ անսահմանափակ կերպով գործեն, ապա քաղաքակրթության հիմքում արմատական բեկում կառաջանա: Այդ մասին առավել լավ պատկերացում կազմելու համար խոսենք կոնկրետ օրինակով: Մասնավորաբար վերցնենք արհեստական ճանապարհով բազմացման, արհեստական բեղմնավորման և կլոնավորման օրինակները: Միանգամայն այլ բան է, երբ արհեստական բեղմնավորումը որպես ամուսնական զույգի անպտղության բուժում է կիրառվում և վստահաբար քրիստոնեական բարոյագիտությունն այս նոր կենսաբանաբժշկական տեխնոլոգիան որպես այդպիսին չի էլ մերժում<sup>52</sup>: Սակայն պատկերը բոլորովին այլ է հատկապես արդեն կլոնավորման պարագային և արդեն որոշակիորեն գոյություն ունեն ընկերություններ, որոնք 200 000 դոլար ստանալու դեպքում անմահություն են խոստանում: Ընկերության ղեկավարների խոսքերով ասած՝ կլոնավորումը կարող է «Հավիտենական կյանք» պարգևել: Այժմ այս համարձակ քայլին դիմելու պատրաստ են արդեն միլիոնավոր մարդիկ:

Ինչ վերաբերում է խնդրի էթիկական կողմին, ապա ընկերությունը պնդում է մարդկանց իրավունքների պաշտպանության տեսակետը, համաձայն որի մարդը կարող է նոր էակի մեջ կրկնօրինակել ինքն իրեն կամ իր հարազատներին:

Բայց այս ամենն աղետալի կլինի, եթե մասնավորաբար Առաքելական եկեղեցին չհնչեցնի իր բոլոր զանգերը և եթե արհեստական բազմացման այդ

տեխնոլոգիան բարձրանա մինչև գործնականորեն իրականացման մակարդակ: Հետաքրքրական է, որ նմանատիպ ոչ սովորական բիզնեսով զբաղվելու համարձակությամբ հանդես եկող կազմակերպությունների հետևում կանգնած են որոշ աղանդներ, որոնցից է օրինակ «Միջազգային Ռաելիստական շարժումը»<sup>53</sup>, որ ավելի քան երեսունհինգ հազար մարդ է համախմբում իր շուրջ: Ռաել աղանդի հիմնադիրն ինքը համոզված է, որ Հիսուս Քրիստոսի հարությունն այլ բան չի եղել, քան «Կլոնավորման հաջող փորձերից մեկը»: Այսքան հերետիկոսական հիպոթեզի հիմք դարձավ այն, որ

---

<sup>52</sup> Արհեստական բեղմնավորման ընդունելիության միակ գրավականն անզավակության պատճառով ընտանիքի քայքայման կանխումն է:

<sup>53</sup> ԱՄՆ-ում հայտնաբերվել է մարդկանց կլոնավորման մի լաբորատորիա: Այն հովանավորում էր հայտնի ուֆոլոգիական աղանդը, որի անդամները հավատում են, թե կլոնավորումը մարդկության անմահության ճանապարհն է:

Ամերիկյան Նյու Յորք նահանգում ֆեդերալ իշխանությունները մարդու կլոնավորման մասնավոր լաբորատորիա հայտնաբերեցին: Ինչպես կարծում են ամերիկյան պաշտոնյաները դա հենց այն լաբորատորիան է, որի գործունեության մասին ԱՄՆ-ում հայտնի դարձավ դեռևս 1997 թվականին:

Այն ժամանակ ինչ-որ մի «Clonaid» կոչվող կազմակերպություն հայտարարեց մարդկանց կլոնավորման աշխարհում առաջին մասնավոր կազմակերպության մասին: «Clonaid»-ի հիմնադիրը «Ռաել մարգարեի»՝ ավտոնրգավագրի վարպետ և լրագրող Կլոդ Վորիլխոնի հետևորդների «ուֆոլոգիական» աղանդն էր, որը 1973 թ. հայտարարեց, թե հանդիպել է եկվոր- այլնոլորակայինների հետ: Այժմ Ռաելի և նրա աղանդի տասնյակ հազարավոր հետևորդներ ապրում են աշխարհի 80 երկրներում, մեծ մասամբ Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, և Կանադայում:

Լաբորատորիան հայտնաբերվել է աղանդի լիդերներից մեկի՝ Քիմիական գիտությունների դոկտոր Բրիջիտ Բոխելիերի տան մոտ: 2001թ. հունվարի վերջին նա հայտարարեց 11 ամսյա երեխայի կլոնավորման փորձ կատարելու միտումի մասին, որի ծնողներն արդեն «Clonaid»-ի հաշվին էին փոխանցել ավելի քան կես միլիոն դոլար: Մայիսին ԱՄՆ-ի կոնգրեսի առաջ ելույթ ունենալով Բոխելիերն ու Ռաելը հայտարարեցին, որ իրենց լաբորատորիայի աշխատակիցներին (երեք գենետիկ գիտնականների և մի խիրուրգի) մարդու ստեղծումից «ընդամենը մի քանի շաբաթներ» են բաժանում և արդեն կազմակերպությանն են դիմում բազմաթիվ հաճախորդներ: Իրենց խոսքերով ասած՝ դեռ 1998 թվականին 100-ից ավելի մարդ է գտնվել, ովքեր պատրաստ են եղել հազարավոր դոլլարներ վճարել երեխաների կլոնավորման համար: Հիմնականում դրանք անզավակ զույգեր են, միասեռականներ և պարզապես միայնակ մարդիկ: Ֆեդերալ իշխանությունները բազմիցս զգուշացրել են «ռաելիցիներին», որոնք ի միջի այլոց անուշադրության մատնված մնացին: Այժմ, ԱՄՆ-ի կառավարության ներկայացուցիչների խոսքերով ասած, «լաբորատորիան հայտնաբերված է, իսկ մարդու կլոնավորման գործընթացը՝ դադարեցված»: Ավելին, պաշտոնյաները մտադիր են նախ լրջորեն հետազոտել «Ռաելիստների» գործունեությունը:

Միայն թե աղանդավորներն ու «Clonaid» ընկերությունը չեն պատրաստվում դադարեցնել իրենց գործունեությունը: Նրանք համոզված են, որ կլոնավորումը մարդու անմահության միակ ճանապարհն է, և որ իրենք հակաբարոյական ու հակաօրինական ոչինչ չեն անում: Դոկտոր Բոխելիերի խոսքի համաձայն մոտ ժամանակներում «Clonaid»-ն իր գործունեությունը ԱՄՆ-ից կտեղափոխի հարավային Եվրոպայի երկրներ, որտեղ արդեն գործում է կազմակերպության մեկ այլ լաբորատորիա:

**Պավել Վերետենիկով 03. Հունիսի 2001թ. ինտերնետային էջից**

դոնոր ոչխարի բջիջը, որից անսեռ բազմացման տեխնոլոգիայի հիման վրա ստեղծվեց Դոլլին, որոշակի ժամանակ սառեցված էր և սառնարանում էր գտնվում: Այլ կերպ ասած, բրիտանացի գիտնականները հասան մեռած օրգանիզմից կրկնօրինակ ստանալու արդյունքին<sup>54</sup>:

Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում արհեստական բազմացումը բարոյա-էթիկական տեսակետից: Արհեստական բազմացումը ավանդական, ամուսնաընտանեկան հարաբերությունների փլուզումն է, դա ամուսնաընտանեկան նոր հարաբերությունների առաջացում է, այնպիսի հարաբերությունների, ինչպիսին միասեռական թերարժեք ամուսնությունները կարող են լինել: Իսկ մեր պրագմատիկ ժամանակներում դա շատ հարմար է: Ինչո՞ւ ծանրաբեռնվել ամուսնու հետ կապված հոգսերով, եթե կարողության տեր որևէ կին այդ բանը կարող է անել ամենապարզ կերպով: Նրան այդ

---

<sup>54</sup> ԿրվՏՉօ րՏՓՈՌՈՒՖՎՏճ ՍՏՎՓպտՓՈՌ, ԼՎԻՏՐՎՈՓՈՏՎՎօռ ը՛սսպՑպվՖ ԳցրրՍՏճ կՐՈՉՏրսՈՉՎՏճ ճպՐՍՉՈՒ, ԿՑՊպս ՉվպՔվՈւ ՓպՐՍՏՉվօւ րՉ՛ջպռ ԾՏրՍՏՉրՍՏՃՏ կՈՑՐՈՌԼՈՑՈ, N 8, ԸՉչցրՑ, 2000չ. չս. XII.6, րՑՐ. 79.

Գիտնականների կողմից իրականացված կենդանիների կլոնավորումը (գենետիկ պատճենների ստացումը) հարց է առաջադրում նաև մարդու կլոնավորման թույլատրելիության ու հնարավոր հետևանքների մասին: Ողջ աշխարհում բազմաթիվ մարդկանց կողմից ընդդիմության հանդիպող այս գաղափարի իրականացումն ընդունակ է կործանարար դառնալու ողջ հասարակության համար: Կլոնավորումն առավել քան բիոէթիկային առնչվող այլ խնդիրները հնարավորություն է ստեղծում գենետիկորեն անհատականություն կազմողների հանդեպ մեքենայությունների և նպաստում նրանց հետագա հոգեբարոյական արժեզրկմանը: Մարդը չպետք է հավակնի իր նման էակների արարիչը դառնալու կամ էլ նրանց համար գենետիկ նախատիպեր ընտրելու դերին, նրանց անհատական բնութագրերը բաժանելով իրենց հայեցողությամբ: Կլոնավորման միտքն անկասկած մարտահրավեր է հենց մարդկային բնությանը, նրա մեջ դրված Աստծո պատկերին, որի անբաժանելի մասն է ազատությունն ու անհատականության եզակիությունը: Տվյալ պարամետրերով մարդկանց տիրաժավորումը ցանկալի կարող է թվալ միայն բռնատիրական գաղափարախոսությունների համախոհներին:

Մարդու կլոնավորումն կարող է աղճատել մանկածնության, արյունակցական բարեկամության, մայրության ու հայրության բնական հիմքերը: Երեխան կարող է իր մոր քույրը դառնալ, հոր եղբայրը կամ պապի դուստրը: Չափազանց վտանգավոր են նաև կլոնավորման հոգեբանական հետևանքները: Այդպիսի գործընթացի արդյունքում աշխարհ եկած մարդը իրեն կարող է ինքնուրույն անհատականություն չգտալ, այլ ընդամենը ինչ-որ մարդու կամ նախնիում ապրած մարդկանց «պատճեն»: Նմանապես անհրաժեշտ է հաշվի առնել, որ մարդու կլոնավորման հետ այդպիսի փորձերի «կողմնակի արդյունքներ» անխուսափելիորեն կարող են դառնալ բազմաթիվ չկայացած կյանքեր և որ ամենից հավանականն է անկենսունակ սերնդի մեծ քանակություն: Սրա հետ մեկտեղ, մեկուսացված բջիջների ու օրգանիզմի հյուսվածքների կլոնավորումը մարդու անհատականության արժանապատվության հանդեպ ոտնձգություն չէ և մի շարք դեպքերում օգտակար է լինում կենսաբանական ու բժշկական պրակտիկայում:

ավանդական ամուսնական կապը պետք չէ, այդ խոչընդոտները, այդ հուզումները, տղամարդու հետ կապված այդ հոգսերը և այլն:

Բայց ինչո՞ւ ենք մենք վախենում ամուսնաընտանեկան կապերի քայքայումից: Որովհետև եթե այդ կապերի կառուցվածքը խախտվի, դրա հետևանքով կխախտվի այն օրենքը, որի վրա կառուցվում և ձևավորվում է մարդկային հարաբերությունների բնությունն ու մարդկային բնությունն ընդհանրապես: Այնժամ, բարոյական օրենքը և, որ ամենակարևորն է, սիրո օրենքն ուղղակի անպետք կլինեն: Բեկում տեղի կունենա մարդկության քաղաքակրթության ու մշակույթի հիմքում:

Երբ քննում ենք որևէ ժողովրդի կամ դարի բարոյական վիճակը, մեր հայացքն ուղղվում է նախ ընտանեկան վիճակին և նրանով էլ դատում ենք մնացածի մասին:

Հին հունական աշխարհը սեռին վերաբերող հարցերը ուտելու և խմելու հետ մի շարքում էր դասում: Անգամ Արիստոտելի նման բարձր մտքի տեր մարդիկ էին այդպես մտածում: Բայց ինչպես հայտնի է, հին աշխարհի անկմանը ոչինչ այնքան չի խթանել, որքան ախտավոր ու մեղավոր մարմնի թագավորումը: Հռոմեական կայսր Տակիտոսը հին գերմանացիների արժանիքներից ամենից առաջ ողջախոհությունն էր գովում և դա հռոմեացիներին օրինակ բերում, որոնց սեռական ազատությունն արդեն պետության կայունությանն էր սպառնում, որովհետև ընտանիքն էր քայքայվում: Ահա թե ինչ էր ասում Հռոմի մեծ կայսրերից մեկը՝ Մարկոս Ավրելիոսը, իր կնոջն ու դստերն ուղղված խրատական նամակում. «Ո՛վ Հռոմ, չես ողբում վրադ, որ պալատներիդ ավերվել, պարիսպներիդ փլվել են, անտառներիդ այրվել, բնակիչներիդ պակասել են: Դրանց վրա չես լալիս, որովհետև ինչպես ժամանակը բերում, այնպես էլ տանում է այդ ամենը: Բայց ողբում ու ողբում եմ վրադ՝ տեսնելով քեզ քո հայրերի առաքինություններից ու նրանց կրթությունից զուրկ: Կորավ, վերջացավ մեր հայրենիքը, երբ որ տղա ու



աղջիկ զավակների կրթությունը պակասեց: Տղաները լրբացան, աղջիկներն անոթխածությունը մի կողմ դրեցին ու մայրերն անպարկեշտ եղան»<sup>55</sup>:

Երբ ժողովրդի ընտանեկան կառույցներում ներդաշնակությունը խաթարվում է, ապա պարզ է, որ ազգի բարոյական նկարագիր և մյուս ոլորտներն էլ լավ վիճակում չեն: Իսկ որպեսզի շտկվի խաթարված դիմագիծը, նախ և առաջ ընտանիքն է պետք բարեկարգել, և դրա անհրաժեշտությունը կարծես բնազդաբար է զգացվում : Սոցիոլոգիական ուսումնասիրության դիմելը բոլորովին էլ անհրաժեշտ չէ ժողովրդի կյանքում ընտանիքի դերի կարևորությունը հասկանալու համար: Ընտանիքի կայացման ու կայունության հիմնական նախապայմանը սերն է: Մեր այս երկրային կյանքում, որտեղ կրքերն են փոթորկում, սիրո պահպանումը հիմնախնդրային է: Ռուս փիլիսոփա Սոլովևը համոզված էր, որ «ճշմարիտ սերն անկարելի է պահպանել, եթե այն որպես բարոյական սխրանք չընկալվի ու չընդունվի հասարակության մեջ»: Արդ, ո՞րն է այն սերը, որը բարոյական սխրանք է դառնում: Վստահաբար կարելի է ասել, որ դա սիրող զույգերի մեկ ամբողջի, միակի մեջ ամփոփումը, միավորումը և այդ միասնության մեջ հավատարմության պահպանումն է, և այս միության մեջ թե՛ արական, թե՛ իգական կողմին հատուկ վեհություն և սրբություն կա: Հնարավոր է, որ այս ցանկալի վիճակը շատ բարձր թվա, բայց սա ոչ միայն ընտրյալներին է հասու, այլև բոլոր նրանց, ովքեր ցանկանում են բարոյական կյանքով ապրել՝ առանց ինքնակործան հորձանքների կամ կենդանական կրքերի: Այս հարցին պատասխանելու փորձ արվել է նաև բարձրաշխարհիկ արվեստի միջոցով, և ողջ պատմության ընթացքում պատասխանի այնքան էլ շատ տարբերակներ չեն առաջադրվել: Սիրո խորհուրդը կյանքի խորհուրդն է, և հենց սիրո խեղաթյուրված մեկնաբանումն է սեռի մեծ քառասյունություն ծնում, որտեղ չի կարելի մարդկության, հատկապես քաղաքակիրթ աշխարհի, ողբերգությունը չտեսնել: Անտիկ աշխարհը, չոր դատողական սկզբունքների ու մակերեսայնորեն յուրացրած իդեալիստական դրույթների վրա կառուցված լինելով, շատ շուտ այլասերվեց, կորցրեց իր

---

<sup>55</sup> Բազմավեպ, Օրագիր ազգային, բարոյական և բանասիրական հատոր քսանվեցերորդ, Վենետիկ, Ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1868թ. էջ 68:

խորհրդապաշտական փորձառությունը, դրա հետ էլ մտերմիկ կյանքի խորհրդի ըմբռնումն ու զգացողությունը:

Այժմ էլ եթե սեռը մտովի անջատենք ծնունդից, և միայն սեռը, այսինքն՝ անհատապաշտական սերը թողնենք, ի՞նչ կմնա սիրուց, եթե ոչ «սողոմյան», իր էությանը ավերող և ոչ թե ստեղծագործող անհատի տարբերակը: Անգամ, եթե սիրող զույգերն ինչ-ինչ պատճառներով երեխաներ չունեն, իրենց սիրո փրկության համար ձգտում են ունենալու, որովհետև բնազդորեն զգում են «պարզ», եսասիրական զգացմունքի կործանարարությունը: Սա դեռ հարցի կենցաղային մակարդակն է: Իսկ փիլիսոփայական կտրվածքն առավել տխուր է. այս հարթության վրա սերն ընդհանրապես զրկված է իմաստից: Այսպիսի սիրով մարդն անհատականություն չի ստեղծում, այլ, կարծես անմիտ անվերջությամբ տրոհվելով, իրեն փոխանցում է սերունդներին և, մեկ կատարյալի փոխարեն, շատ անկատարների ստեղծում:

Սերը ճանաչողություն է, որ մարդկանց մերձեցնում, միմյանց հոգու և էության մեջ թափանցելու հնարավորություն է տալիս: Սերը նաև կատարելության, զարգացման ճանապարհ է: Այս մասին միանգամայն համոզիչ և ինքնատիպ է արտահայտվել Պյոտր Ուսպենսկին. «Երբ սերնդե սերունդ մարդիկ սիրում են, այսինքն՝ վեհ զգացմունքներ ու փոխադարձություն են փնտրում, կերտում են մարդու մի տեսակ, որն ինքն է սեր փնտրում և ի վիճակի է սիրելու»:

Ամենակարևորը սեռն ու ծնունդն իրարից չբաժանելն է: Այդպես վարվողը և տգիտորեն այդ անբաժանելին բաժանողները չեն ընկալում **Կնոջ ու Մանկան խորհուրդը**, այդպիսի մարդիկ, ծնունդի դեմ պայքարելով, հեռացնում են անցնող սերունդների ու գալիք կյանքի շարունակող Մանկանը: Իգական սկզբի էությունն անբաժան է Մայրությունից, Մայրությունն էլ միայն Մանկան հետ է Մայրություն: Ուրեմն իգական սկիզբն ու Մայրությունը և Մայրությունն ու Մանուկն անխզելիորեն, փոխադարձաբար կապված են միմյանց, և մեկն առանց մյուսի՝ իմաստից զուրկ: Ավելին, նոր սերնդի լինելությունը մեծապես պայմանավորված է անցնող սերնդի վիճակով, որ ամենավառ կերպով արտահայտվում է մոր ու մանկան լինելության փոխ-

կապակցվածության մեջ և իրավամբ. «Երբ Աստված մեծ մարդու կարիք է ունենում, նախ մեծ մայր է ստեղծում»<sup>56</sup>:

Թերևս այս ի մտի ունենալով՝ իմաստուն մեր նախնիները մեծագույն հարգանք էին դրսևորում մայրության խորհրդանիշ կնոջ նկատմամբ: Հայ ընտանիքում մոր և ընդհանրապես ծնողների ունեցած դերի ու նշանակության մասին հետևյալ կերպ է արտահայտվում Խրիմյան Հայրիկը. «Տունն ու հայրենիքը մի փոքրիկ թագավորության երկիր ու սահման են, որի նահապետական աթոռին նստում են ծնողները, հայրը՝ իբրև թագավոր, մայրը՝ իբրև թագուհի, և կառավարում են հպատակ ընտանիքը: Սույն ընտանեկան պալատում ու թագավորության մեջ ո՛չ ոստիկան կա, ո՛չ սուր, ո՛չ բռնություն, ո՛չ գավազան, այլ այս ամենի տեղ հայրական սերն ու մայրական գորովն է, դաստիարակ ու խրատ՝ ծնողների կենդանի օրինակը»<sup>57</sup>:

Հղի կնոջ տունն Աթենքում անոտնահարելի սրբություն էր համարվում, իսկ դասական Հռոմում այն ծաղիկներով էին զարդարում:

Մի անգամ, երբ Նապոլեոնին հարցրել են, թե ո՞րն է Ֆրանսիայի մեծագույն կարիքը, նա առանց վարանելու պատասխանել է. «Մայրեր, մայրեր և դարձյալ մայրեր»:

Սիրո հավերժության բանալին հենց Մոր ու Մանկան խորհուրդն է:

Եվ այսպես, էթիկական նման հարցերին ինչպե՞ս է վերաբերվում այսօրվա գիտությունը: Կլոնավորման փորձեր անող գիտնականն իննչպե՞ս է պատկերացնում հասարակության կյանքը ՍԻՐՈՒ ու ՈՐԴԵԾՆՈՒԹՅԱՆ խորհրդի բացակայությամբ կամ աղավաղված վիճակով: Եկեք միանգամից համաձայնենք, որ այժմ «ողջ գիտության անունից ինչ-որ բան ասելը» - նույնն է, թե խոսենք ընդհանուրի՝ ողջ մարդկության անունից, որ ուղղակի հնարավոր չէ: Օրինակ՝ որոշ ակադեմիկոսներ միջուկային զենք են ստեղծում, իսկ մյուսները պայքարում են հանուն միջուկային զենքի ոչնչացման: Ավելին, ինչպես հայտնի է, երբեմն դրանք միևնույն ակադեմիկոսներն են լինում: Եվ, այնուամենայնիվ, ի՞նչ է մտածում գիտությունը կլոնավորման մասին: Ամեն

---

<sup>56</sup> Րաֆֆի, Երկերի ժողովածու, 9-րդ հատոր, Հայ երիտասարդությունը, էջ 388:

<sup>57</sup> Խրիմյան Հայրիկ, Դրախտի ընտանիք, Երևանի պետ. համալսարան 1992թ. էջ 200:

ինչ այնքան էլ հենց այդպես պարզ ու հեշտ չէ: Առաջին հերթին աշխարհի ոչ բոլոր եկեղեցիներն են իրենց դիրքորոշումը հստակորեն ճշտել նման հարցերի մասին: Իսկ գիտությունը վաղեմի ավանդույթի համաձայն չի շտապում «Այո» կամ «Ոչի» սկզբունքով կատեգորիկ որոշումներ կայացնել, այլ ամեն ինչ կշռադատում է «Դեմ » կամ «Կողմ» սկզբունքով:

Ասեմք, օրինակ, անզավակությունից տառապում են զույգերը՝ կամ ժառանգականությունն է վատ, կամ Աստված է պատժել, բայց այսպես թե այնպես, այնուամենայնիվ երեխաներ չկան: Եվ այստեղ հայտնվում է բարեգործ գիտնականը, որ նրանց կրկնակի է ուրախացնում, ընդ որում աղջիկը ճիշտ և ճիշտ մայրը կլինի, իսկ որդին հոր ձուլվածքը: Ո՞ւմ է վնասում այդպիսի որոշումը: Ճիշտ է այդպիսի որոշման կողմնակիցներն անգամ նկատում են, որ դեռ հայտնի չէ, թե որքան ծանր կլինի երեխայի հոգեկանի համար այն բանի գիտակցումը, որ ինքը կլոնավորման արդյունք է:

Ի դեպ, գիտությանը, այդ թվում նաև գենետիկական ուսումնասիրությունների ասպարեզում կատարվող աշխատանքներին, մասնավորաբար առաջ են մղում ոչ այնքան մարդկության մասին հոգատարությունը, որքան եկամտի ետևից վազքը, մրցակցության շառաչուն մտրակը, չնայած որ դրանք մարդկային պահանջները տնօրինել չեն կարող, այլ պարզապես մակաբուծում են նրանց վրա: Օրինակ, չնայած հետազոտող աշխատակիցների զգուշավորությանը, Չիկագոյի բնակիչ Ֆիզիկոս Ռիչարդ Սիդը, որ արդեն մի շարք տարիներ կլոնավորման բնագավառի ուսումնասիրություններով է զբաղվում, ելույթ է ունեցել զգայացունց հայտարարությամբ. նա մտադիր է իրականացնել մարդու առաջին կլոնավորումը, օգտագործելով հենց այն մեթոդը, որով կլոնավորվել է Դոլլին: Միակ փոքրիկ խոչընդոտն այն է, որ երկու միլիոն դոլար է հարկավոր: Նրան չեն հուզում ոչ աշխատակիցների ընդդիմությունը, ոչ քաղաքագետների արգելքները, ոչ էլ Եկեղեցու դիրքորոշումը: Սիդը հաշվարկել է, որ կլոնավորման կարող են դիմել ոչ պակաս, քան տասը

հազար ամերիկացի անգավակ զույգեր, իսկ հետագայում նա մտադիր է իր գործը ծավալել նաև ԱՄՆ-ից դուրս<sup>58</sup>:

Կլոնավորման հեռանկարը, սակայն, հույսեր է ծնել նաև, «սեքսուալ դեմոկրատիայից» ծնունդ առած, «միասեռ» ամուսնությունների համախոհների մոտ: Միասեռականներն իրավունք կստանան գրանցելու և հաստատագրելու իրենց ամուսնությունները, կկարողանան դուրս գալ ամուսիններին յուրահատուկ առարկայական օրինադաշտ: Այս պարագաներում ենթադրվող միակ սահմանափակումը երեխաների որդեգրման արգելքն էր, այժմ դա էլ կչեզոքանա «կլոնավորման շնորհիվ»: Սակայն մի այլ հանգամանք ևս կա. «երեխա, միայնակ կնոջ համար»: Ո՞րն է լավ, «տրվել» առաջին պատահած մարդուն, թե՞ սերունդ ու ցեղի շարունակություն ստանալ կլոնավորման ճանապարհով: Այստեղ է հակասող հետաքրքրությունների ու կամքերի, իրավունքների ու պարտավորությունների խճճված կծիկը: Եվ հիշատակված, կարծես թե, մարդկային բնական խնդիրների մեջ արդեն քիչ չեն մտահոգիչ հանգամանքները<sup>59</sup>:

<sup>58</sup> Ժոն ԳՍՈ Ռ Րպսոն-Ռ, Ձ. կՐՈՉՏՑՏՐՏՉՈ, “ըպրպչոՑպր ՎցՁփոՎ” 1998չ N12 րՑՐ. 33.

<sup>59</sup>**Տեսակետ**

Իսկ եկեղեցին կլոնացման դեմ սեփական, առանձնակիորեն քրիստոնեական փաստեր ունի՞ արդյոք, թե ոչ: Ինձ առայժմ այդպիսի փաստեր չեն հանդիպել: Էմոցիոնալ այն բացականությունները, թե մարդու կողմից մարդ ստեղծելը Արարիչ Աստծո իրավունքի դեմ բռնացում է, և դրա համար էլ ուղղակի սատանայապաշտություն, ինձ համոզիչ չեն թվում: Ի վերջո լույսն էլ Աստծո կամքով ծագեց, «եղիցի լոյս» Աստվածային հրահանգից հետո: Իսկ հիմա լույսի արարումը հասու է նաև մարդուն:

Հետևաբար, եթե մարդը կարող է կյանք ստեղծել, նշանակում է նա իրոք իր մեջ կրում է իր Արարչի պատկերը: Ես համոզված եմ, որ գիտության ցանկացած հաջողություն միայն փառաբանում, այլ ոչ թե պարսավում է մեր գիտակցության Արարչին:

Ձանձրալի է նաև լսել կլոնացման դեմ այն տիպիկ «Աստվածաբանական» փաստը, որ ասում են. թե դա առանց տառապանքի ծնունդ կլինի և դրանով իսկ արդեն կշրջանցվի Տիրոջ պատվիրանը, որի համաձայն ծննդաբերության ժամանակվա չարչարանքը տրվեց որպես Ադամական մեղքի պատիժ: Բայց չէ՞ որ մեղքի համար պատիժը եռակի էր՝ առաջինը երկրի անպտղությունն էր, որը «փուշ և տատասկ» պիտի աճեցնի, երկրորդն աշխատանքի ծանրությունն է (քո ճակատի քրտինքով), և երրորդը նոր միայն ծննդաբերության տանջալիությունը: Հին Կտակարանյան այս խոսքերը չափազանց բառացի հասկանալու դեպքում, անհրաժեշտ կլինի դատապարտել հողագործների աշխատանքը (ինչպես են նրանք համարձակվում բարելավել Աստծո անիծած հողը) ինչպես նաև ցանկացած գիտատեխնիկական առաջընթաց, մարդու աշխատանքը հեշտացնող բոլոր տիպի հայտնագործությունները (դեռ կենդանիների ընտելացումից, անիվի, ջրաղացի ու բահի հայտնագործումից սկսած):

Իսկ կենսաբանությունն այն համոզմունքն է հաստատում, ըստ որի մարդն անմահության համար է ստեղծված: Մեր բջիջներն իսկապես անմահ են: Նրանք կարող են ինքնուրույնաբար, անվերջորեն բաժանվել և չմեռնել:

Այնուամենայնիվ, գեներտիկան սրընթաց մոտենում է մարդու կլոնավորման խնդրի վճռմանը: Եվ ամերիկացի գիտնականների կողմից գծագրվող իրավիճակի պատկերն այնքան էլ մտացածին չէ: Երկու տասնամյակ հետո մեր հետնորդները մի հավաքատեղիում կհանդիպեն ու միմյանց կհարցնեն. դու ի՞նչ կաստայից ես: Բանն այն է, որ հավաքվածների մի մասը կարող է ծնված լինել պապենական մեթոդով, իսկ մյուսները կլոնավորման ճանապարհով և որի համար նրանք կպատկանեն կլոնների կաստային:

**Եկեղեցու իրականացնելիք առաքելությունը կենսաէթիկական հիմնախնդիրների լուծման ուղղությամբ:**

Ծնունդից մինչև մահ ակտիվորեն ժամանակակից մարդու կյանք ներթափանցող կենսաբանաբժշկական տեխնոլոգիաների բուռն զարգացումը, ինչպես նաև այդ պարագաներում ծագած բարոյաբանական խնդիրներին ավանդական բժշկության շրջանակներում պատասխաններ չգտնելու դժվարությունը, հասարակության մոտ լուրջ մտահոգություն են առաջացնում: Իրենց Աստծո տեղում դնելու և ինքնակամորեն Նրա արարչությունը փոխելու և բարելավելու փորձերը կարող են մարդկությանը նոր դժվարություններ ու տառապանքներ բերել: Կենսաբանաբժշկական տեխնոլոգիաների զարգացումը նշանակալիորեն գերազանցում է այն սահմանը, որից հետո անխուսափելի է դառնում դրանց կիրառության անկառավարելիությունը: Սրանից էլ բխում են չիմաստավորված հնարավոր հոգեբարոյական և սոցիա-

---

Եվս մեկ հարց. կլոնացված արարածը մարդ կլինի՞, արդյոք, թե ոչ: Ողջափառ ընթրման համաձայն մարդու հոգին Աստված է արարում, իսկ ծնողները միայն մարմին են տալիս: Դրա համար էլ Աստվածաբանն այստեղ միայն մեկ հարց կարող է ունենալ. թե Աստված կցանկանա՞ արդյոք մարդկային հոգի միավորել այն արարածներին, որ կլոնացման արդյունքում առաջացած սաղմերից են ստացված: Քանի որ սա Աստծո կամքին վերաբերող հարց է, ուստի մախապես պատասխան լինել չի կարող: Եվ միանգամայն հանդգնություն է այն հոգևորականի արարքը, ով կիրառարվի մկրտել այն երեխային, ում մասին ծնողներն ասել են, թե նա «փորձանոթի մեջ է բեղմնավորվել»: Կարծում են «կլոններին» վերաբերող հարցում Եկեղեցին պետք է պնդի, որ նրանց մարդ ճանաչեն (որպեսզի նրանց վրա փորձեր անելը, կամ որպես մասեր նրանց օգտագործումը թույլ չտրվի), և ինքն էլ այդպիսի երեխաներին պետք է մկրտի ու հաղորդություն տա:

Որպես անփոփում նկատենք, որ կլոնավորումն ըստինքյան մեղք չէ:

լական հետևանքներ, ինչը չի կարող չառաջացնել եկեղեցու հովվական խոր մտահոգությունը: Ուստի եկեղեցին իր վերաբերմունքն է ձևավորել ժամանակակից կյանքում լայնորեն քննարկվող կենսատեթիկայի խնդիրներից, առաջին հերթին հատկապես նրանց նկատմամբ, որոնք առնչվում են մարդու վրա անմիջական ներգործությանը և հասարակական կյանքում բարոյական նկարագրի աղավաղմանը: Եկեղեցին կյանքի մասին Աստվածային Հայտնության վրա հիմնված պատկերացումներից ելնելով, այդ կյանքը գնահատում է որպես Աստծո անգին շնորհ, որպես անընկճելի ազատություն և մարդկային անհատականության աստվածաման արժանապատվություն, որ կոչված է «աստվածային կոչման նպատակակետին Քրիստոս Հիսուսով» (Փիլիպ. 3.14), երկնային Հոր կատարելությանը հասնելուն (հմմ. Մատթ. 5.48) և աստվածացման, այսինքն՝ աստվածային բնության հաղորդակցության ( հմմ. Բ Պետր. 1.4):

Քրիստոս գալով աշխարհ ցույց տվեց փրկության ճանապարհն իր անձի ու իր կենդանի օրինակի միջոցով, ասելով՝ «Ես եմ ճանապարհ, ճշմարտություն և կյանք» (Հովհ. 14. 6): Այսինքն՝ ճանապարհ, որ ելքն է ամեն տեսակ դժվարությունների միջից դեպի երկնքի արքայություն, որ Իր իսկ խոսքերով «Ի ներքս մեր է» (Հմմ. Ղուկ. 17. 20): Ճշմարտություն, որ բացարձակ է և աներկբայելի, որին կարելի է վստահորեն հենվել և նեցուկ ունենալ կյանքի ամենադժվարին պայմաններում և վերջապես կյանք, որ կատարելատիպն է իրական կյանքի, որի մեջ կարելի է գտնել մարդկային կյանքին վերաբերող ցանկացած հարցի պատասխան: Քրիստոս Իրեն է վերագրում նաև Բացարձակ Լույսի գաղափարը, և որը կարևորագույն յուրահատկություններից մեկը պետք է լինի Իր հիմնած եկեղեցու, և այդ Լույսն է, որի միջոցով պետք է լուսավորվի մարդկության առաջ ծառայած ցանկացած մութ հարց: Այս հանգամանքներում եկեղեցին կոչված է իր օրինակով ելքն ու լուծումը ցույց տալու ամեն տեսակ անլուծելի թվացող խնդրի: Սրա ամենահամոզիչ փաստարկը Պողոս առաքյալի խոսքն է. «Նմանվեցեք ինձ, ինչպես որ ես Քրիստոսին» (Ա Կորնթ. 11.1): Այս Քրիստոսանմանությանը տանող

ճանապարհին, սակայն, եկեղեցին կոչված է ամենայն ուղղամտության, ինչպես մի առիթով արտահայտվել է Մոսկվայի և Չամայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի II-ը. «Պետք է իրերն իրենց ճիշտ անուններով կոչել»: Սակայն եկեղեցու դերը իրերին իրական անուններ տալով դեռ չի ավարտվում, այլ կարելի է ասել հենց այդտեղից նոր-նոր սկսվում է, որովհետև կարևորագույնը, որին կոչված են Քրիստոսի ճշմարիտ հետևորդները դա ելքը, այսինքն՝ ճանապարհը գտնելը և ուրիշներին էլ ցույց տալն է:

Կրոնն ընդհանրապես իր բուն հիմքի մեջ և քրիստոնեությունը մասնավորաբար լայն առումով մշտապես եղել է մարդկային բարոյականության ու ազնիվ արժեքների առաջատարը: Քրիստոնեությունը, որպես բացարձակ կրոն և կյանքի գաղափարախոսություն ու Աստվածային ճշմարտության անմիջական հայտնություն, այն իրողությունն է, որ իրենից ներկայացնում է ոչ թե կյանքի որոշակի դրույթներ, այլ հենց ինքը՝ բարոյական ու աստվածահաճո կյանքն է, որի կենդանի օրինակը մարդկությանն Աստծո միջոցով տրվեց՝ Իր Սիածին Որդու մարմնացման և երկրի վրա որպես կատարյալ մարդ ապրելու միջոցով: Հետևաբար, ինչպես որ եկեղեցու Վեմը՝ Մեր Տեր Հիսուս Քրիստոս, իր կատարյալ օրինակով կարողացավ դեպի Լույս և Կյանք տանող ճանապարհ դառնալ իր հետևորդների համար, այնպես էլ եկեղեցին կոչված է ողջ մարդկությանը առաջնորդելու դեպի փրկություն՝ զերծ պահելով ամեն տեսակ չարահմար երևույթներից: «Բիռեթիկայի խնդիրների» հարցում ևս անփոխարինելի է եկեղեցու դերը, որպես բարոյականության առաջնորդի ու մարդկային հոգևոր արժեքների նախանձախնդրի:

Եվ ահա այստեղ հարց է ծագում. թե այն մոտիվները՝ համաձայն որոնց քրիստոնյաները (ուղղափառ քրիստոնյաները) զգուշանում են կլոնացման փորձերից, արդյոք նեղ եկեղեցակա՞ն են, թե՛ ո՛չ: Մի՞թե եկեղեցին կլոնացման դեմ է ելնում նրա համար, որ այդ գործունեությունը հակասում է իր կատեխիզիսներում գրվածներին, կամ էլ ընդդիմանում է որոշակի եղանակավորմամբ: Մի՞թե այն, ինչ առանձնահատուկ է ուղղափառ քրիստոնեությանը, այն, ինչ մեր աշխարհայացքը տարբերակում է բոլոր մնացած մարդկանցից, դա է մեզ ստիպում չհամաձայնել կլոնավորմանը: Թե՞ ուղղակի մեր փաստերը, եթե



նրանց վրա լրջորեն խորհելու լինենք, կտեսնենք որ նույնն են, ինչ որ առաջ են քաշում այլ հավատալիքների ու համոզումների մարդիկ:

Մեզ թվում է սրա մասին պետք է խորհել հատկապես հանուն կլոնացմանը դեմ մեր տեսակետի հաստատման: Հայտնի է, որ գրեթե բոլոր երկրներում եկեղեցու և քաղաքացիական հասարակության միջև մեծագույն անդունդն առաջանում է հատկապես մարդու ծննդին վերաբերող հարցերի շուրջ: Սեռական բարոյախոսության, հակաբեղմնավորիչների, աբորտների և այլնի մասին հարցերը եկեղեցին ակնհայտորեն այլ կերպ է մեկնաբանում, քան դա անում են ժամանակակից մասսայական գիտակցության ստերեոտիպերը: Մասսայական գիտակցության մեջ արմատավորված է այն մտայնությունը, որի համաձայն. «եկեղեցին հաճախ դեմ է նրան, ինչը մարդկանց ուրախություն կարող է բերել»: Ինքներս մեզ չխաբենք, եկեղեցու հեղինակությունը հասարակության մեջ այնքան մեծ չէ, որ ոչ եկեղեցական մարդկանց գիտակցության մեջ եկեղեցու կողմից պաշտպանվող կարծիքը այդ պատճառով առավել հեղինակավոր ու ընդունելի դառնա: Ընդհակառակը՝ միանգամայն շատ մարդկանց գիտակցության մեջ սեռական հարաբերության ոլորտի հետ կապված հարցերն ավելի շուտ վճռվում են եկեղեցուն հակասելով. Նշանակում է մենք այնպիսի փաստեր պիտի բերենք, որոնք հասկանալի լինեին ոչ միայն այն մարդկանց, ովքեր ամբողջությամբ ու լիարժեքորեն ընդունում են եկեղեցական արժեքների համակարգը, այլ նաև այնպիսի փաստեր, որոնք հասկանալի են նաև եկեղեցու հետ առավել քիչ կապ ունեցող մարդկանց: Ինձ թվում է օգտակար է մարդկանց բացատրել, որ եկեղեցին կլոնացումը մերժելու նույն դրդապատճառներն ունի, ինչ-որ բոլորը, ինչ-որ մարդկանց մեծամասնությունը...

Նախ և առաջ պետք է զգուշանլ այն ոլորտների հետ գործ ունենալուց, որի մասին չափազանց քիչ բան գիտենք, որովհետև ատոմիստների առաջադրած վկայակոչումները վախի հիմնավոր պատճառներ են ի հայտ բերում:

Նախ ո՞ւր է այն երաշխիքը, որ կլոնացման միջոցով չի կարելի կենսաբանական նոր ռումբ ստանալ:

Այսպիսով է այն երաշխիքը, որ աշխարհի տիրակալներն այդ փորձառությունը չեն օգտագործի մարդկային նոր ցեղ ստանալու համար, որն առավել կհամապատասխանի կատարյալ ընտրողի իրենց պատկերացումներին:

Արդյո՞ք կլոնավորման լաբորատորիաները զոմբիներ չեն ստեղծի:

Եվ երրորդը, ինչպիսի՞ն կլինեն տարբեր ռասաների պատկանող մարդկանց հարաբերությունները:

Արդյո՞ք բոլորը կհամաձայնեն կլոններին մարդ համարել:

Ո՞վքեր կլինեն նրանք ըստ իրենց սեփական ընկալման:

Մի խոսքով, այստեղ մենք հանգում ենք մի հարցի, որի մասին վաղուց եկեղեցին խնդրում է դատողություն անել բժիշկներին ու իրավաբաններին. **«Ի՞նչ է մարդը», «Ե՞րբ է սկսվում և ե՞րբ ավարտվում մարդկային կյանքը»** (աբորտի ու էֆթանազիայի խնդիրը), **«մարդուն ի՞նչն է մարդ դարձնում»** (խախտված հոգեբանությամբ մարդկանց խնդիրը):

Զորրորդ, մայրական բնագդ կլինի՞ արդյոք կնոջ մոտ, եթե նա չանցնի հղիության ու ծննդաբերության փուլերով:

Արդյո՞ք սիրելի կլինի այդպիսի երեխան:

Այս փաստերն ամբողջությամբ մարդու իրավունքի հետ կապված պրոբլեմի շուրջ են պտտվում: Ի՞նչ իրավունքներ ունի մարդը և, հատկապես, ո՞վ է այդ իրավունքների տերը: Մարդու պաշտպանությունը հասարակության սրբազան պարտականությունն է և հիրավի ճշմարտացի է Ռուս մեծ մտածող Ֆ. Մ. Դոստոևսկին ասելով. «Երբ երկրի վրա մի մարդ են խաչում, նշանակում է ողջ մարդկությանն են խաչում»<sup>60</sup> և մենք չպիտի թույլ տանք, որ անհատները ողջ մարդկությանը խաչը բարձրացնեն:

**«Մարդուն պետք է հարգել և՛ սեփական անձի և՛ այլոց մեջ»<sup>61</sup>:**

---

<sup>60</sup> Մ. Դոստոևսկի, Կարամազով եղբայրներ, Սովետական գրող, 1963թ, էջ 77:

<sup>61</sup> ԼՎՎՈՎԳՈՒ ԽՈՎՅ, ԾայնիՆդնիպրոսնայ վոփոսոն պրՅպրՅՉՏջվոլո՛, ԸվՅՐՏտՏսՏչնիպրոսնո՛ Պո՛ՊՈՍՅՈՍՈ Տ րոՏրՏոպ տՏջվոՂՈՅՖ ՍՈՍ ՉվՅՐպվպպ, ՅՈՍ Ռ Չվպթվպպ Չ փպսՏՉպՍպ, ԾՏրՍՉՈ, ՌջՊ. ԾօրսՖ, 1999չ. րՅՐ. 1289.

## 2. Ամփոփիչ եզրակացություն

Վերը քննարկում կատարվեց վերջին ժամանակներում մարդկային ողջ հասարակությանն անհանգստացնող կլոնավորման փորձերի մասին: Այսօր շատ եռանդուն կերպով քննարկվում է այս եղանակով մարդու մահվանից հետո կյանք ապահովելու և կենդանության ժամանակ էլ կլոնավորված սաղմերը ի սպաս հիվանդությունների բուժման օգտագործելու հնարավորությունների մասին հարցը:

Ի՞նչ կարելի է ասել այդ մասին: Ամենից առաջ ուշադրություն դարձնենք հենց կլոնավորման ճանապարհով անմահություն ձեռք բերելու թեորհայի սխալականությանը: Բանն այն է, որ գործնական իրողության մեջ պատճենն ստեղծվում է դեռ անհատի կենդանության օրոք և այդ դեպքում պատճենը մեռած մարդու շարունակությունը չի դառնում, որովհետև կլոնն իր կյանքը ձվաբջջից կամ մարմնական (սոմատիկ) բջջից է սկսում, այլ ոչ թե հենց միևնույն հասուն մարմնից: Դրա համար էլ կլոնավորման ճանապարհով, այսպես կոչված, անմահություն ձեռք բերելու համար հարկավոր է սպասել տվյալ մարդու մահվանը՝ քայքայմանը, և միայն դրանից հետո «թույլատրել» դոնոր ձվաբջջի աճը: Ենթադրվում է, թե այդպիսի ձվաբջջիչը՝ նախկին մարմնի «մի կտորը», պետք է նախապատրաստված լինի և պահպանվի դեռևս մարդու կենդանության օրերից, իսկ նրա մահից հետո դրվի դոնոր կնոջ օրգանիզմում: Ի դեպ, դոնոր կարող են լինել միայն կլոնավորվողի արյունակից հետնորդները:

Եվ ահա թե ինչն է ամենից կարևորը. կլոնավորման մեթոդը տվյալ մարդու բացարձակ նույն պատճենը չի տալիս, քանի որ դոնորային ձվաբջջիչը հենց այն ձվաբջջիչը չէ, որից երբևէ ձևավորվել է այդ մարդը: Ինչպես նաև հասուն մարդու քրոմոսոմների խումբը, այնուամենայնիվ, հենց այն նույն քրոմոսոմային խումբը չէ, որը կար ձվաբջջի բաժանման սկզբնական փուլում: Ժամանակի հետ փոխվում է նաև բջջիջների մեջ գոյություն ունեցող միջավայրը, ինչը պարտադիր արտացոլվում է քրոմոսոմային յուրահատկությունների վրա: Եվ հետո միաձուլ երկվորյակներն անգամ, իրենց

ընդհանուր ձվաբջջի հենց կիսման պահից տարբեր չափանիշներ են ունենում: Իսկ աճի և զարգացման շրջանում այդ տարբերությունները, ինչպես մարմնակազմության այնպես էլ հոգեբանության մեջ առավել նշանակալից են դառնում: Բացի այն, որ սաղմնային կյանքի ուսումնասիրությունները մեզ ցույց են տալիս ճիշտ նմանօրինակի ստեղծելու անհնարինությունն ու այդ ճանապարհով անմահությունն ապահովելու անկարելիությունը, նաև մեր առաջ բացում են մարդկային էակի արարման երևույթի վերմարդկային հրաշախառն իրողություն լինելու անուրանալի փաստը: Եվ սրանով ևս առավել հիմնավորվում է մարդու արարման մասին Սուրբ Գրային վկայությունը՝ նրա Աստվածաստեղծ լինելու հանգամանքը, ինչպես նաև աստվածային այդ իրողության հանդեպ անտոնձգելիությունը:

Ե՞րբ է սկսվում կյանքը սաղմի մեջ<sup>62</sup>: Իրո՞ք նա մինչև տասներկու շաբաթական դառնալը կնոջ օրգանիզմի լոկ հավելվածն է, ինչպես երբեմն պնդում էին հղիության արհեստական ընդհատումն արդարացնող բժիշկները և ինչն այժմ փորձում են ապացուցել կլոնավորման փորձեր կատարող գիտնականները: Ժամանակակից գիտությունն արդեն շատ բան գիտի սաղմի կյանքի մասին:

Բժիշկների մեծ մասը գալիս է այն եզրակացության, որ անհնար է ապացուցել հրաշալի այն ընթացի առկայությունը, որից հետո սաղմը դառնում է երեխա, մարդ: Ահա հենց այս պատճառով այսօր Արևմուտքում ընդլայնվում են աբորտի դեմ ուղղված միջոցառումները: Իրավիճակը հակասական է. նրանք, ովքեր երբևէ պաշտպանում էին կնոջ աբորտ անելու իրավունքը, այժմ դրա դեմ են պայքարում: Ավելին, այդ պայքարում առաջընթաց ապրող գիտությունը նեցուկ է լինում եկեղեցուն:

---

<sup>62</sup> Մի քանի տարի առաջ ամերիկացի մանկաբարձ գիմեկոլոգ Բերնարդ Նաթանսոնը մի եզակի ֆիլմ նկարեց: Երկար տարիներ նա հղիությունների ընդհատման կլինիկայի ղեկավարն էր: Բայց այնպես եղավ, որ փորձված մասնագետը հանկարծ իր գործի մասին սկսեց խորհել՝ դիտելով այն բարոյագիտության տեսանկյունից: Ինչո՞ւ հանկարծ հմուտ վիրաբույժի վաղուց սովորական դարձած աշխատանքն ու բարոյաէթիկական ըմբռնումը հատվեցին:

Այս բոլոր հարցերին պատասխանում է հենց ֆիլմն ինքը հղիության արհեստական ընդհատման սարսափելիորությունը բացահայտելով: Այդ ֆիլմը դարձել է գիտնականների առաջին փորձերից մեկն է, որ օգնում է միայն գիտությանը և բարոյականությանը հավասարապես վերաբերող այս հարցի էությունն ըմբռնմանը:

Հույն Ուղղափառ Եկեղեցու մետրոպոլիտ Մելետին իր նշանավոր քարոզում, որը հղիության արհեստական ընդհատման դեմ ուղղված յուրօրինակ մի մանիֆեստ դարձավ, հենվում էր ոչ միայն եկեղեցական դոգմաների, այլ նաև ժամանակակից գիտական հետազոտությունների վրա<sup>63</sup>: Նմանատիպ գնահատականի հիմքում ընկած է այն համոզմունքը, որ մարդկային ծնունդն Աստվածային շնորհ է, դրա համար էլ, բեղմնավորման պահից սկսյալ, ապագա անձնավորության կյանքի հանդեպ ամենայն ոտնձգություն (աբորտի պարագային) հանցավոր է: Հանցավոր է նաև արարչադիր հրամանով աստվածապատկեր մարդու ստեղծման գործում (կլոնավորման միջոցով) կատարված ամենայն չար միջամտություն:

Հետևաբար մարդ արարածը, որ Աստծո պատկերով է ստեղծված դեռ վաղ բեղմնավորման պահին կյանքի է կոչվում Ամենաբարձրյալի նախախնամող աջի հովանավորությամբ: Մարդկային սաղմը պատահական բջիջների միասնությունն չէ, և ոչ էլ մարդկային քմահաճույքի արդյունք:

«Աճեցեք և բազմացեք» Աստվածաշնչային այս բացարձակ պարզ արտահայտության մեջ, ըստ էության հռչակվում է իր ցեղը շարունակելու յուրաքանչյուր մարդու իրավունքը: Իրավունքը բնական է և բացարձակության տեսակետից անշեղելի: Իսկ հրաժարվել բացարձակ ճշմարտությունը ճանաչելու հնարավորությունից, նշանակում է հրաժարվել նաև բանականորեն գոյություն ունենալու կարելիությունից, մատնվել հուսահատության կամ աննպատակ աճի: Եվ այս վերջինը նշանակում է ունայն ու աննպատակ կենցաղավարությամբ խեղդել տիեզերական արդարության և կյանքի նպատակի բացարձակ գիտակցությունը: Բանական մարդն ունի բանական հոգի. այս մասին է վկայում սրբազան առաքյալն՝ ասելով. **«Եթե կա շնչավոր մարմին, կա և՛ հոգևոր»** (Ա Կորնթ. 15. 44) և վա՛յ այն բանական մարդուն, ում կյանքը բանական նպատակ չունի, որովհետև նրա կյանքը բանական լինել չի կարող: Եվ այդպիսի մարդու գոյությունը թունավորում է իր բանականությունը՝ մերկացնելով աննպատակ և ոչ բա-

---

<sup>63</sup> ԼՐԴՎՈ կոնսպվՍՏ, ԻՊՏՐՏՉՖպ, 1992 չ. N 1, րՑՐ. 45.

նական կյանքի յուրաքանչյուր վայրկյանը, որովհետև ասված է նաև. «Չգիտե՞ք, որ Աստծո տաճար եք, և Աստծո հոգին է բնակվում ձեր մեջ: Եթե մեկն Աստծո տաճարն ապականում է, Աստված էլ նրան պիտի ապականի» (Ա Կորնթ. 3.16-17) :

Այսօր արդեն մուտք գործեցինք քսանմեկերորդ դար: Քսաներորդ հարյուրամյակը կարելի է գիտության դար համարել, քանզի այս վերջին հարյուր տարում այն աննախընթաց վերելք ապրեց և բազմաբնույթ հնարավորություններ ընծեռեց մարդկությանը ինքնաճանաչման ու աշխարհճանաչման ճանապարհին: Աշխարհի տարբեր երկրներ ունեցան իրենց ուրույն զարգացումը՝ սկսած խիստ կրոնական երկրից և վերջացրած ամենաանաստվածով: Ի դեպ, աստվածամերժ ներմատերիալիստները մարդկային ցեղն անծայր տիեզերքում համարեցին մի «պատահական կապկի» սերունդ, որն էլ իր հերթին իբր հետևանք էր սկզբնական նյութի, որի սկիզբն անհասանելի է մատերիալիստ գիտնականներին: Բայց այս գաղափարախոսությունն էլ, ինչպես հենց նյութն ինքը, վերջավոր էր և «համեստորեն» իր տեղը զիջեց առավել կատարյալ մի գաղափարախոսության, որ իրենից դեռ շատ ու շատ առաջ էր եղել:

Եիշտ է, միայն եռաչափ տարածությունը մասամբ ճանաչող մարդկային սահմանափակ մտածողությամբ, որ, իհարկե, մարդկային ողջ հնարավորության մի չնչին մասն է ընդամենը, առարկայորեն հնարավոր չեղավ ցույց տալ նաև աստվածային նախասկիզբը, որովհետև աչքերը փակող մարդուն կուրացուցիչ լույսն անգամ անկարելի է ցույց տալ: Բայց, փառք Աստծո, այսօր գիտության ու կրոնի համադրությամբ վճռական քայլեր են կատարվում ինքնաճանաչման բազմախոչընդոտ ճանապարհին: Այո՛, մեծագույն հայտնագործությունները շատ հաճախ են հավատքի փայլատակման պատճառ դառնում (այստեղ հարկ է հիշել Դիոնիսիոս Արիսպագացու օրինակը հենց Գործք Առաքելոցից և նրա դարձի պատճառ եղած ավանդական պատմությունը), իսկ ավելի հաճախ Աստծո նկատմամբ հավատքը լինում է դեռ սկզբնապես (ի դեպ, չնայած այն բանին, որ մարդու

ծագման մասին Չարլզ Դարվինի տեսակետը, հետագայում ձևավորված մատերիալիստական գաղափարախոսության հիմքում դրվեց, բայց բազմաթիվ գիտնականների շարքում ինքը ևս մինչև իր մահվան օրը աստվածաշտության խոր համոզմունք է ունեցել) և մեծագույն հայտնագործությունները հիմնված են լինում հենց այդպիսի հավատքի վրա: Արդ, ուր էլ որ տարածենք մեր թևերը, Աստծո սքանչելիքի մեջ ենք և կատարյալ առաջընթաց է զարգացման այն ընթացքը, որ ներդաշնակորեն իր մեջ ներառում է, թե՛ գիտության և թե՛ կրոնի ընձեռած տվյալները, զինվում է գիտության նվաճումներով՝ հաշվի նստելով դարերի ընթացքում կատարելության աստիճան մշակված հոգևոր ու բարոյական չափանիշների հետ: **Ժամանակակից մարդը ոչինչ է առանց գիտության, իսկ գիտնականն առանց հոգևորի վեհ գիտակցության պարզապես «զարգացած կապիկ» է:** Յետևաբար առաքինասեր ու բարի գործերով զարդարվածների մասին ասվեց, թե՛ «**Դուք եք լույսն աշխարհի: Թող այդպես փայլի ձեր լույսը մարդկանց առաջ, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր ճորը, որ երկնքում է**» (Մատթ. 5. 14-16,19): «Որովհետև թեպետ մի ժամանակ խավար էիք, հիմա լույս եք ի Տեր» (Եփես. 5. 8):

«**Նրանց լցրեց գիտության հանճարով, և նրանց ցույց տվեց չարն ու բարին,- ասում է Իմաստուն Սիրաքը,- Իր աչքերը դրեց նրանց սրտի մեջ՝ ցույց տալու համար նրանց իր գործերի մեծությունը, որպեսզի օրհնեն Իր Սուրբ անունը**» (Սիրաք 17. 6 -7): Եվ որպեսզի օրհնեն և լինեն նրա փառքի մեջ և ոչ թե հավակնեն Նրա զորությանը, անսալով բանսարկուի խոսքին, թե. «**Չեք մահանա..., այլ դուք կլինեք աստվածների նման....**» (Ծննդ. 3. 4-5): Առանց կլոնավորման էլ յուրաքանչյուր մարդու համար ապահովված է մահից հետո կյանքը: Մենք բոլորս «դատապարտված» ենք անմահության, (նմանատիպ համոզում ունեն անգամ մատերիալիստ գիտնականները՝ հիմնվելով էներգիայի պահպանման այն օրենքի վրա, համաձայն որի ոչինչ չի ոչնչանում, այլ մի ձևից փոխակերպվում է մեկ այլ ձևի), որովհետև մահվան քայքայումից հետո մարդուց մնում է այն, ինչից նա առաջացել է՝ մարդկային ցեղը, ողջ կենդանի

աշխարհն ամբողջությամբ և ի վերջո իր բանական հոգին, որ իր իսկ Արարչի պատկերով է ստեղծված: Եվ սկզբունքորեն նշանակություն չունի, որ մարդու հետնորդներն ուրիշներն են: Ըստ էության ողջ կենդանի և անկենդան աշխարհը մի բանից է սկիզբ առնում: Սա երբեմն շատերի ճաշակին չի համապատասխանում, բայց ոչինչ անել չես կարող, այսպիսին է Արարչագործության օրենքը: Եվ սա միայն ամրապնդում է այնպիսի հասկացությունների արդարացիությունը, ինչպիսիք են՝ «Արարիչ-Աստված» և «Յոգի», նրանց տալով բանական իմաստ և գիտական հիմնավորում:

Մարդու հոգևոր և մարմնավոր արարած լինելը բնականաբար ցույց է տալիս, որ իր մարմնով հարատևում է հողի կապակցությամբ, իսկ հոգով կենդանի է Աստծո հաղորդակցությամբ: Աստված, ինչպես որ մարդու մարմնի գոյության և բարեվայելուչ կյանքի համար նրան դրեց երկրային միջավայրում, այնպես էլ հոգու կենդանության ու զորավորության համար երանական վիճակի հնարավորություն տվեց նրան՝ ընծեռելով իր ամենամոտիկ հաղորդակցության հնարավորությունը: Բայց մարդու ձգտումն ու ազատ կամքի ճշմարիտ ուղղությունը երևան են գալիս միայն փորձության հանդիպած ժամանակ, իսկ այդ փորձությունը հնարավոր է լինում այն ժամանակ, երբ բացի Աստծուց մարդու հայեցողության առաջ մի գրավիչ աշխարհ ևս չի գտնվում: Այդ աշխարհը կարող է հրապուրել մարդուն և մինչև անգամ Աստծուն փոխարինել: Եթե մարդ իր հոգևոր հակման ճանապարհը բռնի, չի հրապուրվի իր աշխարհային սկզբունքով, իսկ եթե մարմնավորի ընթացքին հետևի, կարող է ենթարկվել արտաքին հրապույրի: Բարին և չարը դրված է նրա առաջ և նա կարող է ընտրել իր կամեցածը՝ կամ Աստծո կամքը և կամ արտա քին հրապույրը՝ հրաժարվելով այն ճշմարտությունից, որ վկայում է, թե մեր մարմինները Տաճար են Յոգու, որ մեր մեջ է, և որն ստացել ենք Աստծուց. և մենք մեր տերը չենք, քանզի գնով գնվեցինք և կոչված ենք փառավորելու Աստծուն մեր մարմինների մեջ: ( Յմն. Ա Կորնթ. 6. 19-20):

*Արդ երանելի է հավատքի լույսով պայծառացած մտքի տեր մարդը, առավել քան նրանք, ովքեր մտովի զարդարված են աշխարհային տեսակ-տեսակ գիտություններով, բայց անգետ և անհաղորդ են հավատքի ճշմարտու-*



թյուններին և աստվածային գիտության լույսով լուսավորված չեն: Գեղեցիկ է արտահայտվել այս մասին սբ. Հովհան Ոսկեբերանն իր “Հավատո ճառում”.

«Ինչ օգուտ, եթե մեր միտքը մարդկային բազմատեսակ հանճարներով ու գիտություններով զարդարված լինի, և աշխարհի մեջ պայծառ անուն ունենանք, բայց մոլի վարքով մոլորված՝ ախտավոր չար կրքերով հոգեկորույս խավարի մեջ հոգով խարխափենք»: «Ի՞նչ օգուտ կունենա մարդ, եթե այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կործանի» (Մատթ. 16.26):

Ուրեմն թող մարդը չկարծի, թե այդ արտաքին գիտություններն իր հոգու աչքերի համար լույս են, և թող չպարծենա, թե Աստծով լուսավորյալ բարի մարդ ու բարի քրիստոնյա է, այլ այդ իր մտքի լուսավորություն կարծածը քրիստոնեական հավատքի լույսի կողքին Սուրբ Ավետարանի խոսքի համաձայն ուղղակի խավար է, ըստ այնմ, թե՝ «Քո մեջ եղած լույսը խավար է»<sup>64</sup> (Մատթ. 23):

Խավար, որ ոչ միայն իրեն՝ խավարամոլին է վնասում այլ կարող է վնասել շրջապատում եղող բոլորին, որվհետև իրոք վտանգավոր է խավարասեր այն կույր մարդը, որ զուրկ է նաև իր նմանի հանդեպ ունեցած Սիրուց և նրա ամեն քայլը կարող է հղի լինել թե՛ միտումնավոր և թե՛ պարզապես չգիտակցված վնասաբեր գործողություններով: Բայց այստեղ ևս տեղին ու փրկարար է առաքյալի այն խոսքը, թե. **«Ամեն ինչ փորձեցեք, բարին ամուր բռնեցեք»** (Ա Թես. 5. 21):

**Հիրավի, երբևէ հնարավոր չի եղել կանգնեցնել արդեն թափ առած գիտության ընթացքը, եթե նույնիսկ այն վերահաս վտանգով է սպառնացել, ուստի մնում է այն ի բարին ուղղորդել:**

---

<sup>64</sup> Տե՛ր Մատթեոս արքեպիսկոպոս, Բարի մարդ և բարի քրիստոնյա, Կ. Պոլիս, 1856թ, էջ 289:

## Հավելված

### Աշխարհի դիրքորոշումն ու եկեղեցիների տեսակետները կլոնավորման և կենսաբանատեթիկական այլ խնդիրների մասին

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու տեսակետն առողջության  
և կենսատեթիկայի մասին որպես բարոյական խնդիրների<sup>65</sup>

Գիտության զարգացմանը զուգահեռ զարգանում է բժշկությունը:

Հիվանդությունը նախնական (ադամական), ինչպես նաև  
ժառանգական և անձնական մեղքի հետևանք է:

Հոգու և մարմնի ամբողջական բժշկությունը Քրիստոսի կոչումներից  
մեկն էր, այս պատճառով էլ Քրիստոնեական Եկեղեցին հատուկ հարգանքով է  
վերաբերվում բժշկության դրական նվաճումներին: Եկեղեցին և առողջապա-  
հությունը գործակիցներ են մարդու ամբողջական՝ հոգու և մարմնի բուժման  
համատեղ աշխատանքում, Եկեղեցին՝ խորհուրդների և աղոթքների միջոցով,  
իսկ բժշկությունը՝ իրեն հատուկ միջոցներով: Այս պատճառով էլ  
հանձնարարելի է, որ ժամանակակից բժիշկները լինեն հավատացյալ և  
մասնակից քրիստոնեական Եկեղեցու խորհուրդներին և ծեսին:

Դեռևս 365թ. Աշտիշատի ժողովի կանոններով, Ներսես Մեծը Հայաստա-  
նում բացեց հիվանդանոցներ, անկելանոցներ, ուրկանոցներ, որբանոցներ,  
որոնց սպասավորները, բացի հոգևոր ծառայողներից և բժիշկներից, պարզ  
աշխարհական հավատացյալ կամավորներ էին:

Ներկայումս նույնպես Հայաստանյայց Եկեղեցին ձեռնամուխ է  
հիվանդանոցներում և այլ բուժօգնականություններում փոքրիկ  
աղոթատեղիների բացմանը, գթության քույրությունների և  
եղբայրությունների՝ հիվանդների հանդեպ հատուկ հոգածությանը:

---

<sup>65</sup> Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակ:

Հայ իրականության մեջ քաջ հայտնի է միջնադարի հնուտ բժշկապետ Մխիթար Հերացու անունը, ինչպես նաև հավատացյալների շրջանում ի հնուց անտի տարածված է եղել ժողովրդական բուժման Նարեկի հրաշագործ հատկությունը:

Բժշկության զարգացմանը զուգընթաց զարգանում է նաև կենսաբժշկությունը՝ նաև հայտնի իր բացասական տարբերակով՝ մարդու բարոյական ու ֆիզիկական կառույցի վրա արտաքին կասկածելի միջոցների ուղղակի ներգործությամբ՝ նրա բնական աստվածային կոչումը խեղաթյուրելու փորձարարությունը: Այսպիսիների շարքին է դասվում արհեստական վիժումների (աբորտ) պրակտիկան:

Հայ եկեղեցին հնուց ի վեր դատապարտել է արհեստական վիժումը՝ այն համարելով մանկասպանություն և մինչև այժմ անգամ տասնամյա ապաշխարանքի շրջան է պարտադրել մեղանշողի համար: Ի միջի այլոց, այս պատիժը սահմանված է ոչ միայն պտղի, այլև մոր՝ հենց ինքն իր կյանքին վտանգ սպառնալու պատճառով: Ցավոք, ներկայումս արհեստական վիժեցումը կենսաբժշկության բացահայտ միջամտությամբ վերածվել է օրինական կենսաձևի, որի դեմ եկեղեցին չի կարող չարտահայտել իր անհանգստությունը: Մայրության և ընտանիքի պահպանության խնդիրը եկեղեցու, ինչպես նաև պետության առաջնային հոգածության առարկան պետք է լինեն: Ընդհակառակը, կենսաբժշկությունը իր ողջ ներուժը պետք է կենտրոնացնի անպտղաբերության հիվանդության հաղթահարման ուղղությամբ և ոչ թե կենդանի պտղի սպանության:

**Կաթոլիկ եկեղեցու հայտարարությունը կլոնավորման ուղղությամբ կատարվող փորձերի մասին**

Վատիկանի մամլո ծառայության կողմից տարածված հաղորդագրությունը բացատրում է, որ հասարակության կողմից կլոնավորման դատապար-

տուճն անհրաժեշտություն է՝ ի պաշտպանություն էմբրիոնի մարդկային արժանապատվության:

2001թ. Նոյեմբերի 26-ին ACT-ի հետազոտողների կողմից «The Journal of Regenerative Medicine»-ում տպված հոդվածը ցույց է տալիս տեղի ունեցած իրադարձության լրջությունն իր ողջ դրամատիկ բնույթով: Այն է մարդկային էմբրիոնի «in vitro» արտադրությունը, ավելին՝ մինչև 2, 4 և 6 բջիջների առաջացման փուլը զանազան էմբրիոնների առանձին-առանձին զարգացումը: Իրադարձությունը փաստված է մանրադիտակային միջոցներով ստացված պարզ, գունավոր նկարներով, որոնք ցույց են տալիս մարդկային այս կյանքի առաջին փուլերը, որն ստացվել է ոչ թե մի ձվաբջիջը մեկ սպերմատոզոյի դի հետ բեղմնավորելով, այլ սոմատիկ բջիջների նյարդային կենտրոնների հետ ԴՆԹ-ի ակտիվացմամբ:

Հեղինակները շեշտել են, որ իրենց հայտնագործությունը որևէ անհատ մարդ էակի սկզբնավորության պատճառ չի դառնալու, այլ առաջացնելու է այն, ինչն իրենց հոդվածում ներկայացված է իբրև «Վաղ շրջանի սաղմ»: Այդ դեպքում ինչ է սաղմն սկզբնական փուլում: Այստեղ է, որ կենսաբանագիտական հարցն իհայտ է գալիս իր ողջ ընթացիկ կարևորությամբ երբևէ հարցադրված այն ճշմարտության պատճառով, թե երբևէ կարելի է հաշվել մարդկային կյանքի սկիզբը: Փաստորեն սա առավել քան գիտական մի իրադարձություն է, որ քննարկման առարկա է մնում, որովհետև հենց հետազոտողների ցուցումի համաձայն այս իրավիճակում մեր առաջ անկասկած մարդկային էմբրիոններ են, ոչ թե բջիջներ ինչպես ոմանք կուզենային մտածել:

Այդ իսկ պատճառով, այս իրողությունը ոմանց կարող է մղել հարկադրաբար հաստատելու, որ մարդկային կյանքի սկիզբն ընդհանուր համաձայնությամբ էմբրիոնների զարգացման որոշակի փուլից չի կարող ֆիքսվել: Փաստորեն այն արդեն ֆիքսված է էմբրիոնների գոյության հենց առաջին պահից: Սա առավել հեշտ ընկալելի է սպերմատոզոյի և ձվաբջջի բեղմնավորման ճանապարհով: Բայց մենք պետք է սովորենք ճանաչել նաև այն անբնական ճանապարհը, ինչպիսին է սոմատիկ բջջի վերածրագրավո-

րունը ձվաբջջի մեջ: Այս ճանապարհով կարելի է նոր կյանքի սկիզբ դնել, ինչպես որ դժբախտաբար ցույց տվեց հայտարարված փորձարկումը: Կյանք, որ ամեն դեպքում պահպանում է իր առանձնահատկությունը (արժանապատվությունը) ինչպես ցանկացած մարդկային կյանք՝ իր գոյության ձևի մեջ:

Այդ պատճառով, չնայած հայտարարված մարդասիրական միջոցներին, թե կարելի է կլոնավորման արդյունաբերման այս ճանապարհով ընթանալ և կարելի է անակնկալ բժշկումներ կատարել, անհրաժեշտ է օբյեկտիվ, բայց հաստատուն դատավճիռ, որ ցույց է տալիս այս նախագծի բարոյական լրջությունը և արդարացնում է դրա աներկբայելի դատապարտումը:

Առողջության և բարեկեցության անվան տակ ներկայացված սկզբունքն իրականում մարդկային արարածների միջև պարզ խտրականություն է հաստատում՝ ըստ նրանց զարգացման տարբեր փուլերի (այսպիսով էմբրիոնն ավելի քիչ արժանիքներ ունի, քան սաղմը, սաղմն ավելի քիչ, քան երեխան, երեխան ավելի քիչ քան չափահասը)՝ չեղյալ համարելով բարոյական հրամայականը, որ ընդհակառակը առավելագույն խնամատարական և պատշաճ հարգանք ունենալու պարտականության տակ է դնում նրանց հանդեպ, ովքեր անկարող են իրենց ներքին արժանապատվությունը պաշտպանելու գործում:

Բացի այդ, ցողունային բջիջների վրա կատարվող հետազոտությունները ցույց են տալիս, որ դրան կարող են այլ ձևեր հաջորդել, որոնք բարոյապես ընդունելի են գիտության տեսակետից, ինչպես, օրինակ, այն բնային բջիջների օգտագործումը, որոնք վերցված են չափահաս անհատներից, կամ մայրական արյունից, կամ բնական ճանապարհով վիժված սաղմերից: Սա այն ճանապարհն է, որին պետք է հետևի մարդու՝ այսինքն իր համար առավելագույն արժանապատվություն ձեռք բերելու ցանկություն ունեցող յուրաքանչյուր գիտնական:

Մոսկվայի պատրիարքության հայտարարությունը «Մարդու կլոնավորման էթիկական անթույլատրելիության մասին»<sup>66</sup>

1. Աշխարհը բռնած գլոբալ ճգնաժամը նշանակալիորեն ստեղծված է գիտահետազոտական ուղղությունների և նրանց ձեռքբերումների կիրառման ուղիների մասին որոշումների դեպքում էթիկական չափանիշների անտեսմամբ: Մարդու հոգեբարոյական ու նրա գիտահետազոտական գործունեության միջև համաձայնության վերականգնումն այսօր ոչ միայն ցանկալի է, այլև շատ բաներում կանխորոշում է մարդկային քաղաքակրթության հետագա գոյության հնարավորությունը: Միայն թե ժամանակակից գիտության խորքերում երբեմն վտանգավոր նախագծեր են ծնվում, որոնց մեջ հատուկ տեղ է զբաղեցնում մարդու կլոնավորման՝ սոմատիկ (մարմնական) բջիջներից ինքնուրույն օրգանիզմի վերարտադրության գաղափարը: Եվ գիտական և կրոնական տեսակետից այդ գաղափարը բացարձակորեն անընդունելի է: Գործնականում դրա իրականացումը կավերի սոցիալական հարաբերությունների բնական հիմքը՝ յուրաքանչյուր առանձին մարդու կյանքի հետագա արժեզրկման ուղղությամբ աշխարհայացքային կառույցներում աղետալի փոփոխությունների պատճառ դառնալով: Եվ մարդը կդադարի որպես Աստծո առանձնահատուկ ստեղծագործություն ընկալվելուց: Արժե առանձնակի նշել, որ կլոնացման միջոցով անձնական ֆիզիկական անմահության կարծեցյալ նպատակի իրականացումն սկզբունքորեն հնարավոր չէ, քանի որ մարդու ողջ կյանքի ընթացքում ձևավորվող հոգեկան աշխարհը, որ նրա մարդկային անձի միջուկն է, կլոնավորման դեպքում վերարտադրվել չի կարող: Մարդու կլոնավորումը հակաբարոյական, մարդկային անձը կործանման տանող, Արարչին մարտահրավեր նետող անմիտ քայլ է, ըմբոստացում է Աստծո դեմ, ինչը չի կարող ողբերգական հետևանքներով չանդրադառնալ:

---

<sup>66</sup> ՕՏՐՍՏՂՐՍՈՒՄ ԿՈՏՐՈՂՈՒՄՑ ԵՄԻՍԿՐԻՍՏԻՆԻ ԿԿԹՉ ԿԿ ԸԼԿԾԺԼԵԼԾ-ԻՆԿԼ ՆՁԼԻՄԺ

- Այժմ գոյություն ունի գիտականին մոտ, կիսահանցագործ հետազոտական այնպիսի խմբերի ստեղծման վտանգ, ովքեր կլոնավորման «հրաշքների» միջոցով ապօրինի ճանապարհներով հարստացման են ձգտելու:

- Կլոնավորումը մարդկային արժանապատվության ու անձնական անձեռնմխելիության հանդեպ սպառնալիք կարող է ստեղծել՝ մարդու ժառանգականությունն անպաշտպան դարձնելով կողմնակի միջամտությունների համար:

- Մեծաքանակ կլոնավորումը միջամտություն կլինի մարդկային քաղաքակրթության ժառանգական բազմազանության մեջ, որ նշանակում է միջամտել սոցիալական ու կենսաբանական բուն էությանը, ներառյալ արտաքին անբարեհաճ ներգործությունների ու այլազան հիվանդությունների հանդեպ կայունությանը: Վերջին հաշվով հնարավոր է այլասերում՝ մարդկության դեգրադացիա:

- Որոշակի գենոտիպերի քանակային թողարկումը չարամետ մարդկանց կողմից կարող է օգտագործվել հանցագործ և (կամ) միլիտարիստական պլանների իրականացման նպատակով, որոնց բացասական հետևանքները համարժեք կլինեն կամ նույնիսկ կգերազանցեն ամբողջական ժողովուրդների ցեղասպանություններին:

Իսկ ինչ վերաբերում է ժամանակակից մոլեկուլյար գենետիկ ամբողջական շարքերին հավասար կերպով մեկուսացված բջիջների ու կենդանի օրգանիզմների հյուսվածքների կլոնավորմանը, ապա այդ տեխնոլոգիաների դեմ ոչինչ ասված լինել չի կարող, քանի որ դրանք մարդկային անձի ինքնավարությունը չեն խաթարում և միանգամայն օգտակար են գիտահետազոտական աշխատանքներում, բժշկական ու գյուղատնտեսական գործընթացում:

Մոսկովյան պատրիարքության բժշկական էթիկայի գծով խորհուրդն իր պարտքն է համարում զգուշացնել մարդու կլոնացմամբ սպառնացող վտանգի մասին՝ դիմելով բոլոր նրանց, ովքեր մասնակից են տվյալ բնագավառի ուսումնասիրություններին, կոչ անելով, որ հրաժարվեն հետագա

գործընթացներից, որ բոլոր միջոցները ձեռնարկեն թույլ չտալու համար ոչ միայն մարդու կլոնավորման կանոնադրական իրավահաստատումը, այլ նաև հասարակական գիտակցության վրա ներգործությունները, նրանց մեջ բարոյաէթիկական թույլատրելիության ու այդ գործընթացի անվտանգության մասին պատկերացման ձևավորումը: Մենք դիմում ենք նաև այլ կրոնների մարդկանց ու այլ դավանանք ունեցողներին խնդրանքով, որ պաշտպանեն մեր դիրքորոշումը:

Այսօր մարդկային քաղաքակրթության պահպանման հնարավորությունը կախված է նրանից, թե ինչպիսի արժեքների կտրվի առաջնայնությունը: Նրանից, թե կբավարարի՞ արդյոք բարոյական ուժերը դիմակայելու այն գայթակղությանը, ըստ որի ոչ մեծ թվով մարդկանց կյանքը պիտի շարունակվի բազմաթիվ այլոց գիտակցաբար ոչնչացման հաշվին, նրանց հավանական դոնորների, կենսաբանական զանգվածի, «պահեստային մասերի» զետեղարանի վերածելու հաշվին:

Խորհուրդը կարծում է, որ Ռուսաստանի դաշնության քաղաքացիներին մարդու կլոնավորման ինչպես ակնհայտ, այնպես էլ անկանխատեսելի բացասական հետևանքներից զերծ պահելու իզորու իրավական չափանիշը պետք է դառնա այդ բնագավառում ցանկացած հետազոտությունների ու գործունեությունների վրա արգելք դնող օրենքի նորման:

Մոսկվա, 20 հոկտեմբերի 1999 թ.

2<sup>67</sup>. 2001թվականի Նոյեմբերի 27-ին Ռուս Ուղղափառ Եկեղեցին, ԱՄՆ – ում կատարված, մարդկային սաղմի կլոնավորումը կտրականապես դատապարտում է, ասելով, որ հետազոտությունների համար վերցված սաղմի քայքայումը հավասարազոր է սպանության: «Մենք դատապարտում ենք թե թերապևտիկ, և թե վերարտադրման նպատակով կատարվող կլոնավորումը, որովհետև գիտակցականության գալու պահից արդեն սաղմը կարող է մարդկային արժանապատվության կրող համարվել», – ասում է Մոսկվայի Պատրիարքության պաշտոնական ներկայացուցիչ Անտոնի Իլյինը, նա նշում է որ.



ա) Ամերիկյան հետազոտություններն (կլոնավորված սաղմի սպանությունը որպես բնային բջիջների ստացման աղբյուր) Ուղղափառ Եկեղեցու համար ավելի մեծ մեղք են, քան անպտուղ զույգերին օգնելու նպատակով կատարվող կլոնավորումը: Համենայն դեպս այս պարագայում, երբ վերարտադրող կլոնավորման մասին են խոսում, ենթադրաբար դա արվում է կլոնավորված անձի նկատմամբ լավագույն ցանկություններով: Իսկ ներկա պահին խոսքը որպես փորձարկման նյութ սաղմի գործածման մասին է:

բ) Հետազոտությունների արդյունքում «ցողունային բջիջների հավասարազոր կեղծ բջիջներ կստացվեն, որոնց այլընտրանքային բնական աղբյուր է ողնաձուծը, արյունը և մարմնի այլ մասերը, որոնք սակայն հանուն այլ մարդկանց բարորության կիրառել չի կարելի:

գ) Նա ասում է, թե Ռուս Ուղղափառ Եկեղեցին, որ 147 միլիոնանոց երկրի իշխող հավատքն է, ամեն հնարավորը կանի կլոնացումն արգելող օրենքին աջակցելու համար, եթե այդ հարցը բարձրանա նաև Ռուսաստանում:

Ամերիկայի ուղղափառ եկեղեցու հայտարարությունը  
կլոնավորման տեխնոլոգիայի մեջ ժամանակակից  
գործընթացների մասին<sup>68</sup>

Մեր ժամանակներում հասուն ոչխարի բջջից նոր ոչխարի կլոնացումը ճանապարհ բացեց ցանկացած կենսաբանական տեսակի, այդ թվում նաև մարդու, կլոնավորման: Չնայած ոչ ոք չի կարող խոչընդոտել գիտական որոնումներին և այդ ուղղությամբ փորձարկումներին, սակայն հարց է ծագում, թե ԱՄՆ-ի կառավարությունն արդյո՞ք պետք է արգելի կամ կանոնավորի այդ գործունեությունը և հասարակական ֆինանսավորում պետք է տրամադրի, թե՞ ոչ:

<sup>67</sup> RUN <http://dailynews.yahoo.com>

<sup>68</sup> Անգլերենից թագմանությունը Իրինա Սիլուանովայի (Պրեսս-րելիզ. 11 մարտի 1997թ.)

Ողջ աշխարհի ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչները հավատարիմ են մնում մարդկային կյանքի խորհրդավորությանը վերաբերող խստությանը. յուրաքանչյուր մարդ «Աստծո պատկերով» ստեղծված է որպես եզակի անհատականություն: Դրա համար էլ ուղղափառ գեներտիկների ճնշող մեծամասնությունը պնդում է, թե եվգենիկայի բոլոր ձևերը այդ թվում նաև թերապևտիկ նպատակներից դուրս մարդկային գեներտիկ նյութի մեքենայացումները՝ բարոյական առումով գարշելի են և սպառնում են մարդկային կյանքին ու բարօրությանը: Արդեն ավելի քան տաս տարի է, ինչ գարգանում են կենդանիների վրա կլոնավորման փորձեր կատարող տարբեր տեխնոլոգիաներ, խոստանալով մարդկային կյանքը երկարաձգել նոր դեղերի, սպիտակուցների և այլ օգտակար նյութերի ստեղծման շնորհիվ: Այդպիսի ջանքերը հասարակական նեցուկի ու ֆինանսավորման են արժանի: Միայն թե մարդկային կլոնավորման հեռանկարները «թեք հարթության» առավել չարորակ պատկեր են ստեղծում: Անկյալ աշխարհում, որտեղ իրավունքները գերազանցում են պատասխանատվությանը, տեխնոլոգիական կլոնացման մեջ մարդկային բջիջների օգտագործումն անխուսափելիորեն չարաշահումների, «առաջնային» ԴՆԹ-ի շուկայականացման, «պահեստային մասերի» ստացման նպատակով երեխաների արտադրության, «բարձրակարգ մարդ ստանալու» ուղղությամբ շարժման է տանում: Ավելին, ներկա ժամանակում գիտնականներն ի վիճակի չեն որոշելու, թե ընտրված բջիջն իր մեջ մուտացիաներ կամ այլ թերություններ պարունակում է՞ արդյոք, թե՞ ոչ, որոնք կարող են խեղված արատների կամ մտավոր զարգացման արգելակման տանել կլոնացված երեխային:

Այս փաստերի լույսի ներքո Ամերիկայի Ուղղափառ եկեղեցին վճռակա-նորեն խորհուրդ է տալիս, որպեսզի կառավարությունն արգելի մարդկային կլոնների ստեղծման փորձարկումները և չվերանայի նման գործունեության ֆինանսավորման ծրագրերը: Այդպիսի գործունեության մորատորիան ծայրաստիճան անհրաժեշտ է:

Ամերիկայի ուղղափառ եկեղեցի:

Պաշտոնական տարբեր հայտարարություններ կլոնավորման մասին<sup>69</sup>

Մարդկանց կլոնավորման փորձն առաջինը դատապարտողներից մեկը եղել է ՅՈՒՆԵՍԿՈՅԻ նախագահ Ֆեդերիկո Մայորը:

«Ցանկացած հանգամանքների առկայության դեպքում մարդը կլոնավորման նյութ չպետք է դառնա»։ նշում է նա: Նախագահի կողմից հրապարակված հայտարարությունում նշվում է, թե չնայած որ էդինբուրգում Ռոսլինյան ինստիտուտի գիտնականների հաջողությունը գիտության զարգացման նոր հորիզոններ է բացում կենդանի նյութի, մասնավորաբար սաղմնաբանության և գենետիկայի ասպարեզում, բայց դա նաև բազմաթիվ հարցեր ու վտանգներ է հարուցում:

«Մենք պարտավոր ենք մարդուն պահպանել իր ողջ, թե կենսաբանական և թե բնութենական անվերջանալի այլազանության և յուրատեսակության մեջ», - նշել է ՅՈՒՆԵՍԿՈՅԻ ղեկավարը:

Ֆեդերիկո Մայորը ՅՈՒՆԵՍԿՈՅՈՒՄ գործող բիոէթիկայի գծով կոմիտեին հանձնարարել է եզրակացություն պատրաստել, ըստ որի պարզ կդառնա, թե ներկա ժամանակներում պատրաստվող մարդու գենոմի և մարդու իրավունքների մասին «Հանընդհանուր հայտարարությունը» որքանով է առնչվում մարդու կլոնավորմանը, ինչպես նաև յուրաքանչյուր անհատականության արժանապատվությանը և ինքնավարությանը վնասող այդ տեխնոլոգիայի կիրառությանը:

ԱՄՆ-ի նախագահ Բիլ Բլինթոնը Միացյալ Նահանգների կոնգրես է ուղարկել մի օրինագիծ, որով մարդկանց կլոնավորումն արգելվում էր ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ինստիտուտներում: Պրեզիդենտի խոսքերով, դա պոտենցյալ վտանգով է սպառնում ընտանիքի ու մեր իդեալների սրբազան հիմքին: Չնայած նա միաժամանակ նկատել է, որ տվյալ նախաձեռնությունը հնարավորություն է ընձեռում կենդանիների ու

---

<sup>69</sup> Ժոզսոն Ռ Բասկեթ, N12, ըպրպչոՅպր ՎցՋփոՎ, 2. կրոՉՑՑՏՐՏՉՈ, 1998ջ , թՑՐ. 33.

բույսերի կլոնավորման համար, որով հեռանկար է բացվում հիվանդությունների բուժման և բույսերի առավել մթերային տեսակների ստեղծման հեղաշրջող նոր մեթոդների ստեղծման համար: Քլինթոնն ընդգծել է, որ մարդու կլոնավորմանն ուղղված ցանկացած ոսումնասիրությունների պետականորեն ֆինանսավորման արգելումը կգործի մինչև նոր օրենքի ուժի մեջ մտնելը, որն ուղղված կլինի «Մարդու կյանքի խորհրդավորության» պահպանմանը: Նա մասնավոր կենտրոններում աշխատող գիտնականներին կոչ է արել ձեռնպահ մնալ այդ մորատորիայից:

Պաշտոնական Բոննը մտադիր է կլոնավորման արգելմանը հասնել բոլոր եվրոպական երկրների տարածքներում: Այդ մասին հայտարարել է գիտության, գիտական ուսումնասիրությունների և տեխնոլոգիաների զարգացման ֆեդերալ նախարար Յուրգեն Բյուտտգերսը, «ՆՕՅՍ ՐՈՒՐ-ՑԱՅՏԳՈՒՆ» թերթում տված հաղորդագրությամբ: «Ես վճռականորեն կպայքարեմ հանուն այն բանի, որ մարդու կլոնավորումը եվրոպայում լիարժեքորեն արգելվի», - ընդգծել է նա:

«Մեծ ութնյակի» մասնակիցները, ներառյալ Ռուսաստանը, կլոնավորման հնարավորության մասին հարցը վերանայելով, հայտարարեցին «Մարդ ստեղծելու նպատակով» կլոնավորման մեթոդների օգտագործման արգելքի վերաբերյալ իրենց վճռականության մասին:

Կլոնավորման դեմ առավել վճռականորեն իրենց ձայնն են բարձրացնում քրիստոնեության ու իսլամի ներկայացուցիչները:

«Ալ-Գումուրիա» թերթում հրատարակված հայտարարության մեջ, աշխարհի իսլամական խոշորագույն համալսարանի մահմեդական իրավունքի պրոֆեսոր Ալ-Ազխար Մաուտի Բիբունին ընդգծել է, որ ցանկացած կրոնի կանխադրույթների համաձայն, «այն ինչ բարու ավելցուկից է արվում վնասակար է, մեղք է»: Ամենաբարձրյալի կողմից բոլոր կրոնների մեջ ներդրված ընդհանուր ճանաչողություն ունեցող օրենքները,- ընդգծել է մահմեդական իրավագետը, -այնպիսի հասկացողություններ են նախատեսում, ինչպիսիք են առողջությունը, հիվանդությունները, պատասխանատվությունը, պատիժն ու ազատությունը: Բացարձակորեն ակնհայտ է, որ կրոնի

հիմնական արժեքները ոտնահարելու համար ձեռք առնվող փորձերը միայն հավելյալ բարդություններ են ստեղծում ողջ մարդկության համար: «Դրա համար ես պահանջում եմ դադարեցնել մարդկային բնության վրա կատարվող բոլոր փորձերը, որոնք խախտում են համընդհանուր ճանաչում գտած բարոյական ու կրոնական արժեքները»:

Մարդու կլոնավորման երևույթը կտրականորեն դատապարտել է նաև Ամերիկայի Ուղղափառ Եկեղեցին: «Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչները բոլոր դեպքերում մնում են մարդկային կյանքի խորհրդավորության ըմբռնման խստության ամենահավատարիմ պաշտպանները, - ասվում է եկեղեցու կողմից 1997 թ. մարտի 11-ին արված հայտարարության մեջ:

- Յուրաքանչյուր մարդ «Աստծո պատկերով» ստեղծված է որպես համակողմանի անհատականություն: Դրա համար ուղղափառ բարոյագետների ճնշող մեծամասնությունը պնդում է, որ լավասերման (ուսմունք մարդկային ցեղի բարելավման մասին) բոլոր ձևերը, ներառյալ մարդկային գենետիկական նյութի արտաթերապևտիկ նպատակներով օգտագործումը, բարոյական տեսակետից գարշելի են և սպառնում են մարդկային կյանքին ու բարօրությանը»:

Հռոմեական կաթոլիկ եկեղեցու պետ Հովհաննես Պողոս II-ը նրանց համեմատել է «Տաճարում առևտուր անողների» հետ՝ հիշեցնելով Ավետարանական այն դրվագը, որտեղ Հիսուս Քրիստոս Երուսաղեմի տաճարից քշում է բոլոր նրանց, ովքեր միտումնավոր կերպով էին օգտագործում աղոթքի համար նախատեսված կառույցը: Պապի գնահատմամբ, այդ փորձերը «մարդու համար ամենավտանգավոր ու առավել վնասակար գայթակղություններից են», որին, ըստ նրա խոսքերի ենթարկվում են «Արդիական տաճարի առևտրականները»:

Վատիկանի այդ դիրքորոշումը հրապարակելով «ՕՍՍԵՐՎԱՏՈՐԻԵ ՌՈՄԱՆՈ» թերթն ընդգծում է, որ նմանատիպ ուղիներն ու մեթոդները նախ և առաջ հակասում են Աստծո արարման գաղափարին, և երկրորդ հերթին, վիրավորում են անհատականությունն ու ամուսնության ինստիտուտը: «Մարդն իրավունք ունի մարդավարի ծնվելու, այլ ոչ թե լաբորատորիայում:

Այս սկզբունքներով գործելու անհնարինությունը պետք է մեկնաբանվի ոչ թե որպես գիտության դեմ հակառակություն կամ զարգացման ընթացքի արգելակ, այլ որպես մարդու և նրա գոյության համար հիմնախնդրային եղող արժեքների պաշտպանություն»: «Միանգամայն ցանկալի կլիներ, որ առանձին պետություններ անհապաղ օրենք ընդունեին, որով արգելվեր մարդու կլոնավորումը և ամեն ինչի թույլատրելիության կառույցներին կարողանային ուժ հակադրել և ոչ մի տեսակի զիջումներ չթույլատրվեր: Դա գիտակցականության ու մարդկայնության համառ պահանջն է»:

Եվ այսպես, թերթի կարծիքով մարդու կլոնավորման կրոնական արգելքը չի կարելի մեկնաբանել որպես գիտության հետ հակասություն:

<sup>70</sup>Ռուսաստանի պետդումայի առողջապահության հանձնաժողովի խոսնակ Վլադիմիր Ուսանովը Ռեկերզին ասել է, որ Խորհրդարանը հավանաբար տարվա վերջում կհաստատի մարդկային սաղմի կլոնավորման հնգամյա մորատորիումի համար կառավարության նախաձեռնած օրինագիծը:

---

<sup>70</sup> RUN <http://dailynews.yahoo.com>

## Տերմինների այբբենական ցանկ

ԱԴԻՊՈՑԻՏ – ճարպային բջիջ

ԲԻՈԷԹԻԿԱ - Բարոյագիտություն կենսաբանական հարցերի մասին

ԳԵՄՈՖԻԼԻԱ - Արյան հիվանդություն

ԳԵՄՈՊՈԵՏԻԿ - Արյան բաղադրություն կազմող բջիջներ

ԴԵՆՏՈԼՈԳԻԱ - Գիտություն բժշկական էթիկայի մասին

ԴՆԹ – Ժառանգականություն կրող նյութ

ԴՐՈՁՈՖԻԼԱ - ճանճի տեսակ, որ օգտագործվում է գենետիկ փորձերի համար

ԶԻԳՈՏ - Արական և իգական բջիջների միասնություն

ԷՄԲՐԻՈՆ – Սաղմ

ԷԼԵԿՏՐՈԷՆՑԵՖԱԼՈԳՐԱՖ – Ուղեղի էլեկտրական ակտիվությունը գրանցող սարք

ԷՖԹԱՆԱԶԻԱ - Անբուժելի հիվանդների կյանքի միջնորդավորված ընդհատում

ԼԻՊՈՍԵԿՑԻԱ - ճարպագատում

ԽՈՆԴՐՈՑԻՏ – Կրճիկային բջիջներ

ՄԻՈԲԼԱՍՏ – Մկանային բջիջ

ՄՈՒՏԱՑԻԱ - Նոր հատկանիշների անակընկալ հայտնվելը, կապված գենետիկական նյութի փոփոխման հետ

ՆՈՒԿԼԵՈՏԻԴ - ԴՆԹ-ի մասնիկ

ՊԼԱՁՄԻԴ - ԴՆԹ-ի շրջանաձև մոլեկուլ է, որ գտնվում է բակտերիայի

ցիտոպլազմայում

ՍՈՄԱՏԻԿ – Մարմնական բջիջ

ՍՊԵՐՄԱՏՈՁՈՒԴ - Սեռական արական բջիջ

ՍՏՐՈՄԱԼ – Վնասվածքների վերականգնմանը մասնակցող բջիջներ

ՏՐԱՆՍՊԼԱՆՏԱՑԻԱ - Օրգանների պատվաստում

ՏՐՈՏԻԼ – Պայթուցիկ նյութ

ՑԻՏՈՊԼԱՁՄԱ - Բջջի բաղադրիչ

ՔՐՈՍՈՍՈՍ – Գենետիկ ինֆորմացիա պարունակող բջջի բաղադրիչ մաս

ՕՍՏԵՕԲԼԱՍՏ – Ոսկրային բջիջ

ՖԵՐՄԵՆՏ – Սպիտակուցային բնույթի կենսաբանական կատալիզատոր

ՖԱԼՈՊՅԱՆ ՓՈՂ – Ձվարանից դեպի արգանդ տանող փող

## Օգտագործված գրա կանուրթյան ցանկ

### Սկզբնաղբյուրներ

1. Աստուածաշունչ Մատեան Հին և Նոր Կտակարանաց, Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, Great Britain, 1997թ:
2. Աստվածաշունչ Մատյան Հին և Նոր Կտակարանների, Արևելահայերեն նոր թարգմանություն, հրատ. Հայաստանի Աստվածաշնչային ընկերության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1994թ:
3. Բազմավեպ, Օրագիր ազգային, բարոյական և բանասիրական, Հատոր քսանվեցերորդ, Վենետիկ, Ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1868թ:
4. Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, Ի թուին Հայոց Ռ Ե Հ Ը:
5. Խրիմյան Հայրիկ, Երկերի ժողովածու, Երևան, Պետ. համալսարան 1992թ.:
6. «Կանոնագիրք հայոց» Հ. Բ., աշխատասիրեց՝ Վազգեն Հակոբյան, ՀՍՍՀ, ԳԱ պատմ. ինստ. հր., Երևան, 1971թ:
7. Մ. Դոստոևսկի, Կարամազով եղբայրներ, Սովետական գրող, 1963թ.:
8. Տեր Մատթեոս Արքեպիսկոպոս Իզմիռլյան, Բարի մարդ և բարի քրիստոնեա, Կ. Պոլիս, 1856թ:

### Օտարալեզու գրականություն

1. Ժ. ը. ԾՈՍՈՐՐՈռ պտոնրՍՍտ ԹՈՎՈՓՍՈռ,ԿՐՈՉՏԻՍՈՉՎՏ-ԺՏՀՎՈՑՈՒՖԱՐՍՍԱ ըՏՀՏԻՍՏՉՈՒԱ ՉՏՎ I (ՎՏՉՏԱ ՌԶՊՈՎՈՒԱ) հՈՎՍՑ կաՑաՐոցՐՀ, 1856Հ.
2. հՉՑՈՑԱՍՖ թՐՈՂՏՐՈռ ծՈՐՐՍՈռ, ԹՏՐՑՏՖՎՕԱ ՏՑՓՕ Ռ ցՖՈՑԱՍ՝ ՓԱՐՍՉՈՒ IV ՉԱՍՈ, ԾՏՐՍՉՈ, ԾՕՐԱՖ, 1999Հ. ՉՏՎ II.
3. ԸՐԼՈՒԱՊՏՈՐՍՍտ խցՍՈ ԹՏՈՎՏ-շրպվպՓՍՈռ, ԺցԼ, ԺցՔՈ Ռ ՉԱՍՏ, խպվՈՎՀՐՈՊ, 1998Հ.
4. ԼՐՈՎՈ Թ. հՈՍց՝ՎՏՉՈ, ԼրՍցՔպվՈԱ “ՍսՎՈՐՏՉՈՎՈՎԱՎ” ՌսՈ ճպսՉպՍ ՍՈՍ տՏՊՏՈՒԱ ՖպսՉպՍՈ, նՑՈՒՖԱՐՍՈԱ տՐՏՈԱՎՕ



ըՏՉՐպՎպվվՏն չպվպՑՈՍՈ, ԾՏըՍՏՉըՍՏպ կՏՊՉՏՐՖպ հՉՑՏ-  
ՉՐՏՈՓՍՏն հպրչնպՉՏն խՈՉՐօ, 1998չ.

5. ԾՈՑՐՏտՏսսսՈՑ ԸվՑՏվնո հցՐՏՁըՍՈն, ԻՈջվՖ. ըՏսպջվՖ. հՎպՐՑՖ.  
չ. հպրչնպՉ կՏըՈՊ 2000չ.
6. նՐՈւ ՂՐՏՎՎ, ԼՎպՑՖ ՌսՈ ոօՑՖ, ԾՈվրՍ, 1997չ.

#### Ամսագրեր

1. «Էջմիածին», 2000թ. N 7:
2. “ԿրվՏՉօ ըՏՓՈՆսՖվՏն ՍՏվՓպտՓՈՈ”, 2  
ԼվՒՏՐՎՈՓՈՏվվՏՎ ը՛սսպՑպվպ ՉցըրՍՏն կՐՈՉՏըսՈՉվՏն  
ճպրՍՉՈ, ԿՑՊպս ՉվպթվՈւ ՓպրՍՏՉվօւ ըՉջպը ԾՏըՍՏՉըՍՏչՏ  
կՈՑՐՈՐԼՈՑՈ, N 8, ԸՉչցըՑ, 2000չ.
3. “ԺՈցՍՈ Ռ ՋՈջվՖ”, N 5. 2001 չ.
4. “ԺՈցՍՈ Ռ ՋՈջվՖ”, N 8.2001չ.
5. “ՉցըրՍՈն ՊՏՎ”, N 12. 2001չ.
6. “ԺՈցՍՈ Ռ ՐպսՈչն”, N 12. 1998չ.
7. “ԻՊՏՐՏՉՖպ”, N 1. 1992չ.

#### Պարբերական մամուլ, ինտերնետային ցանց

- 1/ “ԼջՉպրՑՈ” 27.11.2001չ. N 219.
- 2/ «Չայաստանի հանրապետություն», 27. նոյեմբերի 2001թ. N 219:  
1/ <http://www.BBC.com> / Science 20.06. 2001  
2/ <http://www.sciam.com/explorations/2001/112401ezzell/>
- 3/ [Gazeta. Ru](http://Gazeta.Ru) ՏՑ 24 - 03 - 1999 (ԹօսցըՍ No 017) Կրնչնվնս: [http://gazeta.ru/dossier/24 - 03 - 1999\\_clon.htm](http://gazeta.ru/dossier/24 - 03 - 1999_clon.htm)
- 4/ ԾՏըՍՏՉըՍՈն կՈՑՐՈՐԼՈՑ ճժՉԽԿԹԺԿ-ԿըմժԻՉԹժժժյԼ հԿԹժՉ  
կԿ ըԼԿԾժԺԼԵԼժիԽԿԿ ԸՉԼԽԺ  
<http://dailynews.yahoo.com>

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	2
Ա. Գիտության և կրոնի փոխհարաբերությունը.....	6
Բ. Բիոէթիկայի էությունն ու խնդիրները .....	13
Համամարդկային հանրությանը հուզող խնդիրներն այսօր.....	15
Կլոնավորում.....	
19	
<b>Գ. Կլոնավորման կենսաբանական նշանակությունը և դերը ժամանակակից կենսաբանական և բժշկական խնդիրների լուծման համար</b>	
(Նրա բարոյաէթիկական կողմը).....	
25	
Մարդու գենոմը .....	
25	
Ջարգացող բժշկական գիտությունների հնարավոր օգտակարությունը.....	
28	
Բնային բջիջներ	
.....	30
Ստրոմալ բջիջները մասնակցում են վնասված հյուսվածքների վերականգնմանը .....	
30	
Ողնուղեղի ստրոմալ բջիջներից կարելի է ցանկացած այլ բջիջներ աճեցնել.....	
31	
Ստրոմալ բջիջների աղբյուրները վերականգնողական թերապիայի համար.....	31
Ի՞նչ է կլոնավորումը գիտության տեսակետից .....	
33	

<b>Դ. Հոգու գոյության մասին գիտաստվածաբանական վկայություն.....</b>	<b>36</b>
<b>Յուրաքանչյուր մարդ անկրկնելի անհատականություն է .....</b>	<b>36</b>
Մարդն Աստծո կողմից արարված Աստվածապատկեր հոգեղեն էլ է .....	39
Աստծո պատկերն ու նմանությունը .....	46
Թե ինչպե՞ս կամ ինչ եղանակով է զարգանում մարդկային հոգին.....	48
<b>Ե. Կլոնավորման բարոյաէթիկական-կրոնական վերլուծություն .....</b>	<b>51</b>
Կենսաբանական գիտությունների զարգացմանը զուգընթաց ծագող բարոյական խնդիրները .....	51
Փորձեր մարդկային սաղմի վրա, Պտղի օրգանների ու հյուսվածքների օգտագործումը .....	52
Մարդու վրա փորձեր կատարելու անհրաժեշտությունն ու դրա էթիկական հետևանքները .....	53
Թույլատրելի՞ է արդյոք այն ամենը, ինչ հնարավոր է .....	54
Եկեղեցու իրականացնելիք առաքելությունն այդ հիմնախնդիրների ուղղությամբ .....	64
<b>Զ. Ամփոփիչ եզրակացություն .....</b>	<b>69</b>
<b>Հավելված,</b>	

Աշխարհի դիրքորոշումն ու Եկեղեցիների տեսակետները կլոնավորման և  
կենսաբանատիկական այլ խնդիրների մասին,  
Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու տեսակետն առողջության և  
կենսատիկայի մասին, որպես բարոյական  
խնդիրների.....76

Կաթոլիկ եկեղեցու հայտարարությունը կլոնավորման ուղղությամբ  
կատարվող փորձերի մասին  
.....77

Մոսկվայի պատրիարքության հայտարարությունը «Մարդու  
կլոնավորման էթիկական անթույլատրելիության մասին»  
.....79

Ամերիկայի ուղղափառ եկեղեցու հայտարարությունը կլոնավորման  
տեխնոլոգիայի մեջ ժամանակակից գործընթացների  
մասին.....82

Պաշտոնական տարբեր հայտարարություններ կլոնավորման մասին  
.....84

**Օգտագործված տերմինների այբբենական  
ցանկ.....88**

**Օգտագործված գրականության ցանկ  
.....89**